ՈՒՍՈՒՄՆ

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒԻ

ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

ԵՐԿՐՈՐԴ ԵՒ ԵՐՐՈՐԴ ՏԱՐՈՒԱՑ

ՅՈՐԻՆԵՑ Դ. ԱՂԱՑԵԱՆՑ

ԱՌԱՋԻՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ԹԻՖԼԻՍ

ՏՊԱՐԱՆ Մ. Վ.ԱՐԴԱՆԵԱՆՑԻ ԵՒ ԸՆԿ.

1883

Дозволено цензурою. Тифлисъ, 29-го Декабря, 1882 года.

Типографія М. Вартаняна и К-°, на Троиц. пер. д. № 11.

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

Մեզանում ամէն մի դասագրքի յօրինող իր գրքի յառաջաբանի մէջ սկսում է մի առ մի թուել նորա լաւ կողմերը և առաւելութիւնը նորա նմաններից։ Թող ներուի ուրեմն ինձ, որ ես էլ ասեմ, թէ այս աշխատութիւնը զանազանվում է իր նախորդներից նրանով, որ բովանդակում է իւր մէջ ազգային կեանքի մանկանց մատչելի կողմերը Հայացի բարբառով և զարձուածներով, մինչ դեռ միւսներում պակաս է հէնց այդ երկու գլխաւոր բանը—բուն ազգային լեզուն և նրա կեանքը։

Միւս ասելիքներս պահում եմ երրորդ գրքում ասելու։ Երբ մատաւորապէս լրացրած կը լինիմ ընթերցարաններիս ամբողջութիւնը և իրական ապացոյց կունենամ ասածիս համար։ Առաւած ապ միայն, որ մերոնք լաւը վատից, սղտակարը վնասակարից զանազանել իմանան։ որպէս զի լաւերն աւելի լաւանան և իրանցից աւելի լաւերը դուրս գան։

ԵՐԿԻՆՔԻՆ ՈՒ ԳԵՏԻՆՔԻՆ

Երկինքը գետնքին ասեց.—Ես մեծ եմ քեզանից։
Գետինքն ասեց.—Այդ ինձ համար լաւ է։
Երկինքն ասեց.—Ինչով.
Գետինքն ասեց.—Նրանով՝ որ դու ինձ կը պահես, և ոչ թէ ես քեզ։
Երկինքն ասեց.—Վայ թէ դու ինձ հնազանդ չլինիս։
Գետինքն ասեց.—Վայ թէ դու էլ ինձ չպահես։
Երկինքն ասեց.—Եկ պայման դնենք։
Գետինքն ասեց.—Լաւ։
Երկինքն ասեց.—

Արև կանեմ՝ լոյս կը տաս,
Անձրև կանեմ՝ ջուր կը տաս.
Դու աշխատիր, ես յաջողեմ,
Դու պտուղ տուր, ես հասցնեմ.
Թէ չպահես այս պայմանը,
Իմ՝ կայծակն է՝ քո ջանը։

ԳՈՅՆԵՐ

Մենք աչքով չենք տեսնում ոգին ու անոգին, կոշտն ու կակուղը, վարդահոտն ու խնկահոտը, սոխակի անուշ ծլվլոցը և ագռավի խռպոտ կռկռոցը։

Բայց տեսնում ենք, որ ոգն սպիտակ է, վարդը կարմիր, խունկը դեղին, սոխակը մոխրագույն, ագռավը սև։

Ուրեմն մենք տեսնում ենք առարկաների գույնը, որ լինում է—սև, սպիտակ, կանաչ, կարմիր, կապույտ, դեղին, շէկ, մոխրագույն, նռնշուն, պուտպուտ, պուտպուտուրիկ (խայտ-խայտ, խայտուտիկ, խայտաբղետ, խայտախաբիս)։

ԽՆԴԻՐՆԵՐ

1. Ի՞նչ գույներ են երևում ծիածանի մէջ։

2. Ի՞նչ առարկաներ գիտէք—սպիտակ՝ ինչպէս մածունը, բրինձը, ագը, արծաթը։—Սև՝ ինչպէս մուրը, ածուխը, հատած մոշը, ագռավի փետուրը։—Կարմիր՝ ինչպէս արիւնը, հունը, դինին, նռան հատիկները, ձմերուկի մէջը։ (Այսպէս և մնաց գույները—կապույտ, դեղին, կանաչ)

ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ

ԿԱՉԱՂԱԿ

Հաւ մի կար սև ու սպիտակ,
Կելնէր ի ծառ, կիջնէր ի տակ։

—

ՁԻՒՆ

Փաթիլ փաթիլ վայր թափուեց,
Բոլոր աշխարհք սպիտակեց։

—

ՄՈՇ, ՄՈՐ

Սպիտակ հինեմ, կանաչ թել տամ,
Կարմիր գործեմ, սև կտրեմ։

—

ՍԱՌՈՑՑ

Սպիտակ քար եմ, բայց քար չեմ,
Արև անի, կը հալչեմ։

—

ԱՂ

Սպիտակ քար եմ սարումը,
Հիմա բացված սուփրումը,
Իմ անունը չգիտէ,
Ով համ չունի բերնումը։

ԱՌԱԾՆԵՐ

Քանց պուտը կարմիր չը կայ, որ ճկեա՝ սիրտը սեւ է։—Սեւ սիրտ, սիպտակ առամ։—Սեւ թռչունս խեւին խրատն ի՞նչ անէ։—Կարմիր ձուն զատկին կը սազի։—Մազը սիպտակել է, խելքը նոր է կանաչում։

ԿԱՆԱՉ—ԿԱՐՄԻՐ.

Կանաչ-կարմիրն՝ իմ ախպօր,
Սեւն ու սիպտակը՝ թուրքին։

***

Թուրքի աչքը սիպտակի,
Որ ծէս չունի պսակի.
Իմ ախպէրը մեծանալ,
Կանաչ կարմիրը կապի.
Կանաչ—կարմիրն՝ իմ ախպօր,
Սեւն ու սիպտակը՝ թուրքին։

ՀԵՒ ԵՒ ԿԱՆՉՈՒՆՔ

Արդեօք միանման՞ են—գաշտն ու սարը, այծն ու ոչխարը, կատուն ու շունը, ձուկն ու թռչունը, ոզան ու աղջիկը, մուկն ու չղջիկը։

Ոչ միանման չեն, այլ զանազանվում են միմեանցից իրանց ձեւովն ու կազմուածքովը։

Նայում ես ծառի վրայ, տեսնում ես, որ նրա բունը նման չէ արմատին, արմատը նման չէ ճղներին, ճղները նման չեն տերևներին, տերևները նման չեն ծաղիկներին, ծաղիկները նման չեն պտուղներին։

Ծառի այդ մասերը միմեանցից զանազանվում են իրանց ձեւովն ու կազմուածքովը։

Հեռու չրգնանք, հէնց մեզ վերայ նայենք։ Մենակ մեր դէմքի վերայ ինչքա՞ն մէկ մէկու նման բաներ կան։ Ուրիշ ձեւունի ականջը, ուրիշ՝ աչքը, քիթը, բերանը, լեզուն, ճակատը, կզակը, ոյտերը։

Գլուխն ուրիշ ձև ունի, ձեռքերն ուրիշ, ոտներն ուրիշ, մատներն ուրիշ։

Մինչև անգամ կարող ենք ասել, թէ մեր մի ականջն ուրիշ ձև ունի, միւսն ուրիշ, որովհետև մենք կարող ենք զանազանել մի ականջը միւսից, մի ձեռքը միւսից, մի ոտքը միւսից.—կարող ենք իմանալ, թէ ներսից որն է աջինը և որը ձախինը։

Իսկ այդ կիմանանք մենք ներսից ձեւից ու կազմուածքից։

ԽՆԴԻՐՆԵՐ

(Լուծումն մօտաւորապէս ճիշտ)

1. Ի՞նչ բաներ գիտէք՝ թէ մանր և թէ խոշոր, թէ մեծ և թէ փոքր, թէ արուեստական և թէ բնական որ կլոր լինին ինչպէս խմորի գունդը, շորը, սիսեռը, կատուի գլուխը, նռան հատիկը։

2. Օրինակներով ասացէք՝ ի՞նչ կրնչանակեն—գնդաձև, գլանաձև, կոնաձև, գմբէթաձև, կամարաձև, ատդաձև, ձկնաձև, խաչակապ, ցանցատեսակ։

կեռումեռ, թեք, ուղղահայեաց, եռանկիւնի, քառակուսի, խորանարդ, հատուածակողմ։

3. Հետեւեալ առարկաները մօտաւորապէս ինչ ձև ունին։ Օրինակ հունը գլանաձև է, շաքարի գլուխը կոնաձև, սրածայր տերեւը եռանկիւնի, գրատախտակը քառանկիւնի. ինչ ձև ունին ալրեմն—նուռը, ձմերուկը, գազարը, բոզկը, թելի ոսոր, կծիկը, կատուի ականջը, գարին, բրինձը, ունքերը, աչքերը, մատները, ջրհորը, ծխամանը, սիւները, պատերը, յատակը, առաստաղը...

ԱՌԱԾՆԵՐ

Ուզտին ասեցին՝ շինիր. ինչի՞ է ծուռ. ասեց՝ ի՞նչս է շիտակ, որ շինիս շիտակ լինի։—Դգումը գլխի նման է, բայց մէջին խելք չը կայ։—Ամեն կլոր խնձոր չէ, ամեն տակառ գաղար չէ։—Էշն ի՞նչ գիտէ, մոշն ի՞նչ է։—Երեխան ի՞նչ գիտէ՝ ձէթը սրբն է, լորտուկը սրբ։

ԱՇԸՂԻ ՕՐՉՆԱՆՔ

Օրհնուի չորեք անկիւնի տունս—
Խեցեղէնն ու պղնձեղէնը,
Փայտեղէնն ու երկաթեղէնը,
Բրդեղէնն ու կաշուեղէնը,

Մեռաքսեղէնն ու բամբակեղէնը,
Թուրքառն ու մկնառը,
Ուլն ու գառը,
Կուժն ու կարասը,
Սուրահին ու թասը,
Եղամանն ու ձիթամանը,
Թանամանն ու պանրամանը,
Թթխմորն ու խաշը,
Բոքոնն ու լաւաշը,
Օրահն ու տունը,
Ղալն ու հաւի բունը,
Քօշկն ու օթագը,
Թանիրն ու օջագը,
Մաղազէն ու մառանը,
Տօլաբն ու դարանը,
Խնջոյքն ու սեղանը,
Գաւաթն ու քրեղանը,
Հանդն ու հանդաստանը,
Արօտն ու այգեստանը,
Գոմն ու մարաքը,
Մածունն ու կարագը,
Բղուղն ու տուճը,
Պղինձն ու կճուճը,
Տաշտն ու մաղը,
Պղպեղն ու աղը.
Վարն ու վաստակը,
Գլուխն ու տակը,
Ուզտն ու ջորին,
Դարմանն ու գարին,
Կալն ու ջաղացը,

Ցորենն ու հացը,
Փայտն ու ցանը,
Ամբարն ու հնձանը,
Հորթն ու կովը,
Ագռիւրն ու նովը,
Հողն ու քարը,
Այծն ու ոչխարը,
Գուռն ու բակը,
Հիմն ու յատակը։
Ձին ու էշը,
Եզն ու գոմէշը,
Գառնարածն ու հորթարածը,
Տաւարածն ու խոզարածը,
Հովիւն ու այգեպանը,
Մաճկալն ու գութանը։
Օրհնի ու պահպանի
Մեն միակ Աստուածը,
Երկու՝ երկինք գետինքը,
Երեք՝ Երրորդութիւնը,
Չորս գլուխ Աւետարանը,
Հինգ Նաւակատիքը,
Վեցթեւեան սերովբէքը,
Եօթնանուն սուրբ Կարապետը,
Ութ կանոն Սաղմոսը,
Ինը գաս հրեշտակը,
Տասը պատգամքը,
Տասներկու առաքեալք,
Քսանըչորս մարգարէք,
Երեքհարիւր տասնուվթ հայրապետք։
Ամէն։

ԻՆՉՆ ԻՆՉ Է

Մէկ անգամ Օնիկը ուսումնարանից գնաց տուն թէ չէ՝ վազեց խոհանոցը՝ մօրը մօտ եւ ասաց.

—Մայրիկ, այսօր վարժապետն ասեց, թէ ձեր տանը, խոհանոցումը, ներքնատանը, փերնատանը, մառանումը, պարապզումը ինչ առարկաներ որ կան, պիտի ամենի անունը գիտենաք եւ պիտի ինձ ասէք, թէ ինչն ինչ է։

—Ես չեմ հասկանում թէ դու ինչ ես ասում Օնիկ, պատասխանեց մայրը. մի՞թէ դու չը գիտես ինչ կայ, ինչ չը կայ մեր տանն ու դռանը։

—Ի՞նչպէս չը գիտեմ մայրիկ, բայց ուսումնարանումը ուրիշ տեսակ են հարցնում այնպէս որ՝ եթէ քեզ էլ հարցնեն, դու էլ չես իմանար։ Ապա դու գիտե՞ս մայրիկ ինչ է ծառը։

—Ինչպէս չը գիտեմ որդի, ծառերով լիքը չէ՞ մեր պարտէզը։

—Տեսա՞ր մայրիկ, չիմացար։ Ծառը՝ ծառ չէ։

—Հապա ինչ է, որ ծառ չէ։

—Ծառը մայրիկ բոյս է։ Իսկ կոճին գիտե՞ս ինչ է։

—Ի՞նչ պիտի լինի, ոսկոռ է։

—Այդպէս չէ մայրիկ։

—Հապա ի՞նչ է.

—Խազալիք է։

—Դու սխալ ես հասկացել Օնիկ ջան։ Մի՞թէ կոճին որ խաղալիք է, բայց էլի ոսկոռ չէ՞։ Կամ

ծառը որ բոյս է, բայց էլի ծառ չէ։

—Ի՞նչպէս, մայրիկ...

—Ի հարկէ, որդի։ Հիմա մարդը որ կենդանի է, ձին էլ է կենդանի, բայց էլի մարդը մարդ չէ՞ եւ ձին էլի ձի։

—Մայրիկ բա էլ ինչն են ասում։—կովը կենդանի է. ծառը բոյս է. հացն ուտելիք է. կօշիկը հագնելիք է։

—Նարա համար են այդպէս ասում, որ դուք չը-կարծէք, թէ կովը ծառի պէս բանում է, իսկ ծառը՝ չորքոտանի է. որ չրկարծէք, թէ կօշիկն ուտում են, իսկ հացը հագնում։

—Բայց մի՞թէ այնչափ չիմար երեխէք կան, մայրիկ, որ այդպէս կարծեն։

—Չիմար երեխէք չը կան, հոգիս, բայց ինչքան էլ խելք լինին, էլի շատ բան չեն իմանալ թէ ինչ է։ Օրինակ, եթէ ես քեզ ասեմ՝ «կոզակն ինչ է», դու չես իմանալ. յետոյ ես քեզ կասեմ՝ կոզակը ձուկն է, դու էլ կիմանաս, թէ կոզակն ինչ է։ Դէ հիմա դու ինձ ասա տեսնեմ՝ կաչաղակն ի՞նչ է։

—Զրգիտեմ մայրիկ։

—Կաչաղակը թռչուն է։ Դէ հիմա ասա տեսնեմ կաչաղակն ի՞նչ է։

—Ես հիմա գիտեմ մայրիկ։ Կաչաղակը թռչուն է։

—Դէ հիմա ասա տեսնեմ կրակն ի՞նչ է։

—Մայրիկ ես գիտեմ կրակն ինչ է։ այնա կրակ, բայց ի՞նչ պիտի ասեմ հիմա։

—Կրակն էլ կրակ է, ա բի՞նչ պիտի լինի

—Ա՛յ մայրիկ, ես հիմա գիտեմ ինչ կասեմ։

—Ի՞նչ կասես։

—Կրակը... սպասիր։ Ջուրը խմելիք չէ՞, ուրեմն կրակն էլ տաքանալիք է։

—Հէ՛, հոգիս, այդպէս չի ասուիր։ Այդպէս որ լինի՝ դու ամէն բանի համար մի նոր բան կը հնարես թեզանիդ։ Աքա ասա, արեգակն ի՞նչ է։ լուսինն ի՞նչ է։ երկինքն ի՞նչ է։ օդն ի՞նչ է։ Այդպէս բաները դու հիմա չես իմանալ։ բայց որ ասեն՝ Ոնիկն ի՞նչ է։ կարող ես ասել՝ Ոնիկը մարդ է։

—Ա՛յ, մայրիկ։ ես մարդ չեմ։

—Հապա ի՞նչ ես։

—Ես երեխայ եմ։

—Դնաս չունիս։ հոգիս։ դու հիմա փոքր մարդ ես։ բայց որ կը մեծանաս։ մեծ մարդ կը դառնաս։ ու այն ժամանակ քու կիմանաս թէ ինչն ինչ է։

ՎԻՃԱԿԻ ԵՐԳԵՐ

Գարնան տակը քարտ է,
Գարնի հիանց արօտ է,
Ուղիղ եօթը տարի է,
Գայլը եղջիր կարօտ է։

* * *

Դու նստել ես գոշակին,
Ուշք ու միտքդ փէշակին,
Խմել ես նռան գինին,
Հոտ կուտես մանուշակին։

* * *

Արևը կամար կտրեց,
Կապել ես ոսկի քամար,
Ցիսուն օր պատ եմ պահել
Իմ եղբօր ճանապի համար։

* * *

Սարի խոտը ծիղուէծեղ,
Եղբայր, հրթանք միասեղ,
Որ հալամին վրայ տայ,
Գլուխս տամ գլխիդ տեղ։

* * *

Սարէն կը գայ հիաւոր,
Մեր առնը չարդահատոր,
Հրէս եկաւ իմ եղբայր,
Երեք օրուան թագաւոր։

* * *

Իմ եղբայրը սարումն է,
Շուին գօտկածալումն է,
Եղբայր ջան, շուտիդ ածա,
Գայլդ Լուսայ քարումն է։

* * *

Եղբայրս ծառի տակին,
Սաղմոսը կուտան տակին,
Սաղմոսն անգիր է արել,
Լեզուն բիլբիլ է դառել։

ՁԱՅՆԵՐ

Ինչպէս որ տեսակ տեսակ գոյներ ու ձեւեր կան, նոյնպէս կան և տեսակ տեսակ ձայներ։

Մութ գիշերին մի ձայն ականջներիս դիպչելիս՝ մենք իմանում ենք թէ ինչ ձայն է. արդեօք ապլի գրգռո՞ց է, թէ՞ հրացանի ձայնի՞ն. մա՞րդ անց կացաւ թմբիթմբիալո՞վ, թէ՞ ձի անցաւ սեղսընդալով. քամին վզվզո՞ց, թէ՞ ամպը գոռաց։

Ամբ առաւօտ չէկայ, բոլորն էլ ձայն են հանում— որը բարակ, որը հաստ, որը քաղցր, որը անհամ, որը բարձր, որը ցածր, որը մաքուր, որը խռպոտ, որը ինքն իրանից և որը մի ուրիշի դիպչելուց։

Ահում ենք—գեաղ վշշում է, ադրիւրը ըչքչում է, գլգլում է, խոխոջում է, քամին վզվզում է, կլոակը վռվռում է, ծիծեռնակը ճլվլում է, սոխակը երգում է (բիւլբիւլը խոսում է). ագռաւը կռաւում է, կաչաղակը չրիթչրիթացնում է, հաւը կրկչում է, աքեղաղը կանչում է, գամիշը արընգում

է, եզը բառանչում է, ձին խրխնջում է, էշը խառանչում է, ոչխարը մայում է, այծը մկրկում է, կատուն մլաւում է, շունը հաչում է...

***

Մի կենդանին միայն մի տեսակ չէ ձայն հանում, այլ մի քանի տեսակ։

Հաւը ձու ածելուց առաջ կրկռում է, ածելուց յետոյ՝ կրկչում։ Երբ որ ուզում է թուխս նստել, կրթկրթում է։ Ուրիշ տեսակ է ձայն հանում, երբ որ փախչում է կամ թռչնամուց և կամ բռնուելուց, և ուրիշ տեսակ, երբ որ ձագերը ժողովում, ձուաբ է անում, կամ մի բան է գտնում և կանչում է ձագերին։

Շունը նմանապէս շատ տեսակ է ձայն հանում։ Նա ոչ միայն հաչում է, այլ և օռնում է, ոռնում է, ոռնձկռնձում է, կռանչում է, մռմռում է։ Ոչն իսկ հաչելն էլ տեսակ տեսակ է։ Նա գողի վերայ ուրիշ տեսակ է հաչում, գայլի վերայ՝ ուրիշ, մարդու վերայ ուրիշ տեսակ է հաչում, շան վերայ՝ ուրիշ։ Ուրիշ տեսակ է հաչում որ-

սի եռեից վազելիս, և ուրիշ, երբ որ նրբան մի տեղ կանգնեցնում է և ազատում է որսորդին։

Սովոր ականջը շատ հաչելու այդ նրբաբութիւնները շատ լաւ որոշում է միմեանցից։ Նրա հենց առում էլ են—մարդաձայն, շնաձայն, գայլաձայն, գոգաձայն, ոռոհաձայն, օրուշի (երբ զոր տեղը կամ լուանի վրայ է հաչում)։

Բայց սեռակ սեռակ են ձայն հանում և բոլոր միւս կենդանիները։ Կովը, եզը բառանչում են, բայց երբ որ մի տեղ արիւն են տեսնում թափուած, և կամ գազանի ճանկ են ընկնում, ոչ թէ բառանչում են, այլ բղղում, գոռում, գոռգոռում են։ Բայց ձայնը այնքան որոշվում է բառանչելուց, որ ոչ միայն տաւարածներն են իմանում, այլ և միւս բոլոր տաւարները, գոմէշները, շները, և իսկոյն ամենքն էլ օգնութեան են հասնում։

* * *

Ձայնի կողմից մարդն ամենից հարուստն է։ Դեռ ոչ ոք չի հաշուել, թէ

ոյս և այն կենդանին քանի ձև է տալիս իւր ձայնին, և եթէ հաշուելու էլ լինին, ամենաշատ սեռակը քսանից, կամ շա՛տ, շա՛տ երեսունից վեր չի անցնիլ. բայց մարդը հազարաւոր բառեր ունի, և քանի՛ քանի՛ և-պանակով էլ երգում է։ Քանի ձևով որ մի որ և իցէ կենդանի ձայն է հանում, այնքան թւով մարդը միայն ծիծաղել կարող է։

Միայն մարդն է, որ ծիծաղում է, լաց է լինում և կարողանում է իւր ամեն զգացածը որոշ որոշ ձայներով և լիակատար մտքով արտայայտել։

ԱՌԱՋԻՆ ԵՐ

Նոր հաւերին ջու—ջու, ջու—ջու,
Հին հաւերին քշա՛, քշա՛։

* * *

Թէ մեր եղն ես, հո՛—հո՛, հո՛—հո՛,
Թէ որ արջ ես, օհ—օ՛հ, օհ—օհ...

ՀԵՇՏ ՀԱՆԵԼՈՒԿ

Ամ թռչունները են երգելիս
Իրանց անունը տալիս

ԵՐԿՈՒ ԴՈՐՏ

—Քե՞ռին մէռռէլ ա,
Քե՞ռին մէռռէլ ա։
«Ե՞ռփ, ե՞ռփ, ե՞ռփ.
—Մէկէկէլ օռը,
Մէկէկէլ օռը։
«Վը՞ժժ... վը՞ժժ.
Ղ՞ռդ, ղ՞ռդ, ղ՞ռդ։

ԷՇ ԵՒ ՍՈՍԽԱԿ

Զէռ Էշը մէկ Սոխակ տեսաւ,
—Մէկ ի՞նչ նայիր, նորան ասաւ.
Ասում են՝ գուռ լաւ ես երգում,
Բայց չըգիտեմ՝ ո՞րպէս են ասում։
Ես ականջներս ունիմ լայն լայն,
Լաւ եմ լսում ամեն մի ձայն.
Բայց քո ձայնը ես չեմ լսած,
Թէև լսել շատ եմ ուզած։
Այս լաւ եղաւ, որ քեզ գտայ,
Դէ մէկ երգի՛ր, մէկ բլբլա՛,
Տեսնեմ ուզիղ լա՞ւ ես երգում,
Թէ՞ ի զուր են այնքան գովում։
Անմեղ Սոխակը նազ չարաւ,
Սիրուն կտուցը բաց արաւ.
Ուզեց ցոյց տալ աւանակին,

Որ զուր չեն գովում սոխակին։
Ձայնը լարեց և սկսեց.
Սոխակի ձայն...ինչեր չասեց.
Մէկ խօսում էր ու մէկ երգում,
Հազար խաղով խաղացնում.
Մէկ դալլալում, դլդլցնում,
Մէկ գեղգեղում, կլկլցնում։
Այնպէս շվվում, սրնգում էր,
Որ սար ու ձոր զմայլում էր.
Լեռ. քարերն էլ դարձրին ուշ,
Այնքան քաղցր էր, այնքան անուշ։
Ամեն մի շունչ և արարած
Լսում էր լուռ, ապուշ կտրած։
Ջամին կտրեց իր վզոցը,
Աղբիւրն իրան քչքչացը.
Ոչ մի տերև չէր սլսլում,
Ոչ մի թռչուն չէր ծլվլում.
Տաւարներն էլ չարածեցին,
Այլ նատեցան, ականջ դրին,
Տաւարածն էլ շունչը քաշած,
Սոխակին էր լսում ապշած.
Անմեղ ժպիտը բերանին.
Ձեռքով էր անում ընկերին։
Վերջապէս Սոխակը լռեց,
Իշի վճռին ականջ դրեց.
Երկարականջ գոգռանը
Այսպէս կտրեց դատաստանը.
—Է՞հ, ի՞նչ ասեմ, վատ չես երգում,
Լաւ ես շվվում, կլկլացնում,
Բայց ես շատ եմ ափսոսում քեզ,

Որ չես երգում աքլաքի պէս.
Եթէ մեր աքլաքին պեսնես,
Եւ նրանից էլ դաս առնես,
Այնուհետև նրա նման
Դու կը երգես շատ պնդման։
Այս վճիռը երբ որ լսեց,
Մեր Սախակը նոր աչք բացեց.
Նա նոր տեսաւ, որ իւր գիմաց
Մի զնապլուխ էշ է կանգնած,
Թևին խփեց խոկոն թռաւ,
Իշի ձեռքից ազատուեցաւ։

ԹՈՒԹԱԿՆ ԵՒ ՍՈԽԱԿԸ

Մի թութակ տան մէջ այնքան ճղղաց, շվշըփաց, որ տանուտէրը տանից դուրս տանել տուաւ նրան։

Թութակի ինքնասիրութեանը դիպաւ այս բանը, եւ նա ասեց գանգատուել սոխակին, որ եկել էր նրան տեսնելու։

— Աչքիս լոյս, ասաց թութակը սոխակին, ես լսել եմ, որ դու լաւ վարպետ ես երաժշտութեան մէջ. խնդրեմ լսես իմ երգերը եւ ասես ինձ, թէ ինչ պակասութիւն կայ նրանց մէջ, որ իմ ականջը չեն գուր գալիս։ Նա շատ սիրով լսում է արտուտին ու ծիծեռնակին, որոնց երգածը միան ծվծվոցի է նման, բայց հէնց որ ես եմ երգում եւ իմ բոլոր ճարտա-

րութիւնը ցոյց տալիս, իսկոյն հրամայում է, որ ինձ հեռացնեն։

Նատ լաւ, ասաց սոխակը, երգիր, տեսնեմ ինչպէս ես երգում։ Ես ուրախութեամբ կլսեմ քեզ պէս սիրուն թռչունի երգը։

Թութակն սկսեց իր բոլոր ճարտարութիւնը թափել։—Հալի պէս կրկչաց, շան պէս հաչեց, կատուի պէս մլաւեց, մի խօսքով կրկնեց իր բերան արած բոլոր բառերն ու երգերը։

— Այժմ, սիրելիս, պապց նա սոխակին, խնդրեմ ասես, դու լսած կա՞ մի այսպիսի բան երբ եւ իցէ։

— Սիրուն թութակ, պատասխանեց սոխակը. դու ինձ կընեիս՞, եթէ ես քեզ մի համեստ նկատողութիւն անեմ։ Դու երգում ես ուրիշների նման, ուրիշների ձայնով, ուրիշի երգերն ես երգում։ Եթէ դու աւնենաս քո սեփական երգը, էլ քեզ տանից դուրս չեն անիլ։

ՀՈՎԻՒ

Ծառի հովանին, տերև շերշիւն,
Տխուր ողբերգակ ազբիւրի շաչիւն,
Հաճելի գիրքը զմրուխտ կանաչով,
Մի սքանչելի գեղեցկութիւնով
Միշտ ասում են քեզ.—Ով դու անցաւոր,
Ով ինքնահաւան դու ճանապարհորդ,
Ինչու չես գալիս այս հաղարաւոր
Բարութեան լինում մասնակից, կցորդ։

Եւ ահա հովտից մի քաղցր քամի
Բերում է իր հետ անշշան ձայներ։
Լա՛ւ ականջ դիր դու... Այն խաշնարածի
Սրնգի երգն է։ Եկել է գիշեր.
Կանչում է գառներին հանդչիլ խաղերից,
Եւ պատսպարուիլ պատառող գայլից։

ԴԵՂՁԱՆԻԿՆ ՈՒ ՍՈԽԱԿԸ

Մէկ տան մէջ վանդակում կախած էին դեղձանիկն ու սոխակը եւ երգում էին։

Հէնց որ սոխակը երգում էր։ փոքրիկ որդին հօր առաջն էր գալիս եւ դեղձանիկին էր ցոյց տալիս։ թէ տե՛ս տե՛ս։ Հայրիկ։ ինչքա՞ն սիրուն է երգում։ Եւ ի՞նչ սիրուն փետուրներ ունի, ինչքան գեղեցիկ է։ Հէնց դորա համար է։ որ այնքան լաւ ձայն էլ ունի։

ԱՌԱԾՆԵՐ

Ծերի խելքը գլխումն է, իսկ երեխայինը՝ աչքումն։ —Միայն սոխակի գոյնն ունի։ բայց նորա շնորհքը չունի։—Դեղձանիկն էլ է լաւ երգում։ բայց սոխակին չի հասնիլ։

ԱՆՑՈՐԴՆԵՐՆ ՈՒ ՇՈՒՆԸ

Իրիկնադէմին մէկ լուռ փողոցով
Երկու մարդ իրար հետ զրոյց տալով
Անց էին կենում, տեսան որ յանկարծ
Դուռան շէմքի տակից մի շուն ծղրտաց,
Սկսեց մնգմնգալ,
Օռնալ, մնգտալ,
Մինչ որ փողոցը շներով լցուեցան
Եւ անցորդների գլուխը տարան։
Մէկը կռացաւ, մի քար վերցրեց,
Մէկէլը նորա ձեռքիցը բռնեց.
«Սիրելի, ասեց, տեղդ ճանր կաց,
Շան սոփորութիւնն է հաչել հանապազ.
Քարով աւելի նոքա կը կատղին,
Գլուխդ քաշ գցիր, գնանք մեր բանին։։
Իրաւ, մի քիչ տեղ հեռացան թէ չէ,
Էլ մի շուն չմնաց, որ կանգնի հաչէ։

ԱՌԱԾՆԵՐ

Շանը քանի քար գցես։ կը հաչի։—Շունն իրանց գռանը գոչող կրիւնի։—Շան կապարան մի՛ հաւատար։ Շունը շանից։ երկուսը մի տանից։—Շան պէս հաչելն էլ է մի արհեստ։

ԱԽՇԱԼ ԾԱՌԱՅ

Մէկ եպիսկոպոս մի անփորձ ծառայ ունէր։ Մէկ օր այդ եպիսկոպոսը բնեցիս ծառային պատուիրեց, որ գգաստ կենայ եւ նայէ որ ապմուկ չը լինի։

Մի փոքր ժամանակ որ անցաւ, ծառան լսեց, որ չաքիկ—չու խկ, չաքիկ—չու խկ, մի ձայն է գալիս սենեակից։

«Այս ինչ է, ասէր Աստուած, այս ինչ է—մտմտաց ծառան ինքն իրան եւ մնաց էկաւ որ պտնի որբաղանին անհանգիստ անողին։ Նա տեսաւ որ այդ նկմուկ անողը սենեակի պատից կախ արած ժամացոյցն է։

«Էշ, ձէնդզ», հրամայեց ծառան ժամացոյցին կամաց ձայնով։ բայց ժամացոյցը չլսեց նրան։

«Զէնդզ կլարիր, ասում եմ էշ», բարկացաւ ծառան։ Բայց ժամացոյցը շարունակեց իր չաքիկ ու չու խկը։

Զայրացաւ ուշկաց ոպատաւորը, պատից վայր բերաւ ժամացոյցը, մի քար վեր առաւ եւ տուր թէ կրատաւ ջարդ ու փշուր արաւ։

Այս անգամ ժամացոյցը ձայնը կտրեց, իսկ ծառան ուրախանալով ասաց.

«Ահա այդպէս կը հանեմ հոգիդ ու ոտս կը կայնեմ հա... դէ գնա հիմա, որտեղ քանն ասեմ, իմն էլ այնտեղ ասա»։

ԷՇ ԵՒ ԹԻՒԼԻԼԻ

Բացուել էր գարունը, սար ու ձոր ծաղկել,
Անոյշ հոտն ու հովը ամէն տեղ փռուել։
Ամէն աշխարհից, հեռու տեղերից
Նորեկ թռչուններն իրանց բոյներից
Եկան ողջունել գալուստը գարնան,
Մայր ու ձագ նոտած թռուփների վերան.
Պարկեշտ Բիւլբիւլն էլ իր սիրուն վարդի
Սէրն ու կարօտը բերան բերելով,
Խոր ձորում նոտած երգում էր լալով։
Նայում էր ջրին, իր վարդի թփին,
Սպասում էր որ բացուի սիրելին։
Սար ու ձոր նորա սուգն էին անում,
Ծառ ու թուփ, ծաղիկ նորա հետ ցաւում։
Բայց վարդն անիրաւ մնացել էր փակ,
Բիւլբիւլի սիրտը դարձել էր կրակ։

* * *

Այս դառն բոլէին սատանի քամին
Մրտեղից հանեց մեր կորած իշին,—
Խոտակն էր պակսել, թէ քունը հատել,
Դազան էր խռկել, թէ աչքը դնքսել,
Ականջները խլշած,
Սարնիվայր ընկած
Վազեց ու կեղտոտ դունչը վրայ բերեց
Անմեղ վարդի թուփն ու կոկոնը բռնեց.
Ըռէխը դցեց,
Լամլամեց, փշրեց։
«Ա՜խ, տեսնում էք այդ էշ աստնակին,

«Ինչ արաւ մեր խեղճ բիւլբիւլի վարդին».
Կանչեցին բոլոր թռչունները,
Եւ փոխան մտան իրանց բունները։
Սար ու ձոր իրանց աչքը փակեցին,
Ծաղիկներն իրանց երեսը ծածկեցին,
Խեղճ Բիւլբիւլն էլ որ այս բանը տեսաւ,
Մոտեցաւ վարդին, ողբալով ասաւ։
«Իմ անման վարդ, հոգոյս սիրելի,
Անուշդ չիշեցով՝ սիրաս խորովի,
Ինչու ծաղկեցիր այս երկրիս վերայ,
Ուր քո պատիւդ իմացող չկայ.
Երկինքն է տեղդ, ինչի՞ ես գաւառում
Իշի կերակուր այս փշոտ երկրում։
Քանի էշ ու փուշ երկրիս չին պակաս,
Դու մի՛շտ վիրաւոր, անտէր կը մնաս.
Կամ դու ինձ մէկ օր այրիր, ես պրծնեմ,
Կամ թև առ, թռչենք, երեսիդ մեռնեմ»։

* * *

Իմ սիրուն Բիւլբիւլ, մի այդքան ցաւիր,
Կաց մեր միջումը, քո վարդը գովիր.
Էշն ապրի մէջն է առել իր ծնունդ,
Նրա հոտոմն էլ առնում է անուշ,
Քեզ վարդ, մանուշակ, քեզ ծառ ու ծաղիկ
Տուել է Աստուած, Բիւլբիւլ գեղեցիկ։

ՇԱՐԺՈՒՄՈՒՆՔ

Աշխարհիս երեսին ոչ մի առարկայ չը-կայ, որ չբլթնի շարժուելիս։

Օդը անդադար վզվզում է դէպի ամեն կողմ,—վերս ու վայր, աջ ու ձախ։

Ջուրը հոսում է բարձրից դէպի ցածր։

Կրակը վազում է դէպի վեր։

Ընձրևը, ձիւնը, կարկուտը թափվում են վերևից։

Բոյսերը դուրս են գալիս հողի տակից, աճում, բարձրանում։ Հողի մէջ արմատներն են փռում, իսկ վերևը ճղներն են տարածում։ Ծաղկում են և պտուղ են տալիս։

Քարը գլորվում է, երբ որ մի գլորող-է լինում։

Կոկ տարի գլխից մի մեծ քար գլորեց և յետևիցը նայեց... Այդ տեսարանը շատ գեղեցիկ է։ Քարը քանի գնում, արագանում է, քանի գնում, ուժի բարձր ստիպներ է անում։ Այդ այս խոսքը շատ

վանգաւոր է։ Պէտք է սարի տակին մարդ, անտառն և ջէնք չրլնի։

***

Բարը շարժւում, գլորւում է, երբ մի շարժող, մի գլորող է լինում։

Բոլոր շարժւում է ոնգն ու ոնդը։

Այս կոմանէ կենդանիները ուրի բախտաւոր են, քան թռչ. բարերն ու բոյսերը։ Իսկ դրանց մէջ էլ ամենից բախտաւորը մարդն է

Բոլոր կենդանիները շարժւում են իրանց կամքով և շատ տեսակ շարժմունքներ ունին, բայց մարդն ամենից շատ շարժմունքներ ունի։

Բոլոր կենդանիները միասին առած այնքան շարժմունքներ չունին, որքան շարժմունք որ մարդուս միայն ձեռներն ունին։

Հրաշալի էակ է մարդը, և ուրի հրաշալի, եթէ լաւ կրթուած է։

***

Կենդանիների ամենասարդ շարժմունքը նրանց գնացքն է, մանն գալն է։

Հասարակ ձիճուն գնում է, օրակ օրակ, որբուելով։

Օձը, լորտուկը սողում ն կեռումեռ։

Գորտը ցատկում է, ցամաքումը և լողում է ջրումը։

Ձուկը լող է տալիս։

Թռչունը թռչում է օդի մէջ և մանն է գալիս գետնի երեսին կամ ցատկելով և կամ քայլելով։

Թռչուններից մի քանիսը շատ լաւ վազում են գետնի երեսին, ինչպէս հաւը, կապարը։

Աղրոտանիները քայլում են։

Մարդը նմանապէս քայլելով է մանն գալիս։

***

Աբեխան սկզբումը ձիճուի պէս կուշ ու մուշ է գալիս, գլորւում է, քիչ յետոյ սողում է, փորագ է տալիս. մի քիչ յետոյ չորեքոտն է տալիս, վերջը կանգնում է մարդու նման, գլուխը բարձրացնում, մանգալիս։

Բոլոր կենդանիները խաղում են, վազ-

վում են, ասասում են, ողջագում են, խոչկասում են։

Շատ կենդանիներ վատ են մեռնում գալիս, բայց լաւ են վազում։

Օձը կամաց գնալիս կեռումեռ և դանդաղ է սողում, բայց վազելի՞ս — Շատուտ՝ ոտատի — գլուխը բաւական բարձր բռնած՝ խոշում է նետի պէս։

Պոյլերի կենդանիները աւելի արագ են վազում քան թէ ասուտ կենդանիները։

ԽՆԴԻՐՆԵՐ

1. Համբերը չիսոսան հարանները ձեռքի ու գլխի շարժմունքով են հասկացնում իրանց միտքը։ Եթէ գիտէք, ասացէք, գլխով ինչպէս են ասում «հա», ձեռքով ինչպէս են ասում «չէ»։ Ինչպէս են կանչում, հայ ուզում, ջաղ ուզում։ Ինչպէս են ցոյց տալիս, թէ «բնած է», «երեսը լուանում է», «գլուխը սանդրում է»։ Այս սեռակ էլի ուրիշ ինչ շարժմունք գիտէք անխօսների և համբերի լեզուից։

2. Ցոյց տուէք, թէ ինչպէս են շարժում ձեռքերը — ուրագով ասելիս, կացնով փայտ կտրելիս, խոխրով խոխրելիս, բահով փորելիս, թիով քերելիս, քամելիով (հարսի, հնձանոց) քամելիս, գերանդիով հարելիս, մանգաղով հնձելիս, փոքր սղոցով սղոցելիս, մեծ սղոցով տախտակ քաշելիս, շուի ու զուռնա ածելիս, դահիրա ու թմբուկ զարնելիս, պար գալիս։

3. Արհեստաւորներից — դարբինը՝ կլեկչին, հիւսնը, գերձակը՝ ինչպիսի շարժմունք են անում իրանց գործը կատարելիս։

4. Ինչ շարժմունք են անում մարմնամարզութեան ժամանակ։ Քանի՞ կերպ է թեքվում վիզը, մէջքը, ծունկը։

5. Օրինակով ցոյց տուէք հետեւեալ բառերի նշանակութիւնը.— Ցատկել, (ոտնուլ, լոք տալ) ցատկել, ճօճալ, օրօրուիլ, տարուբերուիլ, տատանուիլ, խելի խելի նայել, աչքերը չռել, ունքերը կիտել, ժպտալ, սրընթաց, արագընթաց, սնգանգալ, չափ ընկած, գլխակոր, գլդիգլոր, գլուխկոնձի, ծալապատակ, ծնկաչոք, թեք ընկած, սանակախ։

6. Ծեր մարդիկը խոսելիս ինչ սեռակ ձեռաշարժութիւններ են անում, վարժապետը ինչպէս է շարժում ձեռքերը դաս պատմելիս։

ՄԱՐՄՆԱՄԱՐԶԱԿԱՆ ԽԱՂ.

Ահա եկաւ խոտ հարողը,
Ասին դրած գերանդին,
Բոլոր խոտը սա հարել է,
Բան չի թողել մեր հանդին։

— Ա՛յ խոտ հարող, ասա տեսնենք,
Դու ինչպէս ես խոտ հարում.
— Այսպէս ահա, լա՛ւ նայեցէք,
Ես այսպէս է՝ խոտ հարում,
Հէ՛պ, հօպ,
Հէ՛պ, հօպ...
— Ախ, ինչ լաւ է, եկէք սովրենք,
Մենք էլ այդպէս խոտ հարենք,
Հէ՛պ, հօպ,
Հէ՛պ, հօպ...

*
* *

Ահա եկաւ մեր հնձողը,
Ձեռքին փայտէ մատնոցներ,
Պատրաստել է ուր մանգաղը
Պէտք է հնձէ մեր արտերը։
— Հնձող եղբայր, ասա տեսնենք,
Դու ինչպէս ես հունձ անում.
— Այսպէս ահա, լա՛ւ նայեցէք,
Ես այսպէս եմ հունձ անում։
Հէ՛պ, հօպ, հէ՛պ,
Հէ՛պ, հօպ, հէ՛պ...
— Ախ, ինչ լաւ է, եկէք սովրենք,
Մենք էլ այդպէս հունձ անենք.
Հէ՛պ, հօպ, հէ՛պ,
Հէ՛պ, հօպ, հէ՛պ...

ԵՐԿՈՒ ԽՈՓ

Երկամամաճառը երկու հատ խոփ ունէր, երկուսն էլ մի մեծութեան և մի վարպետի ձեռքով շինուած։

Մի երկրագործ դրանցից մէնը գնեց և գործ ածեց, իսկ միւսը երկար ժամանակ մնաց խանութումն ընկած։

Պատահեցաւ որ մի քանի ժամանակից յետոյ այդ երկու ընկեր խոփերը հանդիպեցան իրար։

Գործածուած խոփը արծաթի պէս պսպղում էր, և աւելի էր գեղեցկացել քան թէ նոր շինած ժամանակն էր, իսկ խանութումն անգործ մնացածը ժանգոտուել ու սեւացել էր։

— Այդ ինչքան է, որ դու այդքան գեղեցկացել ես, հարցրեց սեւացած խոփը իւր ընկերին։

— Աշխատելուցն է, բարեկամ, աշխատութիւնն է ինձ գեղեցկացրել, պատասխանեց ընկերը։

— Ա՞խ, ինչքան բախտաւոր ես դու, որ ընկար երկրագործի ձեռքը։ Ես այստեղ մնացել եմ բանդարկուած, և ինչպէս տեսնում ես, անգործութիւնից փտել ու սեւացել եմ։

ԱՌԱՒԻՕՏԵԱՆ ԵՐԳ ՇԻՆԱԿԱՆԱՑ

Ա՛յ մարդ, այսօր շատ քնեցար, ննջեցիր,
Առաւօտեան հով ժամանակն անցուցիր.
Արեգակը ծովի ծայրէն ծագեցաւ,
Ջերմութիւնը ձորն ու դաշտը փռուեցաւ։
Ընկերներդ վաղ արտերը գնացին,

Ցորեն, դարի գերանգիով հնձեցին,
Խուրձ կապեցին, բարդ բարդեցին դաշտումը,
Նատան հանգչիլ կաղնիների հովումը։

Ա՛յ մարդ, վեր կաց սառը ջրով լուացուիր։
Դեսիդ կապէ, գերանգիդ առ, դաշտ հասիր.
Քանի հով է, հունձդ արա արտումդ,
Հունձդ հնձէ, մի ծուլանար գործումդ.

Հունձդ հնձէ, բարդդ բարդէ, տուն արի,
Հանգստացիր, երբ քո հունձդ կատարի,
Բեր գերանգիդ, կախէ պատին քո տանը,
Ես իրիկուան կրպատրաստեմ սեղանը։

Ա՛յ մարդ, հերիք, ինչ որ այսօր քնեցար,
Աչքդ մէկ բաց, տես թէ որքան ուշացար.
Մեր գրացին վաղ անցկացաւ կամուրջէն,
Վաղ լռել է մեր գղիրը ձայնելէն։

Ինչ ես պառկել, ինչ ես քնել, սիրական,
Արեգական շողը հասաւ մեն գրան.
Մի՛ ծուլանար, ժամանակդ խնայէ,
Այն պիտի մեզ բոլոր ձմեռ կերակրէ։

ԵՐԵԽԱՆ ԳԱՂՏՈՒՄԸ

Պայծառ և գեղեցիկ առաւօտ էր։ Թռչունները երգում էին գաշտումը անուշիկ ձայնով։ Ամեն մարդ գնում էր իր գործին, մի փոքր երեխայ էլ գնում էր ուռումնարան։

Դաշտի միջով անցնելիս՝ երեխայի սիրտը փոխուե-

ցաւ, էլ չուզեց դասի գնալ, այլ ուզեց խաղալ։ Բայց ո՞ւմ հետ խաղար, ուրիշ երեխայ չկար մօտը։

Մի քիչ դէս ու դէն ընկաւ, մի քանի ծաղիկ քաղեց, յետոյ մի մեղրաճանճ տեսաւ ծաղկից ծաղիկ թռչկոտալիս՝ և ասաց նորան։

—Մեղրաճանճ, եկ ես ու դու խաղանք։

—Ես ժամանակ չունիմ, հոգիս, պատասխանեց մեղուն, չես տեսնում, ես մեղր եմ ժողովում։ Ինձ չըմօտենաս, եթէ ոչ՝ կըխայթեմ քեզ։

Երեխան գլուխը քորեց և հեռացաւ նրանից։ Մէկ էլ տեսաւ որ ահա մէկ ուրիշ է գալիս սնդոնգալով, և կանչեց նրան։

—Բոզաբ, Բոզաբ, սպասիր, բան եմ ասում քեզ։

Բոզաբը կանգնեց։ Երեխան մօտեցաւ նրան և ասաց.—ես այստեղ մենակ եմ, արի միասին խաղանք։

—Յիմար, ես էլ կարծեցի, թէ մի լաւ բան ես տալու ինձ ուտելու։ Չես լսում իմ հովուի սրնգի ձայնը, նա ինձ է կանչում այնպէս գիլ ձայնով։ Հեռացիր ինձանից, եթէ ոչ՝ կրկծեմ քեզ. ասաց շունը և վազեց դէպի ոչխարի հօտը։

Դրանից յետոյ երեխան մի թռչնիկ տեսաւ խոտը կոցին և ասաց նրան։

—Սիրուն թռչնիկ, չես խաղալ ինձ հետ. մենք միասին մորեխ կըբռնենք։

—Ո՛չ, պատասխանեց թռչնիկը։ Ինձ մորեխ չի հարկաւոր, ինձ հիմա հարկաւոր է խոտ, մամուռ, բուրդ, որ բունս շինեմ, ձու դնեմ, մորեխի ետևից յետոյ կընկնիմ, երբ որ ձագեր կըհանեմ։

Երեխան սկսեց ձանձրանալ։ Նրա հետ խաղացող չըկար։ Նա տխուր գլխով մօտեցաւ առուին, որ քըչ-

քշալով հոտում էր մօտիկ անտառից, և ասաց նրան։

—Դու էլ խօմ գործ չունիս անելու, արի խաղանք ես ու դու։

—Ո՞վ չունի գործ, բարկացաւ առուն։ Հապա ո՞վ է ջուր տալիս կենդանիներին, ով է պտրտեցնում աղօրիքը, ո՞վ է լուանում կտաւիքը։ Միայն դու ես, որ գործ չունիս։ Ես քեզ պէս ազատին ջուր էլ չեմ տալ, որ խմի, կամ երեսը լուանայ, ուր մնաց որ հետը խաղամ։ Մէկ նայիր երեսիդ, ձեռներիդ, տես ինչքան կեղտոտ է։ Դէ գնա կորիր, ճեղուտա ազայ, ծոյլ...

ՏԻՈՒՐ ԵՐԵԽՈՑ

Երբ որ ծագեցաւ պայծառ արեգակ,
Աբլար, ագռաւներ, հաւ ու ծիծեռնակ,
Ձի, ոչխար, գառնուկ, այծ, ուլ, հոլթ ու կով
Գնացին իրանց գործին շտապով։
Միայն ծոյլ ագռաւ չի գնաց գոլորց,
Գիրքը շրջրաեց ու փախաւ փողոց.
Երիկուն ամենքն լեռ գարձան ուրախ,
Միայն ագռաւ էր տրտում, գլխակախ։

ԲԱՆԴԻ ԱՐԱՐ, ՑԵՏՈՑ ԹԱՂԱ

Ջանասէր մանուկը լուսամուտի առաջը նստած, պատրաստում էր իւր դասերը, փայլուն արևի շողքը

բինելով նորա գրքի վերայ, դուրս էր հրաւիրում նորան ասելով։

—Սիրուն մանկիկ, բաւական չէ՞, քիչ կարդա, դուրս արի քիչ էլ խաղա։

Մանուկը նորան պատասխանում է.

—Ո՛չ, պայծառ արևիկ, ո՛չ, ես հիմա խաղալու չեմ, պէտք է դասերս վերջացնեմ։

Մանուկը շարունակում է իւր գործը։ Մէկ էլ մի սիրուն թռչնակ թռթռալով գալիս է իջնում պատուհանի վերայ և ծլվլալով ասում.

—Սիրուն մանկիկ, բաւական չէ՞ ինչքան կարդացիր, դուրս արի երգիր, խաղա, զուարճացիր։

Մանուկը պատասխանում է.

—Ո՛չ, սիրուն թռչնակ, ոչ, ես դեռ չեմ կարող խաղալ ու երգել, քանի որ դասերս դեռ չեմ պատրաստել։

Մանուկը շարունակ գրում է ու կարդում, բայց հիմա էլ կարմիր կեռասն է երևում նորա աչքին և փոխում ականջին, թէ՝—բաւական չէ՞ ինչքան գրեցիր, արի իմ ծառիս վերայ բարձրացիր, հաստած կեռասներս կեր ու կշտացիր։ Իսկ մանուկը պատասխանում է.—Շնորհակալ եմ, այժմ գործ ունիմ, ախորժակ չունիմ։

Վերջապէս մանուկը իր գործն աւարտեց, ոչ սքի խօսքից չբխաբուեց, իր դասերը լաւ պատրաստեց, լեռտոյ գէպի այգին վազեց և համարձակ ձայնով գոչեց.

—Այն ո՞վ էր, որ ինձ հրաւիրում էր, եկէք, այժմ ես պատրաստ եմ ամենից առաջարկութիւնը կատարել։

Այնուհետև նորա երեսին ժպտաց արեգակը, իր քաղցրիկ տաքերը երգեց թռչնակը, կեռասն էլ գեմ արեց իւր կարմիր թշիկ, որ տղայից առնէ համբոյր քնքուշիկ։

ԺՐԱՋԱՆ ՏՂԱՑ

Տղան սիրում է ձեզ շատ, արեգակ,
Գաշտ ու պարտէզում ճռվռող թռչնակ,
Ձիւղերից կախկախ պտուղներ հասուն,
Բայց ձեզնից աւելի պիտ սիրէ ուսում։
Ուրեմն թողէք նա դպրոց երթայ,
Ընկերների հետ դասերը նա տայ,
Եւ երբ որ իւր սուրբ պարտքը կատարէ,
Որքան որ ուզէ, թող նա ձեզ սիրէ։
Այնուհետև ցոլա, պածառ արեգակ,
Այնուհետև երգէ, դու նախշուն թռչնակ,
Եւ անուշ համբ հասուն պտուղին
Թող լինի վարձը ժրաջան տղին։

ՀԱՓ ԵՒ ՔԱՆԱԿՈՒԹԻՒՆ

Մենք ինչպէս որ տեսնում ենք առարկաների գոյները, ձևն ու կազմուածքը, նոյնպէս տեսնում ենք և նրանց մեծութիւնն ու փոքրութիւնը, շատութիւնն ու սակաւութիւնը։

Ասում ենք — հատ, բարակ, լայն, նեղ, երկայն, կարճ, խոր, երես, ծանծաղ, ցածր, բարձր, մանր, խոշոր, մեծ, փոքր, հեռու, մօտիկ...

ԽՆԴԻՐՆԵՐ

1. Ասացէք օրինակով, ինչ կը նշանակեն թանձր, նոսր, գեր, նիհար, հսկայ, գաճաճ, ահագին, ահռելի, ընդարձակ, անսահման, անթիւ, հազարաւոր, բիւրաւոր։

2. Զրհորին ասում ենք խոր, իսկ ծառին՝ բարձր, ասացէք, էլի բարձր ինչ, խոր ինչ, ցածր՞, բարակ՞, լայն՞, նեղ՞...

ԱՌԱԾՆԵՐ

Հատ ու բարակն է մի գին, վայ գայ բարակ մանողին։— Կուշտը քաղցածին մանր կերթի։— Մեծի ասած, փոքրի լսած։— Մեծ — մեծ դռներ քաղցած շներ։— Լէնին ճար կայ, նեղին ճար չկայ։— Մինչև հատը կերթարակի, բարակը հոգին կըտայ։— Եօթը չափիր, մէկ կտրիր։—

ԲԱՐԴԻՆ ՈՒ ՎԱՋԸ

Բարդին սկսեց վազին նախատել,
Եւ ասաց նորան. «Ինչ ես կուչ եկել,
Ես էլ որ չըլինիմ, շուտք չըտամ քեզ,
Եթէ ինձանով չըդաս փաթաթուես,

Ասա ինձ, էլ ով քեզ կպատհպանէ,
Բարակ բամբն էլ հոգիդ կրհանէ։
Ինձ մտիկ արա, տես ուր եմ հասել,
Ինձ պէս բարձրացիր, որ ամէն մարդ էլ
Քեզ մտիկ տալիս ապշի, հիանալ,
Ելինք ծառին ով պատիւ կրտալ։
Ի՞նչ եմ անում ես քս ցիցն ու ձողին,
Քեզ պէս չեմ դողում քամու առաջին.
Մէկ առաս գեանում, միւսը երկնքում,
Ոչ մի վտանգից ես չեմ վախենում։
Բայց ձեր խեղճ ցեղը հէնց դուրս է գալիս,
Գետնին է կպչում մէկ հով դիպչելիս,
Ափսոս այն պառաղ, որ գուբ էք տալիս,
Այդ ինձ էր վայել, այս բարձր ծայրիս»։
Խեղճ վազը բարգուն շատ ականջ դրաւ,
Եւ վերջը մի կարճ պատասխան տուաւ։
—Քս բարձր ծայրին, ես էլ եմ կարծում,
Խազդ էր վայել, ով է բան ասում,
Բայց այն ժամանակ ցցուած ճղներդ,
Կախ կրգցէիր մինչև ոտքերդ։
Պարտաւոր ծառը խոնարհ է լինում,
Նա երբէք քեզ պէս չի գռռոգանում,
Դու մխիթարուիր քս բարձր հասակով,
Մենք էլ մեր պզտի քաղցր ճաշակով։

ՀՕՐԱՊՈՒՏՈՒԹԻՒՆ

Երեխան ինչ որ տեսնում է, ուզում է բռնել, շոշափել։ Տեսնում է վառած ճրագ,

կրակ, բռնում է և ձեռքերն այրում։

Այս փորձից երեխան իմանում է, որ կրակը հանգաք անել չի սիրում, նորա հետ խաղալ չի լինիլ։

Երեխան տեսնում է իր շուտքը պատի վրայ ընկած, ուզում է բռնել, բայց ձեռքը ոչինչ չի ընկում։ Իր պատկերը տեսնում է հայելու մէջ. ուզում է բռնել, չի լինում։ Նայում է հայելու քամակին— ոչինչ չրկայ։

Երեխային ամէն բան մօտիկ է երևում։ Նա ձեռքը մեկնում է, որ ծառի ծայրից թռչունը ցած բերի, կամ հասած պտուղը պոկի։ Տեսնում է երկնքումը լուսին, աստղեր, ձեռքը մեկնում է, որ նրանց վայր բերի երկնքից... բայց քիչ քիչ սովորում է որոշել տարածութեան չափը, հեռուն ու մօտիկը, բարձրն ու ցածրը, վերևն ու ներքևը, աջն ու ձախը։

Երեխան ամէն ինչ որ ձեռքն է գցում, իսկոյն բերանն է տանում, որ ուտի։ Երբէ ձեռքն ընկածը մի քարի կամ փայտի կտոր է, պզում է նրանց կոշտութիւնն ու պնդու-

թիւնը, և դէն է գցում, իսկ եթէ մի փոփոխակ և համով բան է, անուշ է առում։

Երեխան կարծում է, թէ ամէն ինչ կարող է վերցնել, բայց շատ փորձեր անելուց յետոյ գլխի է ընկնում, որ բոլոր առարկաները միակերպ թեթև չեն, և շատերն այնքան ծանր են, որ ինքը չի կարող վերցնել։

Այսպէս ահա մենք մեր փոքր հասակից շատ փորձեր անելով որոշում ենք ցուրտը տաքից, կոշտը կակուղից, հեռուն մօտիկից, աջը ձախից, բարձր ցածրից, հասարը բարակից, ծանրը թեթևից։

Այդ փորձը մենք անում ենք շոշափելով, այսինքն ձեռնահարելով, ոտտելով, չափելով, մանդալով, տաքանալով, մրսելով, աղմուկելով, ճնշուելով, թուլանալով։

Մեր մարմնի բոլոր մասերը շոշափելու ընդունակութիւն ունին, բացի մազերից և եղունգներից։

ԽՆԴԻՐՆԵՐ

1. Այնպիսի առարկաների անուն տուէք, որ այնքան պինդ լինին, որ եթէ մի ծայրից բռնենք բարձրացնենք, չը թափուին, չը բաղքայուին։ (Այդ առարկաները կարող են լինել բնական, արուեստական, քարեղէն, հողեղէն, մետաղեղէն, բուսեղէն)։

2. Ի՞նչ առարկաներ գիտէք այնքան ջրի, որ առանց ամանի պահել կարելի չը լինի, ինչպէս՝ օրինակ, թանը, մածունը և այլ հեղուկ առարկաներ...

3. Մենք կարող ենք մի աման ծիրով լցնել, բայց եթէ ամանի բերանը բաց թողնենք, ծուխը նրանում չի մնալ, կը ցնդի, կը փախչի։ Այս տեսակ ուրիշ ի՞նչ առարկաներ գիտէք։

4. Ո՞ր առարկաներն են ջրի երեսն անում և որոնք տակը։ Այդ առարկաների անունը տուէք մէկ մէկ։

5. Ի՞նչ առարկաներ գիտէք, որ ջրումն են լուծվում, և ի՞նչ առարկաներ, որ կրակումն են հալվում։

6. Օրինակներով ասացէք հետևեալ բառերի նշանակութիւնը։—Ջնել, անապել, խարխափել, ծանր ու թեթև անել, մրսել, շոքել, կոկ, հարթ, կակուղ, փափուկ, ջիլ, կոշտ, պինդ, կարծր, փիսրուն, թանձր նասար, խիտ, ցանցառ (սեյրակ) սեղմել, ճմլել, փշրել...

ՀԵՇՏ ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ

1. Մենք քիչ ունինք մեզ վերայ, որ եթէ մեր քնած ժամանակը կարեն, մենք չենք իմանալ և չենք գարթնել։

2. Կոյրերը աչք չունին, որ տեսնեն, բայց՝ շատ լաւ որոշում են թուղթի փողը արծաթից, արծաթը պղնձից, և իրանց հաւաքած բոլոր դրամները ուղիղ են համբրում, դիտեն որն է մէկ մանէթանոց և որը երեք, որն է 10 կոպէկանոց և որը 20, որը 1, որը 2։ Այդ քնչպէս են իմանում։

ԱՌԻԾՆ ՈՒ ՄՈԾԱԿԸ

Խեղճի վերայ մի ծիծաղիր,
Անճարին մի վիրաւորիր։

Խեղճ մարդն էլ շատ անդամ քեզ այնպէս
Կը թայթէ, որ կը մնաս սեւերես։
Քո գլխին շատ էլ մի հաւատար,
Լսիր այս առակը, ականջդ առ։
Այնպէս պատահեց, որ Առիւծը հզոր,
Մոծակի սիրտը խիստ խոցեց մէկ օր։
Մոծակն այդ բանից շատ վիրաւորուեց,
Առիւծ արքային պատերազմ յայտնեց.
Կռուողն էլ ինքն էր, փողհարն էլ ինքը,
Վերան էր բոլոր զրահն ու զէնքը.
Բզզալով ընկաւ թշնամու վերայ,
Որ մէկ հարուածով մահացու վէրք տայ։
Առիւծն սկզբում մի հանաք կարծեց,
Բայց երբ Մոծակը նրան մէկ լաւ խայթեց,
Տեղից վեր թռաւ մեր Առիւծ արքան,
Սկսեց գարկել պաչոմն ինքն իրան։
Բայց քաջ Մոծակը արնի համն առած,
Սիրտն էլ նեղացած, ինքը բարկացած,
Չոռ արաւ թռաւ ճակատին նստեց,
Տզրուկի նման արիւնը ծծեց։
Անճար Առիւծը շատ էլ գոռ արեց,
Բաշը թափ տուեց գլուխն օրօրեց,
Բայց դու ոչ մեռնիս. Մոծակն իր քեփին,
Մէկ քթին էր գարկում ու մէկ ականջին։
Առիւծի ճարը հէնց որ կտրուեց,
Տեսաւ որ Մոծակն իր հոգին հանեց,
Ընկաւ գետնի վրայ և այնպէս գոռաց,
Որ նորա ձայնից սար ու ձոր դողաց.
Մէկ ժանիքներն էր պրճլտեցընում,
Ու մէկ գետինը ճանկռտում, պոկում։

Ամբողջ անտառում էլ շունչ չը մնաց,
Նորա գոռոցից փախան սարսափած.
Կարծես սար ու ձոր կրակ է ընկել,
Կամ կարկուտ եկել, ջրհեղեղ արել։
Եւ այսքան շփոթ, այսքան աղմուկը
Հնարել կարաց փոքրիկ Մոծակը։
Երբ որ Առիւծը խոպառ թուլացաւ,
Գետնի վերայ չոքեց և մեղայ եկաւ.
Խնդրեց Մոծակին, որ իրան ների,
Եւ այնուհետեւ էլ կռիւ չանի։
Մոծակն էլ իրա վրէժը հանած,
Թշնամուն այսպէս քարովը տուած,
Մեր փադիշահի յանցանքը ներեց
Եւ լաւ պայմանով նորա հետ հաշտուեց։

ԵՐԿՈՒ ԱՅԾ.

Երկու կամակոր այծ դէմ առ դէմ եկան մի նեղ գերանի վերայ, որ կամուրջ էր ձգած մի գետակի վրայով։

Երկուսը մէկ անգամից չէին կարող անցնել այդ նեղ կամուրջովը. պէտք է նրանցից մինը յետ կանգնէր և միւսին ճանապարհ տար։

—Դու յետ յետ գնա, որ ես անց կենամ, առաց մէկը։

—Ինչու՞ դու չես յետ քաշվում, պարոն, քան թէ ինձ ես առաջարկում, պատասխանեց միւսը։

—Քեզ ասում եմ, յետ քաշուիր, առաջ ես եմ բարձրացել կամուրջի վերայ։

—Ներողութիւն կանես, պարոն։ Գիտես ում հետ ես խօսում, որ դեռ բարկանում էլ ես։ Երևի գլուխդ քոր է գալիս. պատրաստուիր ուրեմն, խփում եմ։

Այծերը ճակատ ճակատի զարկեցին, իրար գլուխ պատռեցին, և վերջը երկուսն էլ կամուրջից սայթաքեցան, ջուրը թափուեցան։

ԿՈՅԵՐԻ ԿՈՒԻԼԸ.

Մէկ քանի կոյր մարդ ընկած մէկ ճանապայ,
Այսպէս էին գնում, ինչպէս կոյրը կերթայ,
Երբ սաղ աչքանին
Չը կայ առաջին։
Ոտք էին փոխում, սայթաքում, ընկնում,
Կամ գլխի վերայ ցիցանակ լինում.
Անցորդի մէկը այս որ նկատեց,
Մէկ փայտ վեր առաւ և նրանց տուեց,
Որ էլ վայր չընկնին և ոչ սայթաքին,
Փայտը դէմ տալով՝ գնան տեղ հասնին։

* * *

Կոյրերի մէկը՝ գլուխը պատռած՝
Փայտը ձեռքն առաւ և ընկաւ առաջ,
Մէկէլներին էլ հետևից քաշեց,
Այսպէս իրար բռնած՝ կոյր հօտը քաշուեց։
Առաջուայ նման թէպէտ վայր չընկան,
Լօք լօք անելով՝ մի քիչ հեռացան,
Բայց յանկարծ մէկ թուռդ կռիւ բաց արին
Առաջև գնալն ամենքն ուզեցին։
Եւ այս կռիւը դեռ չը վերջացած,

Մէջեներից մէկը բղաւեց յանկարծ.
—Տղերք, լսեցէք, ձեզ բան եմ ասում,
Այս փայտն ինչքա՞ն է, ով էք իմանում.
—Ես լաւ կիմանամ. սուր մէկ շոշափեմ,
Դորա անունը ես իսկոյն կասեմ.
Առաւ, շոշափեց, հոտ քաշեց, անուշեց,
Գլուխը շարժեց, խելքին զուռ տուեց
Եւ յետոյ վճռեց, թէ սա բոխի է.
—Դա ոչ թէ բոխի, այլ լաւ ջոխի է.
Առում է միւսը և ձեռքիցն առնում,
Նայեցէք շոշափում և ձեռնահարում.
—Հը՞մ, ես լաւ գտայ, ասում է մէկ էլ,
Այս ջոխիս կաղնու ծառից է պոկուել։
—Ի՞նչ ես գուրս տալիս, դա սերկեւիլ է.
—Իսկ ես կասեմ ձեզ, որ դա գկռի է.
—Բա ես խելք չունիմ, ես էլ լաւ գիտեմ,
Ամենքիցդ լաւ ես կը ճանաչեմ,
Դա ձեր ասածից և ոչ մէկը չէ.
Ես հաստատ գիտեմ, որ դա ոգնի է։
Այսպէս ամէն մէկը իր գուռնան փչեց,
Փայտն առաւ ձեռքը և մատնահարեց,
Ձեռքով ուզեցան այն բանը գտնել,
Որ երագումն էլ կոյրը չի տեսնել։
Եւ դորա վերայ այնքան վիճեցին,
Որ գործը մինչև կռի հասցրին.
Գլուխ էր, որ ճզուեց, ատամ, որ ջարդուեց,
Արն էլ չնչասպառ գետնին մեկնուեց.
Այն փայտը, որ նրանց պիտի պահպանէր,
Մխա, ապցան շինեց բոլոր ոսկոռներ։

ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆ

Մէկ չբաւոր երիտասարդ հանդիպեց իւր նախկին ուսուցչին և սկսեց գանգատուել իւր անբախտութեան վերայ։

Նա ուսումնարանում եղած ժամանակը ամենալաւ աշակերտն էր։ Իրանից վատ ուսանողները արդէն լաւ անուան ու հարստութեան տէր էին դառել, իսկ ինքը մնացել էր ապբատ ու թշուառ։

—Մթթէ ասածիդ չափ ապբատ ես դու, ասաց ուսուցիչը, և բռնելով նրա ձեռքը, շարունակեց։ Այս ձեռքը ուժեղ է և կարող է գործել։ Եթէ քեզ հապար մանէթ տան, թոյլ կը տաս, որ այս ձեռքդ կտրեն։

—Ի՞նչ էք հրամայում, փարժապետ, պատասխանեց երիտասարդը,—Ասուած հեռու տանէ, և ոչ տասը հապարով թոյլ կը տամ կտրելու։

—Հապա քո վառվռուն աչքերը, որ տեսնում են լոյս աշխարհքը, քո սուր ականջները, քո արագաշարժ ոտները։ Կարծեմ դու չես փոխել դրանց մի ամբողջ թագաւորութեան հետ։

—Ի հարկէ, չեմ փոխել։

—Եթէ այդպէս է, եթէ այդչափ հարստութեան տէր ես, ուրեմն էլ ինչու ես գանգատվում քո ապբատութեան վերայ։

ԱՐՈՒԹԻՒՆԻ ԱՂՕԹՔԸ

Ով Աստուած իմ Աստուած, Դու բարի ես, Դու միշտ ողորմած,
Շատ ժամանակ է, որ քո գթութիւնդ երբէք չեմ յիշած.
Ներիր ինձ, Ներիր, Արարիչ երկնի, ես մեղաւոր եմ
Դու ինձ շնորհել ես ուժ ու զօրութիւն, ես մոռացել եմ
Դու հրամայել ես լինել գործունեայ, նոր եմ ես յիշում
Այժմից կըսիրեմ գործունէութիւն իմ բոլոր կեանքում.
Գործունէութեամբ իմ մէջ կրգտնեմ ես ինձ բարերար,
Գործունէութեան դէմ չըկայ ոչինչ անհաս և գժուար.
Թող այս բազուկներս, որ այժմ գօրաւոր պարապին գործով,
Թող այս ճակատս, որ այժմ լայնացած, մոռածի ուշրով,
Թող այս ոտները, որ այժմ ամրացած, ուղղապէս քայլեն,
Թող այս աչքերը, որ այժմ փայլուն, շրջանկատ լինին.
Ցաւաթ եմ յոժար, հոգով և մարմով գործող լինելու,
Հաստատուն յուսով, անվեհեր սրտով յառաջ դիմելու—
Դէպի նպատակ—դէպի կատարեալն և դէպի բարին,
Որ անհրաժեշտ լցուցանելու պարտք է մարդկային.
Դու մի ամրապինդ, ով իմ Ստեղծող, կամք տուր ինձ միայն,
Իսկ քեզ վայելէ փառս և պատիւ այժմ և յաւիտեան.

ՃՇԳՐՏԱԿԱՆ ՀԱՄԸ

Երեխան շիրն ու շաքարը չի որոշում միմեանցից, բայց երբ որ բերանն է տանում, մէկն իսկոյն դէն է գցում, իսկ միւսից ձեռք չի վերցնում։

Ի՞նչ էք կարծում, ո՞րը համեղ կրթութիւնը և որը՝ անհամ։ Ի հարկէ՝ շաքարը նրան համեղ կրթութիւն, իսկ շիրը՝ անհամ։ որովհետև շաքարի համը քաղցր է, իսկ շիրինը՝ տաքիպ։

Հանն իմանում ենք լեզուի ծայրով և քիմքով։

Հանն մի հաստ ջոկ անուն ենք տալիս և կամ ուրիշ առարկայի համի ենք նմանեցնում։ Հաում ենք — քաղցր, անուշ, համով, անհամ, ապի, անապի, դառը, լեղի, աղաւ, թթու, կծու, տաքիպ, թթուաց, քաղցրաց, կծուաց, ծխահամաց։

ԽՆՁՈՐՆԵՐ

1. Խնձորը լինում է դառը, թթու, թթուաշ, քաղցրաւուն, քաղցր և շատ քաղցր։ Ուրիշ ի՞նչ գիտէք, որ խնձորի պէս մի քանի տեսակ համներ էլ լինի։

2. Ինչ համ ունին — հունը, շլորը, գկեռը, (գրանց հասածը, խակը) նուռը նռան կեղևը, սերկևիլը, դեղձը, թութը, չորացրած ձուկը, հնացած եղը, ծխի վերայ խորոված միսը, ջրաքամ եղած կերակուրը, մեղրը, սոխը, սղպղեղը, բողկը, ատակը և ուրիշ ուտելու բաներ...

ԱՌԱՆՑՆԵՐ

Աղուեսի գունչը հաղոդին չրհասաւ, ասեց խակ է։— Պապերը շլոր կերան, թոռների ատամներն առան։— Քրդի համար մի գլուխ սխտորը լաւ է, քանթէ երկու գլուխ շաքարը։— Կատուն տանը չէր կենում, բերանին մեղր քսեցին։— Ոչ այնքան քաղցր եղիր, որ կուլ տան քեզ, և ոչ այնքան դառն, որ թքեն վերագ։— Սոխի քաղցրը չի լինիլ, սխտորը խոմ աւելի վատ։

ՀՈՎԻՒԻՐ ՔԱՂԱՔՈՒՄԸ

Օգոստոսին էր, թէ յուլիս ամսում, լաւ չեմ լիշում, մի անմեղ հովիւ՝ քաղաք չբաւեսած, իւր ոչխարակալ հաստ գաւազանը ուսին գրած, մտաւ բազարը խլշկռտալով, զարմանալով։

Խրտնած պախրի պէս շատ դէս դէն ընկաւ, վերջը կանգ առաւ մրգավաճառի խանութի առջև, և աչքը ձգեց լիք թաբախների թարմ մրգերին։

Ի՞նչ պտուղ ասես, որ նա չբաւեսաւ, չհիացաւ.— տեսակ տեսակ տանձ ու խնձոր, դեղձ ու խաղող, թութ ու սալոր, նուռ, սերկևիլ, ունաբ ու հուն, կեռաս փայլուն։

Հովիւը նայեց մրգավաճառին, որ այդչափ հասուն մրգերի միջին, ձեռք չէր դիպցնում մէկին կամ միւսին, «Սա կոյր կըլինի», ինքն իրան ասեց և փորձել ուզեց։ Մահակը մեկնեց դէպի բախկալը և քիչ էր մնում, աչքն էր կոխում։

—Էդ, ինչ ես անում,— գոռաց բախկալը, սաստիկ զայրացած։

—Մթթէ տեսնում ես... ասաց հովիւը,— եթէ աչք ունիս և լաւ ես տեսնում, բա այդ մրգերից ինչի՞ չես ուտում...

ԽՈԶՆ ՈՒ ԷՋԸ

Խոզն ինչ գլուխ ունի, որ ինչ գրոյց տայ,
Բայց մէկ օր ոկսեց Եզին խրատ տալ նա.
Խոզը խրատ կըտայ,
Ո՞վ կըհաւատայ։
Լսիր, սիրելի, նահլաթ սատանին,
Մթթէ խոզի պէս մարդիկ քիչ կըլինին։

«Զուր չեն քեզ մարդիկ եզուկ անուանում,
Եւ ծանր լուծը շինքիդ դնում.
Սայլում, գութանում, ցաքանում լծում,
Կալումն էլ դունչդ թաղիքով կապում։
Քեզ այնքան ընկճել, խեղճացրել են,
Որ ոչ միայն լծում, այլ բարձում էլ են։
Եւ քեզ, որ այդքան գործ ես կատարում,
Դորա փոխարէն ինչպէս են պահում։
Մի բուռ խոտն ինչ է, այն էլ չեն տալիս,
Դունչդ էլ կապում կալը կասելիս,
Որ դու քո կառած դարմանից չուտես,
Կրած հասկերիդ համը չըտեսնես։
Բայց որ ինձ լսես և լաւ իմանաս,
Տուն չես գալ հանդից լծափախս կըտաս։
Ինձ որ ուտելու ոչինչ չեն տալիս,
Դորանց հախիցը շատ լաւ եմ գալիս.
Էլ ոչ հաւին եմ խնայում, ոչ ճուին,
Ինչքա՞ն է պէտքը, քարն իրանց գլխին.
Ինչ որ գտնում եմ, փորրս եմ ածում,
Ինչ կուզի լինի, ես չեմ ջոկիրկում.
Օրէնը հազար տուն էլ որ քանդես,
Դեռ էլի քիչ է, որ լաւ մտածես։
Այսպէս եմ ասել, չաղացել այսպէս,
Որ ճրագուս եկել լցուել է աչքերս՝
Իսկ դու չորացել, կմախք ես դառել,
Մէջքդ բարակել, շլինքդ ծռուել.
Եւ երբ է եղել, որ մէկն ասի քեզ,
Թէ դու լաւ եղն ես, շատ ապրիս, կեցցես,
Կամ ինձ բանդարկել և յանդիմանել,
Թէ դու ինչու ես այդքան չաղացել.

Ասած է, «Հատ ու բարակն է մի գին,
Վայ ու հազար վայ բարակ մանողին»։

***

—«Խոզն իր խոզութիւնը ձեռից չի թողնիլ,—
Մեր Եզն սկսեց լեզուն բաց անել.
Ցեխն է քո տեղը գնաս թաւալ տաս,
Լաւութիւն անելն քնչ կրհասկանաս։
Ի՞նչ օգուտ ունի այն քաղցր արեգակը,
Կամ այն գեղեցիկ պայծառ լուսնիակը,
Որ լոյս են տալիս, իրանք մայր մտնում,
Մեզնից մի անուշ խօսք էլ չեն լսում։
Անձրևը գալիս, արևը բացվում,
Սար ու ձոր այնպէս ցնծում ու ծաղկում.
Մեղուն անգադար մեղր է պատրաստում,
Աղքատ, հարստի բերան քաղցրացնում։
Վարդն էլ իր հոտը չի պակասցնում,
Ծառն իր պտուղը ինքը չի ուտում։
Հողը ծառին է նիւթ տալիս, պահում,
Ծառն էլ նորան է շուաք անում, սիրում,
Երկինքն անձրև է տալիս մեր երկրին,
Երկիրն էլ ծովից բարձրացնում ամպին։
Ինչու՞ ուրեմն ես էլ չաշխատեմ,
Հազար խեղճ, որբի կարիք չը լցնեմ.
Էլ երկրի խոտը քնչ սրտով ուտեմ,
Էլ ապրի ջուրը ես քնչպէս խմեմ,
Որ աշխարհումս բանի պէտք չըգամ,
Իմ գլխիս նայեմ, իմ ցաւը հոգամ։
Ես իմ բախտիցը չեմ էլ գանգատվում,
Իմ տիրոջ տանը ես լաւ եմ ապրում.

Ինձ շատ սիրում են և շատ էլ պատվում,
Քաղցած չեն թողնում և լաւ են պահում,
Ով էլ մէկ մուրազ ունի իւր սրտում,
Ինձ է Աստուծուն մատաղ խոստանում։
Բայց քեզ ամենքն էլ սրտով ատում են,
Թուրք ու ջհուդ խամ խապառ զզվում են.
Քրիստոնեան էլ որ տուն է թողնում,
Թուրքի ու ջհուդի ջգրու է անում։
Ով մէկին մէկ վատ անուն է գնում,
Խոզ է ասում նրան կամ գոճի կանչում։
Դու քո խրատը քեզ համար պահիր,
Իմ մաքուր սիրտը դու չես պղտորիլ։
Միշտ աշխատել եմ, էլի կաշխատիմ,
Եւ իմ արածով կըմխիթարուիմ։

ՀՈՏ

Աչքով տեսնում ենք, ականջով լսում ենք, ձեռքով շոշափում ենք, լեզուով ճաշակում ենք, բայց մեր քիմն էլ չենք պարապ թողնում, նրանով էլ հոտն ենք իմանում։

Քիմը որ կայ, բերանի դռնապահն է. ինչ որ բերանն է ուզում մտնել, առաջ քիմն է տեսնում, թէ ինչ բան է նա։

Հոտեր շատ կան, բայց ջոկ ջոկ անուն չունին, այլ ասում ենք — լաւ հոտ, վատ հոտ, հոտոտ, հոտով, հոտաւէտ, անհոտ, հոտած, անուշ հոտ, քաղցր հոտ, նամանհոտ, վարդահոտ, խնկահոտ, խնջունահոտ...

Կոյրերի ինչպէս շոշափումը նոյնպէս և հոտառութիւնը շատ սուր է, բայց որսի շներինը աւելի սուր է։

Ինչպէս որ կան կոյր, խուլ և համր մարդիկ, այնպէս էլ կան շատ մարդիկ, որոնք ոչ բերանումը համ ունին և ոչ քիմումը հոտ։

ԽՈՆԴԻՐ

Մաքուր ջուրը ոչ գոյն ունի, ոչ հոտ և ոչ համ; բայց որ խմում ենք, ասում ենք՝ «ուխա՜յ, սիրտս հովացաւ»։ Ուրեմն ջուրը զովացնող յատկութիւն ունի։ Ճանաչէք, ուրիշ ի՞նչ առարկաներ գիտէք հոտ ունեցող, և հոտ չունեցող։ (Կերակուրներ, մրգեր, ծաղիկներ, կանաչեղէններ, արուեստական հոտեր)։

ԱՌԱԾՆԵՐ

Վարդի պէս հոտով եղիր, մեղրի պէս համով։— Ծաղկի գեղեցկացնողը իր անուշ հոտն է։— Համը չը-տեսայ, հոտիցը կշտացայ։

ՍՈԽՆ ՈՒ ՍԽՏՈՐԸ

Մէկ օր Սխտորը խօսել սկսեց,
Խեղճ Սոխի գլխին թուք ու մուր ածեց.
«Ինչ հոտած զատ ես, ուռած ու փքուած,
Ժանկի պարկի պէս լցուած, տուրգած.
Մարդ քեզ ուտելիս՝ բերանն ես կծում,
Դանակ դիպչելիս՝ աչք ես կուրացնում.
Էլ ոչ բուրաստան, ոչ մարդ ես թողել,
Ամեն տեղ էլ գէշ հոտդ ես տարածել։
Մինչև չեն եփում, քո աչքը հանում,
Դու քո վատ հոտը չես պակսեցնում»։
«Մէյթէ դու մեր Սխտորը չէս,
Սոխը նորան պատասխանեց։
Գիտէս, խնամի, իմ միտքն ինչ է.
Քո անուշ հոտի մօտ իմը ոչինչ է,
Բայց տրի դու խօսքիս լսիր.
Լուռ կաց, լեզուդ քեզ քաշիր։
Մեր բնութիւնն արի չասենք մեր լեզուով,
Որ խաղք չլինինք ու չըմնանք ամօթով»։

ԼԱՒ ԸՆԿԵՐ

Մի անգամ մէկ մարդ մի թառամած ծաղիկ տեսաւ ճանապարհին ընկած, վեր առաւ հոտոտեց։ Նորանից վայ դի հոտ էր գալիս։

—Մէյթէ դու վարդն ես, բայց ինչու այսպէս թառամել ու ձևափոխուել ես, հարցրեց նա։

—Ոչ, ես վարդը չեմ, պատասխանեց ծաղիկը, բայց նրա հետ միասին մի փնջի մէջ եմ եղել։

ԵՐԿՐԱԳՈՐԾԸ ԴԱՇՏՈՒՄԸ

Լուսնակն անուշ, Հովն անուշ,
Շինականի քունն անուշ,
Ծագեց լուսնակն երկնուց
Հովուի սրինգն էր անուշ.
Հոտաղն եզներ կարածէ,
Մանկալ պատկեր, քունն անուշ։
Զղզրղուն քամին կրփչէ,
Ծովային հովն էր անուշ։
Դաշտեր, ձորեր մնջեր են,
Ջրեր գըլգըլան, ձկնն անուշ։
Հաւքեր թառան իւրենց բուն,

Բիւլբիւլի տաղն էր անուշ.
Անմահական հոտ բուրէր,
Քաֆուր վարդի հոտն անուշ։

ՄԱՆՈՒՇԱԿ

Սիրուն մանուշակ, ինչո՞ւ ես թժռամել,
Կապոյտ աչիկներդ ինչո՞ւ ես փակել.
Քեզ ո՞վ նեղացրեց, ո՞վ վատ բան ասեց,
Քո անուշ հոտովդ ո՞վ չի զմայլեց։
—Սիրուն մանուշկներ, դուք ինձ սիրեցիք,
Իմ ծաղիկներից փնջեր քաղեցիք,
Բայց կոշտ ձեռներից, կոպիտ ճանկերից
Ինձ չազատեցիք, չըպահպանեցիք.
—Ինքոյլ սրտերը շուտ են կտրվում,
Ինքոյլ ծաղիկները շուտով թառամում.
Քանի որ անխիղճ մարդիք կըլինին,
Երկար չեմ ապրիլ ես այս աշխարհում։

ԵՐԿՐՈՐԴ ՎԱՐԺՈՒԹԻՒՆ

ԳԱՐՈՒՆ

Տարին չորս եղանակ ունի, բայց ամենից սիրունը, ամենից գուրեկանը գարունն է։

Ինչ որ մեռած ու թմրած է լինում ձմեռը, գարունը կենդանանում ու արթնանում է։

Սառած գետինը տաքանում է և սկսում է կանաչել։ Փետուցած ծառերը բացվում, փթթում են։ Սար ու ձոր ծլում, ծաղկում է։

Երբ որ տեսնում ես գոյն գոյն ծաղիկները արևի տակ փայլելիս, կարծում ես թե փոքրիկ մանուկներ են ժպտում երեսիդ, ճիտում, ճչում, խնդում, ծիծաղում։ Ու երբ որ նորեկ երգեցիկ թռչուններն էլ ձայն ձայնի տուած, ծլվլում են, կարծում ես, թե բոլոր արարածները ձեռք ձեռքի տուած, պար են գալիս, ցնծում, գուարճանում, գարնան գալը շնորհաւորում։

Ով ասես՝ որ անհամբեր չի սպասում գարնան գալուն։ Թե մարդ, թե գազան, թե անասուն և թե թռչուն՝ ամենքն էլ գարնան գալուն են սպասում, ամենքն էլ ուզում են, որ գարունը շուտով գայ և իրանց անուշ արև ու քաղցր օրեր տայ։

Ձմեռուց վերջերին ամենի կերակուրը պակասում է.— բնության կենդանիները խոտ ու յարդ է պետք,— չկայ։ Սրանք նիհարում են, և մինչև սոխանահ են լինում։

Թռչունա լեզու չունին, որ մեզ նման պարզ ասեն. «քաղցած ենք, խոտ ենք ու զուտ», բայց ամեն անգամ իրանց տիրոջը տեսնելիս՝ այնպես ազիզորմ ձայնով մնայում, բառանչում են, որ տիրոջ սիրտը կտոր կտոր է լինում։

Ի՞նչ անե խեղճ տերը։ Չէ մարաքումը յարդ չի մնացել, էլ ամառուան դրած ա-հագին գեղը չկայ։

Սարանից լաւ վիճակի մէջ չեն լինում և փայլունի անասունները, գազանները ու թռչունները, և ոչ էլ այն մարդիկը, որոնց

ձմեռուայ պաշարը հատած է լինում, էլ ոչ փառելու փայտ ու ածուխ են ունենում և ոչ ուտելու հաց։

*
* *

Ահա ամենի այս պեսակ յուսահատած ժամանակը գալիս է գարունը և իր հետ բերում նոր կեանք և ուրախութիւն։

Ինչպես ձիւնը հալվում է, կապուած ճանապարհները բացվում են, գնալ գալը թե ձիով և թե սայլով հեշատնում է։

Ինչպես ով ինչ որ չի գտնում իր պիտանի, գնում է ուրիշ գիւղից է բերում։ Ով որ քաղաք ատելու և վաճառելու բան ունի, հիմա կարոգանում է ատելը։ Գաղաքումն էլ ուժանանում է տարուան պաշարը։

Ահա թե ինչու գարունը սիրելի է բոլոր արարածների համար, մանաւանդ մանր ու մրկան երեխանց համար։

Գարունը մանում է մարտի իններին և շարունակվում է երեք ամիս։ Գարնան ամիսներն են — մարտ, ապրիլ և մայիս։

ԽՆԴԻՐ

Աղացէք ձեր գիտեցածը և գրեցէք, եթէ կարող էք — ամենից առաջ ո՞ր խոտերն ու ծաղիկներն են դուրս գալիս. ո՞ր ծառերն են ծաղկում և ո՞րը ինչ գոյնով, ո՞ր թռչուններն են գալիս։ Ինչ նոր պարապմունք է բացվում երկրագործի, այգեպանի և հովուի համար։ Հետաքրքիր ինչ կերպարանք է առնում գարունը, ինչ նշանաւոր բարիք է բերում — (արտ, հասկ, պտուղ, գառն, հորթ, կաթ, մածուն, պանիր և ուրիշ ինչ որ գիտէք, կապով շարադրեցէք)։

ԳԱՐՈՒՆՔԻ ՅԱՂԹՈՒԹԻՒՆԸ

Ծիծեռնակը համբաւ բերաւ նոր Գարունքից,
Թէ ահա նա մօտենում է մեզ գաշտերից.
Այս համբաւը երբ որ լսեց ծեր Զմեռը։
Փնթփնթալով քաշուեց գնաց ցուրտ լեռները,
Բայց Գարունը գնաց հասաւ եաւիցը,
Եւ դուրս հանեց ձիւնով պատած լեռներից.
Ձեռք ու ոտքը պինդ շղթայով լաւ կապուեց,

Մասիս լեռան սառնարանի բանդը ձգեց.
Բայց ափսոս որ այդ պատիժը շատ թեթեւ էր,
Որովհետև միայն ութ ամիս պիտի տևէր։

ՀՐԱՒԷՐ ԳԱՐՆԱՆ

Երի գարուն,
Երի սիրուն,
Բեր պարզ արև,
Ցատա անձրև,
Մեղրե Տէրէն
Հատար ցորեն։
Զմեռն էր մեծ,
Ողջ սպառեց,
Մերար, մառան
Դատարկ դառան։

ԽՆԴԻՐ ԳԱՐՆԱՆ

Կարօտ ենք տեսքիդ, անման գարուն,
Շուտ արի մեզի, բեր ծաղիկ սիրուն.
Բեր պայծառ արև, բեր մեզ տաք օրեր,
Ձմբռնոց թռչուն, բեր կանաչ դաշտեր։

Բաց մեր գանձերը, բաց մեր պատուհան,
Թող բացուին, ծաղկին վարդ, մեխակ, շուշան։
Փակուած սենեակն ելնենք ազատուինք,
Կանաչ գաշտ երթանք, խաղանք, զբոսուինք։

ՄԱՆԻՇԱԿ

Դեռ ուր է ծիծեռ, դեռ ուր է սոխակ,
Պարտեզն կարապետ եկաւ մանիշակ.
Երկնային խունկը չորս կողմը բուրեց,
Նորածին աշխարհ նախ նա համբուրեց։
Երկինքն է անուշով, շաղշղուն արև,
Տանք մանիշակին, երեխեք, բարև,
Որ մեր գաշտերին բերեց նոր գարուն,
Նախշուն հաւերով, ծաղկով գարդարուն։

ՏՈՒՆԸ ԿԱԹՈՂԻԿՈՍ Է

Պարտեզը նոր էր մտել։ Մի բանի օր եղանակը շատ գեղեցիկ էր։ Բայց մէկ էլ անձրևն այնպէս սկսեց, որ կարծես էլ դադարելու չէր։

Էլ տուն, գոմ, մարտք, մառան չմնաց, որ չլցուի։ Սմենից շատ կմտնում էր Կիրակոսի տունը։ Այդ խեղճի տանը էլ մի ցամաք անկիւն չմնաց։

Հէնց այդ դառն օրերին գաւառապետը եկաւ մեր

գիւղը։ Նա ոչ մի ցամաք տուն չգտնելով, մի վրան սարքեց, մտաւ մէջը։ Գիւղացիներից ով ինչ գանգատ ունէր, գնաց գաւառապետին յայտնեց։ Սմենից յետոյ գնաց Կիրակոսը։

Կիրակոսը մի գուարճախօս և ծաղրածու մարդ էր։ Նոքան որ տեսաւ գաւառապետը, ժպտալով հարցրեց։

— Դէ՛, ինչ գանգատ ունիս, Կիրակոս, ինչու՞ հիմա էս եկել։

— Ագա, գլխիդ ալեիդ մատաղ, տունս կմտնում է, ասաց Կիրակոսը։

— Յետոյ, էս ինչ անեմ, որ քո տունը կմտնում է։

— Ագա, աստուած չի կամենում։ Էս ինձ համար նստած՝ հաց եմ ուտում, հէնց որ ուզում եմ զգալը տանեմ բերանս, մէկ էլ տեսնում — ծրշլի — կաթիլ զգալիս մէջին։ Էլ չի թողնում, որ հալալ հաց ուտեմ։

— Լաւ լաւ, բայց էս ինչ կարող եմ անել։

— Ագա, աստուած էս ինչ ասում եմ, որ քո տունը չի կամենում, սա մի ջոկ բան է։ Էս ինձ համար ստեղծած բնութիւն եմ լինում. գլուխս կարպետի տակիցը հանում եմ, որ տեսնեմ յուսացել է, թէ դեռ մութն է։ Հէնց որ աչքս բաց եմ անում որ հերթին մարդի տամ, մէկ էլ տեսնում — ծրշլի,— աչքիս մէջին... քա սրան մի գաւառապետ չկայ։

— Ինչու չբերար, էլի կրցաժարիս։

— Կրցաժարիմ, ագա, կրցաժարիմ, ինչ որ դու կըհրամայես, էս լաժար եմ։

— Լաւ լաւ։ Քո տունը կամենալու համար դուռ պէտք է այնքան օր բանտումը նստես, որքան օր որ կամենալ է։

—Վա՛յ, ապա, այդ ինչ ես հրամայում։ Ես էլ հէնց իմացայ, թէ մի լաւ բան պիտի ասես։ Համ իմ տունը կայթի, համ էս քանտ նստեմ, այդ ինչ դատաստան է։

—Շատ լաւ դատաստան է և շատ էլ արդար։ Եթէ մի կծատոզ շուն լինի և չկապեն նրան, նա էլ ապրան նստրան կծի, դորա համար ու՞մ կըպատժես դու, շանը՞, թէ տիրոջը։

—Ի հարկէ, տիրոջը։ շանիցը խօմ տուգանք չենս առնիլ, պէտք է տիրոջիցն առնես. շունն ինչ գիտէ պատիժն ինչ է։

—Ուրեմն քո հօր։ Ես էլ հէնց քո բերանովը կանեմ քո դատաստանը։ Քո տունը խօմ ինքը չի իմանում, որ կայթում է. բայց դորա համար դու պատժի արժանի ես, որովհետև այն տեսակ հող չես ածում և այն ձևով չես շինում, որ չը կայթի։

—Հա՛... ապա, դու ինձ լաղթեցիր։ Ես հէնց իմացայ, թէ քեզ կը կապեմ, բայց չեղաւ, լաւ տեղ չըմիթնացրի. ասաց Կիրակոսը և գլուխը քորելով դուրս գնաց։

ԱՌԱԾՆԵՐ

Տուն կայ՝ տուն է, տուն կայ՝ հաւի բուն է։— Ալրիլ կայ՝ արծաթ է, ապրիլ կայ՝ երկաթ է։— Մի խելօքտ մարդի ասեցին. «Քիմիդ ինչու չես արբում», ասեց. «Խեղճ եմ»...

ԽՈՋԱՐԱԾԻ ԲԻՆԱ

Խիտ անտառի մութ խորքումը
Մի տեսակ խուզ կայ շինած,
Անգուռ, անպատ, անպատսպարան,
Գերաններ են թեք դրած։
Ցերեկն այնտեղ մարդ չի լինում,
Թէև լիքն է պաշարով,
Թուրքեր, քրդեր չեն մօտենում,
Խուզը մնում է ապահով։
Միակ շէնքն է, որ ազատ է
Գող թուրքերից, քրդերից,
Որովհետև խոզի մսի
Հոտ է գալիս նորանից։

ԿԻՐԱԿՈՍՆ ՈՒ ՎԱՐԺԱՊԵՏԸ

Մէկ անգամ գիւղի վարժապետը Կիրակոսին ասեց.

—Կիրակոս, փափախդ շատ է մեծ, մի քիչ փոքրացնել տուր։

—Չեմ կարող, գլուխս կըմրսի, — պատասխանեց Կիրակոսը։

—Կիրակոս, ինչու կօշիկ չես հագնում, մէթէ նա տրեխից լաւ չէ։

—Չեմ կարող, ոտներս եարա կըդառնան։

—Կիրակոս, ինչու մի քանի փոխնորդ չես պա-

հում, որ միջառներից ազատուի։

—Ինչի՞, նրանք Աստուծու ստեղծածը չեն...

—Ա՛յ Կիրակոս, առանց խոնարհ է, ոսկրացաւ կընկնիս, երեխէքդ կը կատրուին։

—Որ տունս չար լինի, մահից կրպրծնեմ։

—Կիրակոս, պարապ մի նստիլ, ափսոս է ժամանակը, գաւ ինչու ես կորցնում. գնա մէկ օրավար էլ ցանիր։

—Է՛հ, բանդ կարուել է. Աստուած որ տայ, մի ակոսիցն էլ կըտայ։

***

Կիրակոսին ինչ որ ասում էր վարժապետը, նա իսկոյն մի սուր պատասխան էր տալիս, որ ցոյց տայ, թէ ինքը վարժապետից պակաս խելօք չէ։

Ճշմարիտ որ Կիրակոսը լիմար մարդ չէր, ինքն էլ էր իմանում, որ իր ասածը ճշմարիտ չէր, բայց ծոյլ էր և իր ծուլութիւնն աշխատում էր որախօսութիւնով ծածկել։

Վարժապետը նորա պատասխաններն առաջուց գիտէր, ուզում էր միայն խօսեցնել և կատրել նորա յամառութիւնը։

—Կիրակոս, դու էլ ես իմանում, որ այդպէս չէ,— շարունակեց վարժապետը,— դու էլ ես իմանում, որ Աստուած աշխատողին կրտայ, որ նա շատից շատ կըտայ, քչից՝ քիչ։

—Ի հարկէ, այդպէս է, բայց...

—Էլ ինչ բայց... երբ որ գիտես, թէ այդպէս է, էլ որ օրուան համար ես պահում քո խելքն ու հասկացողութիւնը։

...Պատուն վարժապետ, գիտես ինչ կայ, դու ու-

զում ես որ ինձ շակես, բայց ես շակվող պտուղ չեմ, միանգամ ծառուել եմ, այնպէս էլ պիտի մնամ, շատ որ զօռ անես, կրկոտրես, բայց չես շակիլ։ Մենք մեծերս ինչ կանք՝ կանք. երևի մեր բախտն էլ այսպէս է։ Բայց ահա քո այդ փոքր աշկերտները որ կան, փափուկ մոմի պէս բաներ են. դրանք հիմա մի մի պատրուք են. կուզես՝ կը վառես, կուզես՝ կրհանգցնես։ Դրանց լուսաւորիր, թող գրանք պնեն այն, ինչ որ մեզանից պահանջում ես։

Վարժապետը շատ ուրախացաւ, որ Կիրակոսիցը այս խելօք խօսքերը լսեց։ Ցեսաւ որ ճշմարիտ նորա չափ հասակն առած մարդիկը չեն կարող փոխուել, այնուհետև իւր ըղձոր ուշադրութիւնը դարձրեց փոքր մանուկների վերայ։

ԱՆՎՆԱՍ ՀԱՊԵՈՊՈՍ

Իմ գլխիս պէտք է մի թեթև գլխարկ,
Որ ինձ պահպանէ ցրտից, արևից,
Թէկուզ ճակատը զաշգա չըլինի,
Այդ վնաս չունի։
Մի բաճկոն է պէտք պինդ շալից կարած,
Որ ինձ պահպանէ ցրտից արևից,
Թէկուզ կոճակը ոսկուից լինի,
Այդ վնաս չունի։
Ոտներիս համար պէտք են կօշիկներ,
Որ ինձ պահպանեն ցրտից արևից,
Թէկուզ հասարակ և անբիտ լինի,
Այդ վնաս չունի։

ՄԵԾ ՊԱՍԸ

Մեծ պասն ու Զատիկը շատ նման են միմեանց։

Մեծ պասը ապաշխարութեան պաս է. ախորժ միայն, որ առելի նրանք են ապաշխարում, որոնք ոչին, մեղք չունին։

Մեծ պասին քաղցր կերակուրներից զրկվում ենք և ուտում թթու, կծու, դառը, աղի, տաքիպ և ամեն տեսակ անհամ և անշիթ բաներ։

Զատիկը որ գալիս է, պրծնում ենք այդ տեսակ կերակուրներից։

Զատիկը որ կայ, Մեծ պասի Գարունն է։ Կարծես հարապատ եղբայրներ լինին— Զատիկն ու Մեծ պասը և Գարունն ու Զատիկը։

Մեծ պասի վերջերին դաշտային տեղերումը հանում են տեսակ տեսակ կանաչեղէններ ու սունկներ, բայց դրանք ամենն էլ միևնոյն գաւառումը չեն լինում։

Մի տեղ լինում է փիփերթ և սուլուկ, մի տեղ կրմզուկ, ճնեփակ և խազազ.

մի ուրիշ տեղ՝ տոմբալան, խնջլոզ, շրեշ և ուրիշ կանաչեղէններ։

Այդ խոտերը եփում են դառը կամ քաղցր ձիթով և կամ շորշոր։ Գաւառացիները հանդումը եղինջ են ուտում, որ առաջ ապով տրտրում են բուռներումը. ուտում են և կոթխաշ տուած ճնեփակ, որ շատ համեղ է լինում։

*

Եթէ Մեծ պասը ձմեռաւայ կարճ օրերին լինէր, շուտ անց կըկենար, բայց՝ մեծ պասին օրերը երկարում են։ Օրէնը հինգ անգամ հաց ենք ուտում, էլի չենք կշտանում։

Լոբին ու սիսեռը, ոսպն ու մաշը, բակլան ու կարտոփիլը՝ թէպէտ բարի պտուղներ չեն, բայց ամեն տեղ չեն էլ գտնվում, որ էլի՝ ինչ կուզի լինի՝ սոխ ու սխտորից, զոխ ու բոխից աւելի անուշ կրտան մարդու։

ՕՐՈՐՈՅԻ ԵՐԷ

Աբի իմ սոխակ, թող պարտէգ, մերին,
Ծաղերով քուն բեր տղիս աչերին.
Բայց նա լալիս է. դու, սոխակ, մի գալ,
Իմ որդին չուզէ տիրացու գալնալ.
Էկ, արեզակդ, թող ոչ ոք ոչ աքօտ,
Օրօրէ տղիս, քընի է կտրօտ.
Բայց նա լալիս է. դու, ձագուկ, մի գալ,
Իմ որդին չուզէ արեզակ դառնալ.
Թող դու, տատրակիկ, քու ձագն ու բունը,
Վանկուլով տղիս բեր տնուշ քունը.
Բայց նա լալիս է. տատրակիկ, մի գալ,
Իմ որդին չուզէ սգաւոր դառնալ.
Կաչաղակ ճարպիկ, գող, արծաթասէր,
Ճահի գրուցով որդուս քունը բեր.
Բայց նա լալիս է. կաչաղակ, մի գալ,
Իմ որդին չուզէ սովգտագոյ դառնալ.

* * *

Թող գրարգ, արի, քաջաձիրա բազէ,
Քու երգը գուցէ իմ որդին կուզէ,
Բազէն որ եկաւ, որդիս լռեցաւ,
Ռազմի երգերի ձայնով քնեցաւ

ԾԱՂԿԱԶԱՐԴ.

Մեծ պատը ամբողջ վեց շաբաթ տխուր ու բարկացած մնալուց յետոյ, յանկարծ ոկսում է ծիծաղել, խնդալ, ուրախանալ:

Այդ լինում է Ծաղկազարդին:

Ամբողջ տարուայ մէջ եկեղեցին ոչ մէկ անգամ այնպէս լիքը չի լինում, ինչպէս Ծաղկազարդի գիշերը:

Մեծ ու փոքր, ծեր ու մանուկ, մարդ ու կին, նորահարսներ ու նորափեսէք, նշանած ու նշանուելու ազերք ու աղջկերք, հանդերից հաւաքուած տատրակներ, հովիւներ, խաղաբաներ,— մի խօսքով ամենքը ամենքը Ծաղկազարդի գիշերը ժամումն են լինում:

* * *

Ինչ որ մտնում ես եկեղեցին, կարծում ես թէ մի հարսանքատուն ես մտել: Ամենքն էլ իրանց հին ու կեղտոտ հագուստը փոխած, նոր զարդարանքներով զարդարուած, մաքրուած, գեղեցկացած:

Եկեղեցու պատերի, սիւների, ջահերի, աշտանակների վերայ էլ տեղ չի լինում, այնքա՞ն մոմեր են լինում վառած։ Բացի դրանցից, ամեն մի հոգի մէկ—երկու վառած մոմ էլ ձեռին է ունենում բռնած։ Նշանած աղջկերանց ձեռքի մոմերը ոսկի վարազով նախշած են լինում։

***

Եկեղեցու մէջ այնպիսի աղմուկ է լինում, որ չի լսվում, թէ տէրտէրն ինչ է ասում, տիրացուն ինչ։

Փոքր երեխայոց ճիչն ու աղաղակը, հարսների, քչփչոցը, տատարածների քըրքջոցը, ծերերի հաղալը, ժամհարի բարկանալը, այդ ամենը իրար խառնուած, եկեղեցին շինում են մի՝ ճշմարիտ որ՝ հարանքատուն։ Ռուսանն ու ճշանակն էլ միասին, հարիւր երեխայի ձեռքում, մի այնպիսի աղմուկ ու աղաղակ են բարձրացնում, որ կարծես եկեղեցու պատերի բոլոր քարերը լեղու առած՝ գոռալիս լինին։ Եւ շատ ճիշտ է կատարվում այն ասածը, թէ՝ «Լեթէ մարդիկը լռեն, քարերը կաղաղակեն»։

Այս խօսքը Բրիատոսի ասածն է։ Նա որ Երուսաղէմ էր մտնում, քաղաքի բոլոր երեխայքն ու ծերերը գնում են նորա առաջը՝ ձեռքներին ճիթենու և արմաւենու թարմ ճիւղեր բռնած, և միաբերան կանչում են—

—Ովրա՞վ, հաղա՞ր բարով ես գալիս Դու, օրհնեա՞լ և բարի՞ լինի Քո գալուստը, Քեզ Աստուած է ուղարկել մեզ մօտ, որ մեզ ազատես գերութիւնից...

Այս որ լսում են քաղաքի իշխանները, սատանի բարկանում են և ասում են Բրիատոսին.

—Նա այդ մանուկներին ու ծերերին որ լռեն և քեզ այդքան փառք ու պատիւ չրատան։

Այդ ժամանակ Բրիատոս նրանց պատասխանում է.

—Լեթէ սրանք լռեն, քարերը կաղաղակեն։

***

Ծաղկազարդը իւր այս կերպարանքով մեր այն տօներից է, որոնց մէջ մարդ-

կայինը ասպատածայինի հետ, երկրայինը երկնայինի հետ, ազգայինը եկեղեցականի հետ, այսպէս հաշտ ու գեղեցիկ կերպով խառնուած, միացած է։

Այս ամէն մէջ մարդ աշխարհս տեսնում է, որ մեր Փրկիչ Յիսուս Քրիստոսը, նա որ այնքան սիրում էր երեխանցը և գեղեցիկ խրատներ էր տալիս,— մտել է մարդկանց մէջ, և ուրախակից է նրանց ուրախութեանը։

Ահա ուրի ձգներից մեծ մեծ խուրձեր կապած՝ դրած են եկեղեցու մէջ տեղը։

Երբ որ ժամանակը հասնում է, վրայ են թափվում և կոտրտում։

Պէտք է տեսնել, թէ ի՞նչ ճրթճրթոց է բարձրանում, ի՞նչպէս շտապում են ամենքն էլ, որ մի մի ճիպ ունենան ձեռներին և նրանով գիմաւորեն Քրիստոսին, ինչպէս որ գիմաւորել են Նրան Երուսաղէմացիք արմաւենու և ձիթենու ճղներով։

***

Երբ որ ժամասացութիւնը վերջանում է, դեռ լոյսը բացուած չի լինում։ Ամենքն

էլ դուրս են գալիս և տունն գնում խումբ խումբ, ճղները ձեռքներին, վերան մոմեր վառուած։

Այս ուրախ կոմ ցրուելով, ամբողջ գիւղը լուսաւորվում է։ Ամեն դռան, ամեն կարի, ամեն փողոցում լոյս է երևում և ամեն կողմից ուրախութեան ձայներ են լսվում։

Վերջապէս ամենքն էլ մտնում են իրանց տները, ճղները խրում են պատերի ապանքները և տուրքի պէս պահում։ Մոմերն էլ հանգցնում են, որ երբ Աստուած մի ապատգէ տան մէջ մի նեղութիւն պատահելու լինի, կամ կարկուտ լինի գալիս, վառեն։

Այսպէս ամենքն էլ ուրախ են լինում այդ օրը, ամենքն էլ հաղորդվում են. բայց ամենից շատ ուրախ են լինում այն նշանուած աղջկերքը, որոնք խնամունց տունից լաւ բնծայ են լինում տացած եկեղեցումը։

ԽՆԴԻՐ

Պատմեցէք և գրեցէք, ի՞նչպէս է կատարվում Ծաղկազարդի տօնը ձեր գիւղումը կամ քաղաքումը։

ԾԱՂԿԱԶԱՐԴԻ ԵՐԳ

Ճչանակ, ճրչա՛, ճչա՛,
Ճռճռան, ճռռա՛, ճռռա՛,
Մեծ պատին զարթեցրէք,
Մեր աշխարհից փախցրէք։
Զգուեցանք դառը սոխից,
Կշտացանք գոխ ու բոխից,
Լոբին փորներս ուռցրեց,
Մախոին էլ լաւ պատրաստեց։
Բոստաններս այրուեցաւ,
Ցանքերս կարուեցաւ,
Ճչացէք, ճռճռացէք,
Մեզ դրանցից փրկեցէք։
Ճչանակը ճչաց,
Ճռռանը ճռռաց,
Մեծ պատն անցաւ,
Զատիկը եկաւ։

ԶԱՏԻԿ

Ծաղկազարդից մի շաբաթ անցած՝ գալիս է Զատիկը։ Այդ վերջին շաբաթը այնքան երկարանում է երեխայոց համար, որ նրանց թվում է, թէ մեծ պասը էլի նոր մէկանց սկսուել է։

Երեխայքը մի մի կարմիր ձու ձեռքներն առած, մտիկ են տալիս վերան, բերանների ջուրը գնում է, բայց ուտելու իրաւունք չունին։ Պաչպչորում են, գնում գրպաններումը, մէկ էլ հանում, մէկ էլ պաչպչորում, գնում ծոցներումը, էլի հանում, էլի պաչում...

Խեղճ երեխայքը այսպէս տանջվում են, մինչև լսում են զանգակի ձայնը, վազում են եկեղեցին, ձուն կճաղում, պատրաստ պահում, և հէնց որ տէրտէրն ասում է «Առէք կերէք», իսկոյն բերաններն են ձգում։

Վերջապէս ժամը դուրս է գալիս, ամենքն էլ իրար զատիկ շնորհաւորում են ասելով՝

«Քրիստոս յարեաւ իմեռելոց»

* * *

Զատիկը Քրիստոսի յարութեան յիշատակն է։ Հրէաները Քրիստոսին խաչեցին խաչափայտի վերայ, այնպէսն ինչպէս որ տեսնում էք եկեղեցումը, լեռոյ թաղեցին, բայց նա երեք օրից յետոյ կենդանացաւ, վեր կացաւ գերեզմանիցը, գնաց իւր աշակերտների մօտ և ասաց նրաց.

—«Ահա տեսնում էք, որ ես կենդանի եմ։ Դէ գնացէք այսուհետև ամեն երկրում և ամեն ազգի մէջ քարոզեցէք, որ ես կենդանի եմ և կենդանի կլինում

միշտ այն մարդկանց սրտումը, որոնք կըհաւատան իմ աստծներին և կըկատարեն իմ պատուիրանքներն»։

Աշակերտներն էլ տարածուեցան ամեն կողմ, ամեն աշխարհք և Քրիստոսի աստծները քարոզեցին։

Այդ քարոզութեան օրինակն է, որ Զատկին տերտերը պատրաստում է ժողովրդի մէջ և ամենի տունը օրհնում։

ԶԱՏԿԻ ԵՐԳ

Հողմը հնչեց ի հարաւէն,
Ազատուեցան դաշաք ձիւներէն,
Բերկրութիւն է ամեն ազգ,
«Քրիստոս յարեաւ ի մեռելոց»։

Առուները խոխոջացին,
Ծառերն բողբոջ արձակեցին,
Օդը լի է ձայնիւ թռչնոց,
«Քրիստոս յարեաւ ի մեռելոց»։

Տղայ, ազջիկ ուրախ, գուարթ,
Փթթեցան գերդ մայիսի վարդ,
Ախ, քէն չունի սիրտը մարդոց,
«Քրիստոս յարեաւ ի մեռելոց»։

Քրիստոս յարեաւ... կասկած չիկայ,
Բնութիւնն համայն է մեզ վկայ,
[illegible]

ԱՄԱՌՆ

Տարուայ եղանակները այնպէս են յաջորդում միմեանց, ինչպէս մարդուս հասակը։

Գարունը երեխայի նմանութիւն ունի։ Գարունքին ամեն ինչ փոքր է, ամեն ինչ նոր է ծլում, բողբոջում։ Թռչնիկները դեռ ոչ ձու ունին, ոչ ճագ։ Նրանք աշխոյժ և ուրախ մանուկների պէս անդադար թռթռում, անդադար թռչկոտում են, և դրանցից շատերը իրանց կեանքի մէջ առաջին անգամն են բոյն շինում։ Մի քանի բոյրն էլ, ինչ որ տեսնում ենք գարունքին— խոտ, ծառ, ծաղիկ, ճանճ, բզէզ,— ամենքն էլ երեխայի կերպարանք ու բնաւորութիւն ունին։

Երեխան քիչ քիչ, աճում, զարգանում է։ Այդ աճման շարժուելը մենք չենք տեսնում, բայց մէկ էլ տեսնում ենք մեծացած, հասակն առած։ Գարունքն էլ այսպէս մեծանալով, օրէցօր նորանոր գեղեցկութիւններ ցոյց տալով, մտնում է իւր երիտա-

սարդութեան հասակը, այսինքն դառնում է ամառն, յետոյ էլ աւելի չափահաս է դառնում, այսինքն աշունքանում է, և վերջապէս ծերանում է և ապիտակում, ինչպէս ձմեռը։

***

Ահմարիա որ՝ գարնանային օրերը քանի գնում, երկարանում են և աւելի տաքանում։ Ծաղկազարդ ծառերը փոխում են իրանց ծաղկեայ բարուրն ու պատմուճանը և զարդարվում աւելի խիտ ու պինդ հագուստով, այսինքն լայն լայն տերևներով և նրանց մէջ թաքցնում իրանց գոյնզոյն և անուշահոտ պտուղները։ Քանի որ անմեղ երեխայ էին, իրանց կիսամերկութիւնից չէին ամաչում։ Ինչպէս Ադամը, որ երբ արգելուած պտուղը կերաւ, իր յուսեղէն և ծաղկեայ պատմուճանից զրկուեցաւ, և ծածկուեցաւ լայն լայն տերևներով. որովհետև երեխայական անմեղութիւնը կորցրել էր և սկսել էր ամաչել իր մերկութիւնից։

***

Երեխաների բերանների ջուրը գնում է, երբ որ տեսնում են նորափթիթ պտուղները,—շլորն ու ծիրանը, տանձն ու խնձորը, հաղարջն ու կեռասը, գեղձն ու դամոնը։

Էլ այնքան համբերութիւն չունին, որ սպասեն մինչև նրանց լաւ հասունանալը։

Խակ խակ ուտում են, բերաններն առցնում, այնպէս որ՝ էլ հաց ուտել չեն կարողանում, թէև փորները վեց վեց է անում։

Եթէ մանուկներն իմանային, թէ որքան վնասակար են խակ պտուղները, թէ ատամներին և թէ իրանց առողջութեանը, երբէք չէին ուտիլ։ Ահաւասիկ նրանց իմաց է տալիս, ասում է՝ «խակ է, թթու է, դեռ ուտելու ժամանակ չէ, մի՛ ուտէք», ասամներն աւելի են կրճատում, բարկանում, թէ «էլ չենք կարողանում կրծել, մեզ մի՛ տանջէք», բայց կամակոր ու անմիտ մանուկները ուտում են և պատիժն էլ կրում, թէպէտ իրանք չեն հասկանում, թէ այն ցաւը, այն ջերմն ու տենդը ինչից հանդիպեցաւ իրանց։

***

Վերջապէս խակ պտուղները միմեանց եռեւից հասունանում են: Կեռասը գեղնում կարմրում է և թուշերը պլպլացնում: Սև ու սպիտակ թութը ծածկում է ծառի յատակը: Կանաչ վարունգի հոտով ամբողջ բուրաստանը բուրում է: Դօրա եռեւից հասնում են և սեխն ու ձմերուկը, անուշահոտ ու նախշուն շամամը:

Ամառը երկրագործի աշխատութեան ամենաթունդ ժամանակն է: Երկրի բերքերը այնպէս շուտ շուտ են հասնում իրար եռեւից, որ եթէ տան մէջ աշխատող ձեռքերը շատ չը լինին, մենակ մարդը կը ձանձրանի, և ոչ մի բան էլ չի կարող անել:

Դեռ գարունքամարը, ցել անելը չը վերջացրած, խոտը գալիս հասնում է, որ եթէ շուտ չը հարուի, կը վազանի, այսինքն հարելու ժամանակը կանցնի, կը փչանայ: Ձեռք է գարկում խոտին, միւս կողմից գարին է հասնում: Եթէ թութն ուզենի, արագ պիտի քաշի, նա է թափվում ծառերից. եթէ այգի ու բանջարանոց ուզենի, նրանք էլ այնտեղ են շորանում, ջրուել են ուզում: Մինչ այս մինչ այն, աշնանացանն է հասնում, նորան հետևում է գարնանացանը:

Եթէ գաշտային տեղ է գիւղը, պէտք երեխէքը, տատարը տարը տանել. ամենուան շրջերին նրաց գաշտումը կարելի չէ պահել. բայց տարումն էլ նրանց պահող պահպանող պէտք է:

Հունձն ընկնում է, մշակ չի ճարվում: Մենակ մարդն ի՞նչ կարող է անել, օ՞ր մէկին հասնէ: Մինչև մէկ արտը կը հնձի, միւսը կը կծղի:

*

Այսպէս երկրագործի ամառնային աշխատութիւնը այնքան շատ է և բազմակողմանի, որ մի հոգին ամեն բանի հասնել չի կարող:

Այս հանգամանքը մէկ լաւ պատճառ է, որ ամենքն էլ ընկերովի աշխատեն, եղբարքը միմեանցից շատ չը բաժանուին, մինչև որ հասած որդիք չունենան. դրացին դրացու հետ ամեն բանում հարբաքաշ լինի, այսինքն աշխատակից, ընկերա-

կից։ Եւ առաջ չէնց այսպէս են եղել ամենքը։ Բայց հիմա այդ ընկերութեան, եղբայրութեան ոգին վերացել է մեր գիւղերից։

Ամառնային աշխատութեանը շատ մեծ օգնութիւն են անում և մանր երեխայքը, թէ աղջիկը և թէ ագռկիկը։ Արանք եղնեերը պահում են. խոտ ու խոտրձ բաթելիս՝ սայլի առջև կանգնում են, հոտաղութիւն են անում, բանւորներին հաց ու ջուր են տանում։ Ամեն բանում թեթեւաշարժ սուրհանդակի պաշտօն են կատարում, արագ արագ ոտոտալով և ուրախ ուրախ թռչկոտելով։ Բայց լինում են շատ ծոյլ, իլաքանջ, գանդաղ և անպէտք երեխայք էլ որոնք ոչ մի բանի պէտք չեն գալիս։ Էփսո՞ս այդպիսիների կերած հացը։

Տղան ամեն բանում պէտք է քաջ և ճարպիկ լինի, աշխատելուց չը պիտի փախչի, բանից չը պիտի վախենայ, ամեն բան, ինչ որ ձեռքիցը կըգայ, պիտի անի։ Կարգալու ժամանակը պէտք է կարդայ, խաղալու ժամանակը խաղալ, բայց բան ու գործ

ծի ժամանակն էլ պէտք է բանել, գործել։ Դեռ լաւած չէ, որ աշխատելուց մարդ վնասուած լինի, բայց չաշխատելու և ծուլանալու վնասը ամեն օր տեսնում ենք։

**
*

Ամառը մի գեղեցիկ պատկեր է ժրաջանութեան և աշխատասիրութեան։ Ձմեռն ուսումնարանումը այնքան բան չի կարող սովորել երեխան, ինչքան ամառը գաշտումը, թէ աշխատելով և թէ իւր չորս կողմի երեւոյթների վերայ նայելով։

Ամեն մի ծառ, ամեն մի թուփ, ամեն մի գեռուն շարժման մէջ է, գործի և աշխատանքի վերայ է։ Շերամը կամաց կամաց իւր մեռաքան է գործում սուս ու փուս, մեղուն իւր բջիջներն է մեղրով լցնում, մրջիմը իւր ձմեռուայ պաշարն է առնում։ Թռչուններն իրանց ձագուկներն են շահացնում։

Յիրաւի, ինչքա՞ն տեսնելու բաներ կան։ Շերամի կերպարանափոխութիւնը, թրթուրների թեւաւորուիլը, շերեփուկների գորգ գառնալը, մեղուների ձագ տալը, թռչունների բոյներն ու ձուները, տեսակ տեսակ բզէզներ, գեռուններ, սողուններ, ճկնիկներ,

խոտեր, ծառեր, ծաղիկներ, բոլորն էլ իրանց կեանքի կայտառ ու երիտասարդ ժամանակ...

* * *

Լակ ինձ, (որովհետև ես հիմա երեխայ չեմ, որ պէպէնակների եռեւից վազվզեմ, որ տեսնեմ որը որից աւելի նախշուն է)— ինձ ամեն բանից շատ դուր է գալիս այն, որ այդ ընդհանուր աշխատութեան, այդ ընդհանուր գործունէութեան մէջ տեսնում եմ մի շատ գեղեցիկ ներդաշնակութիւն,— մի ութիւն։

Ամեն բանի մէջ մի խմբակցութիւն, մի կապ, մի միութիւն կայ։ Ի՞նչ բան է՝ օրինակ՝ արտը, եթէ ոչ մի խումբ անհամար ցողունների, որոնք իրար վերայ յենուելով, իրար վերայ շուռաք անելով միասին աճում, միասին հասնում և մէկին վաթսուն և հարիւր պտուղ են տալիս։

Ի՞նչ գեղեցկութիւն կունենար մի ձմերուկ, եթէ նա մեն մենակ ընկած լինէր մի դաշտի մէջ։ Բայց ուրիշ գեղեցկութիւն ունի բուրաստանը, ուր հարիւրաւոր ձմերուկներ կողք կողքի պառկած՝ իրար ականջի քըշփշում են, թէ այն օրը պարտիզպանը իրանցից քանի հատ պոկեց։ Կարծես անհամբեր սպասում լինին, թէ երբ պիտի իրանք էլ կտրուին, բացուին ու մարդկանց երեսին ծիծաղելով՝ նրանց ծարաւը զովացնեն։ Չմեռ ողջութիւն կրլինի, եկող տարի այս մասին աւելի երկար կրխօսիմ, յուսալով, որ արդէն շատ բան կրհասկանաք և լաւ կրմիանէք իմ միտքը։

Ամառնային ամիսներն են— յունիս, յուլիս և օգոստոս։

ԱՂԱՍԻՆ ԴԱՇՏՈՒՄԸ

Աղասին որ հանդն էր գուրս գալիս, իր բերքն ու պտուղը, դաշտերի ծառն ու ծաղիկը, երկնքի, պայծառ արեգակի, լուսնի, աստղերի լոյսը տեսնելիս՝ նրա հոգին, վերանում էր, խելքը թռչում, շատ անգամ աչքերը ծով դառած, տեղն ու տեղը մնում կանգնած, հէնց իմանում էր թէ իրան դրախտը տարան։

Ձեռները կցում էր, գլուխը բաց անում, երեսը մէկ երկինքը, մէկ երկրի վրայ գցում, հոգոց հանում ու ցանկանում էր որ կանչի-

—«Ա՜խ, ո՞վ ես դու, ո՞վ, Հոգուդ մատաղ, Աստուած, որ այսպան բարիքը ստեղծել ես մեզ համար։

«Ա՜խ, ինչի՞ չես քո սուրբ երեսը մէկ օր մեզ ցոյց տալիս, որ ոտներդ ընկնինք, մեր սիրտը, մեր Հոգին քեզ մատաղ տանք։

«Թէ ասեմ երկիրն է միայն գեղեցիկ, հազար ծաղիկներով, բոյսերով զարդարած, բա երկինքն ո՞ւր թողեմ, որ ցերեկն ինձ լոյս է տալիս, հանգիս պտուղը հասցնում, գիշերն էլ մութն իմ աչքից հեռացնում, ու այնպէս վրանի նման գլխիս կանգնած, անձրև, արև տալիս, որ ես ապրիմ, որդիքս պահպանեմ, աշխարհքին պէտքը գամ, որ մեռնելիս էլ գան Հողիս վրայ կանգնեն, ինձ մէկ դարդակ ողորմի ասեն։

«Ա՜խ, երկնային թագաւոր Աստուած, քանի աչքս բաց եմ անում, քո արարած աշխարհը տեսնում, սիրտս կրակ է դառնում, աչքս ծով, ճնում եմ ապրացած, ջնուցած, բայց ա՜խ, ոչ այս կրակն է ինձ այրում, ոչ այս ջուրն է ինձ խեղդում։

Աչքս մոլորուած, այս թուփից այն թուփը, այս սարից այն սարն է ընկնում, ծառի տակին ասես, սարի գլխին ասես, մարիկ անելով, աչքս շաղվում, ջուր է կտրում։

Լէնց իմանաս մէկ ձայն, մէկ թև, մէկ անտեսանելի Հոգի — տերևները խշշալիս, թռչունը թռչելիս, աղբիւրը քչքչալիս, բիւլբիւլը երգելիս, հովը փչելիս, շաղը երեսիս թափելիս, ամպը գոռալիս — ինձ ձայն ըլի տալիս, ինձ ձեռով ըլի անում, ինձ վրայ խնդում, թէ «վայելի՛ր Էատունք, Հողածին մարդ, բարի կաց, բարութիւն արա։ Աբարչիդ մեծութիւնն ու փառքը ճանաչիր, ծառի պէս պտուղ տուր, ծաղկի պէս հոտ, սարի պէս աղբիւր, դաշտի պէս բերք, երկրի պէս հաց, երկնքի պէս լոյս։ Վայելիր Աստուծոյ բարութիւնը, ուրիշին էլ բաժին տուր։ Աղքատ տեսնելիս՝ ուտացրու, կշտացրու։ Թռչունը վրովդ անց կենալիս՝ կանչիր, կուտ տուր, գու տուտ ձեռն ունեցիր, որ տուտ տանես ու բախտաւոր լինիս»։

Ա՜խ, բոլորը կանեմ, կեանքս ուզեն, չեմ խնայիլ, բայց ի՞նչ կըլինի, ով Տեր

իմ և Աստուած, որ այդ հոգին մէկ օր ինձ երևի, որ այսպէս կարօտ չլինեմ, չայրուիմ, չմաշուիմ նրա սիրուից։ Աղաչում էլ որ մէկ նրա պատկերը տեսնէի, էլ որտումս ցաւ չէր մնայ, էլ այսքան չէի կարօտ լինիլ ու տանջուիլ։

Թէ դու ես նրան ուզարկում, ով աէր իմ և Աղաչիչ, ինչի՞ չես հրամայում, որ մէկ օր, մէկ օր, գոնէ մէկ բոպէ, մէկ աչքս բաց ու իսուփ անելիս, նա մէկ աչքուս ընկնի, նրան տեսնեմ, սիրտս հովանայ, ու էլի նրա տատն անեմ, լեռնիս թիքէն հանեմ, ուրիշին ուտացնեմ, հագիս շորը հանեմ, ուրիշի լաշը ծածկեմ, որ իմ հօրն ու մօր սիրտն էլ ուրախանայ, ասեն թէ Աստուած իրանց բարի դատակ է պարգևել, որ իրանց խրատը գեսինը չի գցում, իրանց բարի ճանապին է հեռում, իրանց տատն անում...

ՊԱՐՏԻԶՊԱՆ

Ամառն է։ Կարծես կրակ է բարձրանում
Գետնի երեսից և հուրհրատում,
Ոչ շունն է հաչում, ոչ ճիճին երգում,
Գարան էլ է լռել, էլ չի կրկռում։
Ամենքն էլ փախել, հով տեղ են գտել,
Իրանց բներում լռուել, պապանձուել.
Միայն մի հատիկ մարդ է երևում
Խորընկած դաշտում, առուի եզերքում։
Կանգնած է մարդը արևի տակին,
Ոտն ու ծունկը բաց, բահը դրած ուսին.
Մի շապիկ միայն ունի նա հագին
Եւ մի սպիտակ թաստակ կայ գլխին։
— Բայց ինչ մարդ է նա և ինչ է շինում,
Արևի տակին ինչու է այրվում.
— Նա պարտիզպան է, պարտէզ է ջրում,
Սեխն ու ձմերուկը նա է հասցնում։

ԱՄԱՌՆ ԵՐԵՔԱՆԴԻՄ

Ա.

Ճաշուայ շոքն անց էր կացել։ Սար ու ձոր գլխնեբը էլ ետ բարձրացնում էին, որ փոքր շունչ առնեն։ Արեգակը Մասիսի քամակիցը հանգարտ աչքը բաց էր արել, մունջ մունջ Երևանու բերդին էր մտիկ տալիս և ուզում էր, որ կամաց կամաց մայր մտնի։

Թանձր խաւարը, սև մառախուղը եկել, բոլոր դաշտերի, ձորերի, երեսը բռնել, օգը ծանրացրել, կալել էր։

Թռչունը տեղիցը չէր ուզում շարժի, հաւը ընիցը գլուխը հանի։ Ամեն տեղից ոտքը խաղաղուել, ամեն տեղից ձէն ու ձոր լռուել, պապանձուել էր։

Ջուր ջրողը առուի վրայ էր թեք ընկել, քնած մնացել, վար ու ցանք անողը հանգումը, այգեպանը՝ իր ծառի տակին՝ շուաքումը քուն մտել, հանգստացել։ Մարդ, ինս, ջինս, գիշերումը էլ չէին երևում։ Բազի կոնդի ծայրից, բազի սարի լանջից, բազի ճանապում, հանդում, մէկ սև մազի չափ զարալիս սևին էր տալիս, ձիու քամակիցը գէս ու դէն թեքվում, երեսի, քամակի վրայ շուռ գալիս, էլ ետ գլուխը շտկում, օրգանգուն ու զանիմարդէն ժամ տալիս, ձիուն թափիկ տալիս, կամ մտրակում, որ ոտները մի քիչ շուտ շուտ փոխի, շուտ տեղ հասնի։ Բազինն էլ, ձեռն ականջի քամակին դրած, տխուր, բարակ ձայնով մէկ բայաթի էր բարձրացրել, քիմի տակին, ձիու ոտնձը գլխին գցած, ինքն իրան նղղում, գնում էր, որ տուն հասնի, իր հոգնած, ջարդուած մարմինը կամ մէկ շուաքի տակի հանգստացնի, կամ իրա տան դուռը, իր ընտանիքի երեսը, քանի որ գեռ մուխը վրայ չէր հասել, տեսնի ու սիրտը բացուի։

Հոտացներն էլ իրանց գուլթանի լծկանը բաց էին թողել, լուծը ետ արել ու մէկ քոլգի տակի, գուլթանը մէկ կողմը, եզները միւս, ջրերի ափին վեր էին թափել, քաղցը քուն մտել։ Նախիրը մէկ դաշտում, ոչխարի հօտը՝ միւս, շուաք տեղը նստել, ծնօտ ծնօտի էին քսում, փնչացնում, արոճ անում։ Հովիւն էլ

գլուխը մէկ քարի վրայ դրած, նղղել, աչքը կպցրել էր, որ շոքը քաշուի թէ չէ՝ վեր կենայ, հօտը իրիկնահովին մէկ լաւ խոտաւէտ տեղ տանի, արածացնի։

Արթուն շների մէկը այս ցցի վրայ, մէկը միւս բլրի ծայրին, կամ հովուի ոտի տակին՝ գլուխը դրել, նօթերը կիտել, մարաղ էր մտել, որ թէ գող, գայլ, գազան սիրտ անի մօտենայ, մէկէնիմէկ վրայ թռչի պատառ պատառ անի, իր տիրոջ ոչխարները պահի։ Մէկ կանաչ, խոտ, մէկ դալար թուփ, կամ մէկ ծպիկ ոչ մէկ տեղ չէր երևում, որ մարդ հոտն առնի, կամ երեսին մտիկ տայ, սիրտը բացուի, ու իր ճանպի երկարութիւնը մոռանայ, կամ շոքի ձեռիցն այրուած խորովուած ջանին հովութիւն տայ,— այսպէս էր սար ու ձոր, դաշտ ու հանդ չորացել, խանձուել, պապանձուել։ Միմիայն խոտերի ցողուններն ու թուփերի սուր սուր ծայրերն էին ապատեղ այնտեղ ցից ցից գլուխ բարձրացրել, տխուր, տրտում, մոլորուած, պաշարուած կանգնել, մնացել։

Սև սև գիշակեր ագռաւները կամ վախլուկ տուլաշներն էին հէնց մենակ մնացել, որ այստեղ մէկ քարափի ծայրի կամ մէկ բուրջի գլխի, կամ թէ չէ ճամպի միջում իրար գլխի հաւաքուել էին, նստել, կամ պատյա էին գալիս, իրար կոցահարում, իրար թեւերից քաշում, որ մէկի գտած որսը ձեռիցը խլեն, բաժին անեն, իրանց ձագերին էլ տան կամ հեռները տանեն։

Օձ, կարիճ, խլէզ, բզէզ, ու ինչ կերպ գազան ասես, մորեխ, մժեղ, հանդէս էին բաց արել։ Որը մէկ թուփի տակից, որը մէկ քարափի գլխից, որը խոտերի միջին՝ կամաց կամաց ժամ գալով, պոչ ու գլուխը ի-

բանց քաշելով, կամ ծլունգ լինելով, էլ ետ տաղ անելով, կամ գետնի, ապառաժի վրայ սողալով, փշտացնելով, շուռացնելով, փշշացնելով, ծվվալով, ծղրտալով, ոտն էին էլել, ուզում էին իրանց արևի ձէնն ածեն։

Արն էլ իր բնի առաջին արևկող անելով, գլխները հանել, մունջ մունջ ականջ էին դրել, սուր սուր աչքները ցցել, պէլացել, շլացել, այս կողմ այն կողմն էին մտիկ տալիս, որ ոտք խաղաղուելիս դուրս գան, մի քիչ շունչ քաշեն, իրանց կերը ճանկեն, էլ ետ իրանց բունը մտնեն, էլ ետ գնան քնեն, հանգստանան։

Բազի պատառակի արանքից, կամ քարի ծայրից էլ մէկ անճար բու, գլուխը վեր թոզած, քիթ ու պռունկ կիտած, ծանրացած, գետնին էր նայում, իր սև օրը ողբում։ Հաւի թշնամի ուրուրն էլ՝ թևերը փռած, չանգերը սրելով, բաց ու խուփ անելով, կռուցը սրբելով, կամ կուրծքը քուչուչելով, երկնքի տակին, գլուխը կուրծքի տակին քաշ գցած, սուր աչքերը այս դէհն այն դէհն էր գցում, պարում, պատրաստվում, որ մէկէնիմէկ, ական թռչափել, վայր վազի մէկ լիպոր ճուաի գլխի— որ իր մոր թևերի տակին, կամ մոր գլուխը քորելով, թևը քաշելով, ծվծվալով, կոկտալով, կամ կտուց կտցի տալով, մոր կրխալուն, ծվալուն ականջ դնելով, սուս ու փուս նստում էին իրար հետ, կամ քչուչ էին անում — կամ մէկ խեղճ, անճար լորի քամակի խփի, ու ճվճվացնելով, ծղրտացնելով՝ վեր քաշի, քրքրի, փետրի ու իր ագահ փորին մատաղ անի...

* * *

Այսպէս մեռել, լռուել էր բնութիւնը ու ոչ մէկ շփլթոց մէկ տեղից չէր լսվում։ Միմիայն հեռու տեղից մէկ բարակ քամի, երբեմն երբեմն փչում, ծառի տերևները սլսլացնում, ժամ էր գցում, ու զոլ զոլ մարդի երեսին, բերնին քնքուշ ձեռը քսում, շուտով անց կենում ու փշերի, խոտերի, քարափների, ձորերի մէջը մտնում։

Ինչպէս ծխի մէջը խրուած՝ հեռու տեղից գաշտի գեղերը, հանդերը, փոսերը՝ մթնած, լռուած, ինչպէս սև ամպի կտորներ, կամ այրուած, խանձուած տեղեր՝ այստեղից այնտեղից սևին էին տալիս ու խառնիխուռն երևում։

Արաքսը՝ ինչպէս մէկ նեռ օձ, կամ արծաթի գոտի՝ արևմտեան կողմիցը՝ ձորերի միջիցը՝ իր սուր, յուսափայլ ճակատն ու գլուխը բաց էր արել, ու մրմունջ, լուռ, հանգարտ գալիս՝ Մասիսի փէշին մի քիչ խփում, շփում էր ու էլի խեթ խեթ նայելով, նորան սպառնալիք տալով, ձէնքձոր անելով, գլուխը պարտելով, գնում Զանգուին ու Գառնու գետն իր ծոցն առնում ու խաղալով, խայտալով, վշվշալով՝ հեռանում քուերանց հետ ու պռունկ պռունկի, լանջ լանջի, քամակ քամակի տուած, իրար գլխի, երեսի ձեռ քսելով, փաղաքշելով, հանաք անելով, աչքները խփում, նստում ու Նարուրի տափարակ ծոցումը ծեծուած, ջարդուած քուն մտնում։

Այս տխուր հրապարակի չորսքչուրջը՝ աչքդ որ բաց չես անում, մէկ էլ ես տեսնում, որ երբեմն երկինքն ամպակալած՝ ուզում է որ սար ու ձոր ոտնատակ տալ՝ Արագածի, Մասիսի ու միւս սարերի գլխին բամբասի, գետին թցկի, որ համարձակում են իրանց գագաթը այնպէս բարձր վեր քաշել, որ բոլոր ամպերը

վերևը ոտի բռնելու տեղ չունենալով, իրանց երկինք մօրիցը խռոված, վէր են գալիս ու նրանց գլխին քուլայ քուլայ դիզվում ու այնպէս իրար վերայ նստում, որ շատը տեղ չունենալով՝ միւսներին քունչ է տալիս, բոմբոմում, դուրս է գցում ու նրանց տեղը բռնում։

Այս ժամանակն էր, որ մէկ սև զարալիտու՝ բարակ օձի պէս կամաց կամաց գլուխը դուրս քաշելով՝ ձգուելով, աջ ու ձախ ծռներ մտիկ տալով, մէկ բարձր մինարէթի ծայրի պատյտ տալով, քնահարամ մարդի պէս ձեռը կամաց կամաց բարձրացրեց, ականջին դրեց, գլուխը քամակի վրայ թեքեց ու ճլերք ընկած հիւանդի պէս սկսեց ձայնը ծոր գցել և ինչպէս մէկ խոր ձորից՝ կանչել — Ալլահու — Ալաքբարու... (Բարձրելոյն Աստուծոյ)։

Այս ձայնը հէնց դուրս եկաւ թէ չէ, հէնց իմանաս մէկ ամպ տրաքեց ու ձայնի տուտը հազար կտոր լինելով, գետինը ժաժ տալով, սար ու ձոր իրարացով գցելով, քարափների, էրերի արանքներովն անց կացաւ ու քիչ քիչ ձգուելով՝ բարակացաւ, խզուեցաւ, կտրուեցաւ։

Ինչպէս մէկ բունը քանդուած մեղրաճանճի թաքուն՝ այնպէս դուրս թափուեցան ուղղափառ մահմէտականները, որն իր խանուխիցը, որն իր այգուցը, որը ձորիցը, որը քնաթաթախ, որը սոսու աչքը կուլ գնացած, ձայնը փորն ընկած, գոյնը սփրթնած, ունքեր, նօթներ կիտած, գլուխը կախ գցած, որը մէկ փարչ ձեռին, փէշերը վեր քաշած, գոտիկը խրած, սև մորթի երկար գդակը ունքերին քաշած, մէջի վրայ կտրած, թուխ ճալվերը երկուտակ՝ ականջների այս կողմն այն կողմը ոլորած, գցած, գլուխը պլոկած, կլեկած, վէր արած,

վիզն ու բուկը կեղտով, քրտնքով սևացած, կոշտացած, երկար բարակ միրուքը հինայ դրած, սևացրած, կոկած, մէկ մուգ-կանաչ լայն վերարկու՝ անեսխտ, անկոճակ՝ ուսերին գցած, փէշերը պինդ բռնած, չիթի արխալուղի չաքերը բդիցը մինչև ոտը ճղած, անթիւ կոճակներով թև, կուրծք, իրար հետ խիտ, պինդ կոճակած, մայը տուած, շապկի բահաձև սպիտակ հախէն՝ ինչպէս մէկ դաշդայ եզան ճակատի խալ՝ մաքուր դուրս թոզած, բկին կպցրած, որը քիրմա շալի կամ սպիտակ կտաւի մէկ բեռը գոտիկ՝ ինչպէս մէկ մարդի թումբ, կամ մէկ տակառի կապ՝ մէջքովն ոլորած, պինդ կապած, մէկ ոսկոռակոթ ծուռ խանջալ, կամ մէկ հատ, սրած, կլոր թուղթ, թեք մէջը խրած, կապած, մէկ չուալի չափ բերանը բաց արած, ափները սպիտակ թելով մանր մանր կարած, լայն, մուգ-կապոյտ վարտիքը ոտներին տալով, քարերին խփելով, հող ու թոզ սրբելով, քամու առաջին, ոտների արանքին գէս ու դէն ծալուելով, բացուելով, փռփռալով, ոտները կապ գցելով, գորտի բերանի նման սաղրի քոշերը, ծայրը նեղ, բերանը՝ լայն ճոթռած, կրունկը սուր, բարձր երկաթով նալչած, ոտի տակին քստքստացնելով, ծլրփծլրփացնելով, չալ, ճիտը կարճ, բրդի հատ գուլբէքանց հետ սև-սև, բաց-բաց դափերի հետ հանաք անելով, խաղալով, կրնկին ծեծելով, թոզ, աւազ գետնիցը հաւաքելով, անուշ անուշ կուլ տալով, դուրս ածելով, էլի հատիկ հատիկ բերանը գցելով, չարազ անելով, ոտների տակը ծակելով, բգելով։

Որը մէկ փալան, սպիտակ կտաւէ չալմա գլխին փաթաթած, որը մէկ շիլա թասակ ականջները պրծացրած, որը մէկ ոչխարի քոստա փոստ կատարին կպցրած,

որը մէկ գայլի քուրք ուսերին գցած, որը մէկ այծի եաթնջի կորատուած, քրքրուած, բուրդ ու մազը գգգած, դուրս դառած, ճոլոլակ կախ ընկած, հազար տեղից ճզուած, ճոթռած, հազար թելով, զազլով շուլալած, կարկատած, տոպրակի պէս ծակած, շլինքը գցած, թոկի կտրով բկի տակին պինդ պրկած, չարմխած, գոմշի կամ եզան կաշուից տրեխները հագին, գանգալները կամ մաշուած պաճիճները վրան, երեսին ու միրքին հազար տարուան կեղտ, ապր տարիթ դառած, նստած, թաղաքեամա կամ զարափափախ, մէկ թոկ ճտին, մէկ մոլիալ փափախ գլխին — դուրս թափուած գնում են Երևան, որ Մհաղամի սուգն անեն։

* * *

Այսպէս ահա, ինչպէս տեսանք, մեր ատուածապաշտ, նամազատէր մոլլէքը, ախունդները... հովիւ, բէկ, խան, սարից, ձորից, տանից, հանդից, գեղերից, եալլաղից, բազարից, առից, արից, ինչ ունին չունին վէր ածած, գուլթանը հանդումը, ոչխարը սարումը, տաւարը նախրումը, ջուր, վար, ցանք, տեղն ու տեղը երեսի վրայ թողած, ինչպէս մէկ թուանդ կռուի ժամանակի՝ իրար գլխով դիպչելով, Երևան էին թափվում։

Մէկը ուղտի վրայ նստած՝ ամամբալով, մէկը իշի միջքին բարձած՝ չօշ չօշ անելով, մէկը եաբուի վրայ ուռած՝ դահ դահ անելով, մէկը գոմշի մէջքին հա թփռռ կանչելով, մէկը եզան պոչի տակին հօ հօ ձայն տալով, մէկը ջորու ուսին բգելով՝ «ը՜մ, երի» գոռալով, մէկը սայլում, մէկը քէջաւում, հազար տեսակ ձայնով իր ուլախին քշելով, որը քեահլան ձիու վրայ

նստած, զէնք ու զրահ կապած, զարդարուած, հրացանն ուսովը գցած, ձիուն ծվծվացնելով, օրգանգուն զնգզնգացնելով, որը ոչխարի, այծի հօտն առաջին, որը մէկ գառն ուսին գցած, որը մէկ գայլի պարկ վզաքօքին կապած, կամ հրացանը միջովն անց կացրած, որը մէկ արջի մորթի շուռ տուած հագած, որը գոմշի կաշի, որն այծի մորթի, որը մէկ շան թուլա եռևը գցած, որը մէկ բարակ թազի ձիու կողքին կապած, որը մէկ գամփռ շունն սայլի ակնից շղթայած, և այնքան վազել, հէլթէլթացել էին այդ խեղճ գազանները, որ լեզուները մէկ զազ կախ էր ընկել, աչքները դուրս ալրծել։

Որի սայլումը խնոցի, օրօրոց; աման չաման, բայց բոլորը դատարկ, որն իր երեխան քամակին զազլով կամ փալասով կապած. որովհետև շատերի հազին այնքան հագուստ չլինայ, որ երկու աբասով առնես, այն էլ կեղտով ծխով սևացած, մուր դառած։ Որի սայլումը կամ ծոցումը հազար տարուան ժանգոտած, բորբոնած, քարացած ճաթահաց, որը կթոցով կամ քաղալակով հաւ, ճիւ, ձագ, թուխսը, ճուտեր, չալ-չալ վառիկներ մէջն արած...

Այսպէս մէկի ձեռին մարակ, միւսին մահակ, մէկի ուսին մանգաղ, կամ երկար ձողի վրանի համար, մէկի գտակի արանքումը զազիլ ու մախաթ կամ թալման կարած, որը մէկ հորթի թոկ, որը մէկ շան բըհիր, որը մէկ ձիու նոխտայ, որը ձիու կամ իշի փալանը շալակած... շատ տեղ խեղճ հայերի կալն ու դեզը ցրուելով, կամ ձին խլելով, կամ այգին քանդելով, տնքալով, ճրրալով, ննջելով, սկրհալով, բայաթի ա-

անլով, խաղ կանչելով, մինչև գազանների քէֆն էլ բաց էլաւ.— որը վնգվնգում էր, որը արընգում, որը բղղում էր, որը խրխնջում... մինչև վերջապէս մէկ ջրի ափ հասան, վէր եկան, որ սա ու ձեռք լուանան, լեռոյ մանեն Երևան։

Բ.

Մէջիդի ազօթարանի առաջին մեծ բազմութիւն կայ ժողովուած։ Ամենքն էլ այնպէս են լալիս ու կուրծքներին խփում, որ հէնց իմանաս Հուսէյնի նահատակութեան օրը հէնց այսօր է։

Ախունդը մէկ բարձր աթոռի վրայ բազմել է, մոլլէքը իր չորս կողմը բռնած, այնպէս է Ալու, Մահմադի, ու Ալու որդու՝ Հասան Հուսէյնի պատմութիւնն անում, լալիս, իրան կորատում, որ քարերն էլ են ձայն տալիս, մղկտում։

Նրա առաջին մէկ քանի ջահիլ աղջկերք՝ մազները ցրուած, խճճած, կէսն երեսներին, կէսը լանջներին գցած՝ մի անկիւնում կուչ են եկել ու իրանց մօր հետ սուգ են անում։

Մէկ քանի մանուկներ էլ, իրանց խեղճ մօր արած սուգն են կրկնում. մէկ քանի ձիաւոր էլ, թուրները հանած, ձի են չափ գցում, յարձակվում, որ նրանց սպանեն։ Սրանք էլ եզիդիների օրինակն են, որ շտապով գալիս են, որ իրանց խալիֆի հրամանը կատարեն։ Ձիու վրայ նստած դէս ու դէն են վազում ու կամենում են որպէս թէ Հուսէյնի ընտանիքը կամ սուրը քաշեն կամ գերի տանեն։

Բոլորն էլ խօսում են, բոլորն էլ այնպէս կենդանի իրանց խաղը խաղում, որ տեսնողը հէնց կիմանայ, թէ հէնց այսօր է Հուսէյինը մեռել։

Ահա օրինակը։

ԱՌԱՋԻՆ ԲՕԹԱԲԵՐ

Աչքս խաւարի, լեզուս կարկամի,
Ոտներս կոտրուէր, ախ, հոգիս դուրս գար,
Որ բնաւ անճարս ձեզ մօտ չըգալի
Ու ձեզ չըտայի այս գառը համբաւ։
—Էլ ինչ էք մնացել այստեղ լուռ նստած,
Ձեր արևը հանգաւ, ձեր աստղը թռաւ.
Ձար ունիք, տեսէք, ինչ էք շուարած.
Թև առէք թռէք, թշնամին հասաւ։

ԵՐԿՐՈՐԴ ԳՈՒԺԿԱՆ

Հարայ, մադաթ, վայ, թուր խփի սրտիս,
Ամեն, Ֆաթիման ջան, քո գլխիդ դուրբան,
Հասան Հուսէյն, վայ, վայ իմ արևիս...

ՄԱՑԸԼ

Ա՞խ, ինչ էք ասում, այդ ինչ էք պատմում,
Կրակ էք բերել, որ օջախս այրէք։
Լռուի այդ լեզուն, չորանայ բերնումը,
Տունս քանդեցին, ջիւան երեխէք,
Հազ լինի գլխիս, կեանքիս, արևիս,

Վա՛յ իմ անցկացրած, իմ սև օրերիս։
Վա՛յ, ես ինչ կանեմ, որ ջուրքն ընկնիմ,
Ա՞ռմ գառանը մնամ, ուռմ ձեռին նայիմ,
Սառեցնողդ խառով, իմ բախտ անիրաւ,
Ոտս ինչէ՞ չկտրուեց, այս ի՞նչ եմ լսում։
Ա՜խ, իմ ծաւխս հատաւ, օրս խաւրեցաւ.
Ինձ ով անիծեց այս գառն աշխարհումն։
Քս սուրը իմամի նամազիդ դուրբան, վա՛յ,
Քս Ալու փանջի գլխին ես մատաղ, ամա՛ն,
Արդար պատկերիդ, ա՛խ, ես մեռնիմ, ջա՛ն,
Ջանս քեզ դուրբան, ազա ջա՛ն...
Երեսս ոտիդ տակը փիանդաց, մագմի՛թ,
Արբերիդ գլխովը պատյտ կլտամ, ազա ջա՛ն...

ԱՂՋԿԵՐԳ

Մեր հայրն ո՞ւր է, վա՛յ,
Ո՞ւր է գնացել, վա՛յ,
Իրիկունը կըգայ, օրը կըբացուի,
Մեր գուռը բաց անող, ա՛խ, էլ ով կըլի։

ՈՐԴԻՔԸ ԵՒ ԱՂՋԿԵՐԳԸ ՄԻԱՍԻՆ

Ախր ի՞նչ արինք նրան, որ այսպէս խռովեց,
Ինչով կատրեցինք սիրտը, որ մեզ թողեց.
Բա մեր աղէն էլ չէ՞ գալ, վա՛յ,
Բա մեզ բարով էլ չէ՞ տալ, վա՛յ.
Անա ջա՛ն, վա՛յ, հրէս եկան, վա՛յ,
Մեզ կրտանեն կսպանեն, վա՛յ...
Տարէ՞ք, տարէ՞ք, անա ջա՛ն, բարա ջա՛ն,

Բաջրամ ջան, դավուռ ջան, Ալլահ, Ալլահ, վա՛յ,
Ա՜խ... վա՛խ... մեռա՛յ... հատիր, հատիր, հատիր...
Գնա՛գ... բէգադ... վա՛յ, վա՛յ... հա՜ — հը՛, հա՜ — հը՛...

— Սատն քեռա, վէր ջանն, իմամ ուշագի, սանն նա հագդն վար, քի դհա ուզն բիզդան գեոնգարիբան ադ-լիբան, բաղրիբան։ (Զէնգ կտրիր, հագիդ տուր, իմամ որդի, ինչպէս ես համարձակում, երեսդ մեզանից չես քաշում, լաց լինում, բղաւում)։

ԱՇՈՒՆՔ

Ամառն իր բոլոր պատուղները հասցնելով պահ է տալիս Աշունին, որ ինքը հանգստանայ և միւս տարին էլ նոյնքան պտուղ տայ։

Շատունակ երկար աշխատութիւնը երկար էլ հանգստութիւն է պահանջում։

Դալիս է աշունը՝ ոչ այնպէս ուրախ, ինչպէս գարունը կամ ամառը և ոչ այնպէս տխուր, ինչպէս ձմեռը։ Նա լուրջ, խոհեմ կերպով, փորձառու և խելք մարդու նման հաշիւ է պահանջում իր կրակոտ երիտասարդ եղբօրից, Ամառուանից, ներում է նրա թերութիւնները և ինչ-

որ նա պակաս է լինում թողած, ինքն է լրացնում, որ երբ ձմեռ պապը գայ, նրանից յանդիմանութիւն չըլնի, թէ այս չըկայ, այն պակաս է, այս ինչ կամ այն ինչ գործը դեռ չի լրացրած։

Աշունքը երբ որ տեսնում է, թէ պակաս բաներ դեռ շատ կան, փչում է իւր փողը և ամենքին նոր գործի է հրաւիրում։ Ինքն էլ պարապ չի մնում։ Իւր փողի ձայնի հետ նա փչում է ցրտաւուն քամին։ Այդ քամին որ դիպչում է ծառերին, նրանց վրայ մնացած պտուղները բոլորը թափվում են և յատակներին փռվում, դիզվում։ Տերևները այդ քամուց դեղնում, ափըրթնում են երկիւղից և դողդողալով թափվում, դեռնին կուչ գալիս։

Թռչունները շուտով իրանց շահացրած ձագերը ժողովում են, իրար խմբից են տալիս և մեծ մեծ կարավաններով — խումբ խումբ, երամ երամ, շարան շարան, բոյլ բոյլ, կռկռալով՝ ծվծվալով, կչկչալով, թրռչում, հեռանում դէպի աւելի տաք երկիրներ...

Այգեպանն շտապում է իւր խաղողը քաղել, գինի քամել, սեղաւորել, պահունի մրգերից կոխաններ շինել, դեղապեսի համար պահել։

Պարտիզպանն էլ իւր պարտիզի ու բուրաստանի մնացած բերքերն է ժողովում, ինչպէս — կարտոֆիլը, կաղամբը, սոխը, բազկը, տակը (ձակնդեղ), գազարը (ատեպին) և միւս արմտիքը։

Երկրագործն էլ իւր ցեղերն է կեռավար անում, հազար աղօթքով ու մաղթանքով սերմը հողին պահ տալիս, ցանում, ցաքանում կամ սերմնավար անում։ Այնուհետև սկսում է փայտ կրել, եթէ փայտ է վառում և ոչ ածուխ, իւր խոսքի ու յարգի բանակութեանն է նայում, որ եթէ քիչ է, վազօրոք մի կերպ պատրաստութիւն տեսնէ, կամ թէ չէ՝ իւր տաւարն ուրիշին պահ տայ։

Դաղանները էլ իրանց բներին, որջերին պատրաստութիւն են տեսնում։ Որը հին որջն է նորոգում, որը նորն է փորում, կամ մի յարմար ծառի խոռոչ ու քարայր փնտրում։

Մի կողմից աշունքը շարունակում է իր փողը փչել՝ օրեցօր աւելի թունդ, աւելի ցուրտ։ Դաշտերում եղեամն է գնում, սարերի գլխին ձիւն՝ որ մարդիկ ձմեռուան պատկերը տեսնեն և աւելի շտապեն։ Ամառջ յորդ անձրևներ են գալիս, գետերը վարարում, յետոյ գալիս են մանրամաղ անձրևներ, որոնք ծծվում են ամեն բանի մէջ և մինչև ներքին խաւերն են անցնում։ Այդ տեսակ անձրևներից թէպէտ կսթում են հոգածածկ տները, բայց դրանք շատ օգտակար են նոր ցանած սերմերին։

***

Աշնանային օրերը քանի գնում կարճանում և ցրտում են — գարնանային օրերի հակառակ, որոնք քանի գնում, երկարանում և տաքանում էին — մինչև հասնում է ձմեռը և սար ու ձոր ձիւնով ծածկում։

Աշնանային ամիսներն են — սեպտեմբեր, հոկտեմբեր և նոյեմբեր։

ՍԵՊՏԵՄԲԵՐ

Ահա եկան աշունքուայ թուխպ օրերը,
Մաղմզում է մանրահատիկ անձրևը.
Ծառերն իրանց տերևներից մերկացան,
Կռունկները շարան շարան անց կացան։
Սևացել է դաշտը անթիւ ցելերով,
Բայց մի կողմից դեռ վարում են կեռերով,
Սերմնացանը գոգնոցն ածած սերմացուն,
Սերմ է ձգում, աղաչելով Աստուծուն։
«Ով տէր Աստուած, դու իմ ցանքը պահպանես,
Առատ անձրև, կարմիր արև չխնայես.
Մէկ բուռն ահա ես տալիս եմ մկներին,
Այս մէկ բուռն էլ ագռաւներին, ծտերին.
Բայց մարախը գոհ չի մնալ մէկ բռնով,
Երկու կլտամ, թող կշտանայ գորանով.
Մէկ բան էլ կայ, որ անունը չեմ տալիս,
Այդ դու գիտես... վերևից է նա գալիս։
Դու դրանցից արտս պահիր անվնաս,
Ես տէրտէրից չեմ խնայիլ կալատաս.
Վանականներ, զարծակալներ ինչքան գան,
Բոլորեքեանք առատ բաժին կստանան.
Կերթամ Մարտս խաւնկ ու մոմով, մատաղով,
Միայն տարտս դու պահպանիր ապահով։

***

— Էլ ի՞նչ ասեմ, Աստուած, Ինքդ լաւ գիտես,
Թէ ինչ պարտքի պատուհասի մէջ եմ ես.
Գող, աւազակ մի կողմից են կողոպտում,

Գարագատէրը միւս կողմից է ինձ խեղդում,
Դրանց ձեռքից եթէ մի բան է մնում,
Այն էլ գայլի կամ ցուի է զոհ դառնում...
—Մի տուն լիքը երեխէքս մերկ, քաղցած,
Տարին առատ, բայց ես չունիմ կոբեկ հաց,
Այսօս ահա ոտքիդ տակին փռած է,
Քս Սուրբ Աչը սորա վերայ տարածէ։

ԱՑԳՆՔԱՂ

Սուրբը — Խաչի պասից մէկ կամ երկու շաբաթ էր անցել։ Լաւ չէ միտս, որովհետև ես այդ ժամանակ դեռ երեխայ էի։

Մի երեկոյ հայրս եկաւ այգուցը՝ հաղողով ու գեղձով լիքը մի քաղլակ ձեռին, տուաւ մօրս, թէ տուր երեխացը, լեռայ աւելացրեց.

—Հաղողը ձեռքից գնում է. չորս կողմի այգիքը քաղել են, միայն մերն է մնացել մէջ տեղ լիքը։ Ով ասես՝ ներս է մտնում։ Այգեպանն էլ գողցնում է. խեղճը չի կարողանում գողերի հոտիցը գալ։ Անցեալ գիշերը թուրքի չոլանները մտել են, ինչքան պլոկել տարել են, տասն այնքան էլ կոտրել, փչացրել են։ Կարմիր խնձորին որ տեսնես, կասես արջեր են վրան կռիւս տուել, այնպէս են կոտրատել բոլոր ճիւղերը։ Խնձորի կարգումը էլ մի ճուտ հաղող չես գտնիլ, այնպէս են սրբել, տարել։

—Աչ կոտրուին դրանք, կուրանալ դրանց աչքերը — բացականչեց մայրս,— տեսնում ես դու այդ անիծածներն ինչ են անում...

—Հիմա ինչ եղել, եղել է, շարունակեց հայրս։ Ես ասում էի՝ մի քիչ էլ մնայ, աւելի լաւ հասնի, որ գինին թիժու չըլինի, բայց որ չեն թողում, ի՞նչ արած... Գողին ի՞նչ դատաստան. մէկին բռնիլ ես տալիս, տեղը քսանն է լոյս ընկնում. թէ որ առաջ հաղողդ էին գողացել, լեռայ գալիս են տաւարդ են տանում, գոմէշներդ քշում։ Դրանց պատիժն Աստուած պիտի տայ, մարդն ի՞նչ կարող է։ Ինչ որ է, դու էգուց հայ թիխիր, մեր բարեկամներին իմաց տուր, միւս օրն սկսենք քաղելը, թէ չէ՝ այս տարի ոչ թէ ծախելու, այլ մեր խմելու գինի էլ չենք ունենալ։

—Դէ որ այդպէս է, ասաց մայրս, էգուց մարդ ուղարկիր, երեխէքս գան։ Կուրանամ ես... առանց նրանց ի՞նչպէս քաղենք բաղը։

«Երեխէք» ասելով՝ մայրս ակնարկում էր քոյրերիս, որոնք մարդու էին տուած գանազան գիւղերում, բայց իրարից այնքան մօտիկ մօտիկ էին, որ մէկ օրումը կարելի էր ամենքին էլ իմաց տալ։ Միայն մէկը քաղաքումն էր, նրան էլ վաղուց էին ապսպրել որ գայ։

Այգեքաղի օրը եկան բոլոր քոյրերս — Սօնան, Նամիկը, Սանը, Մայիկոն, Հերիքնազը, Բաստին, որի անունը սկեսուրը փոխել էր Սաբէդ շինել, բայց չէր իմացել խեղճը, որ Բաստին խորհրդաւոր անուն էր։ Եւ ասեմ ահա թէ ինչ խորհուրդ ունէր «Բաստի» անունը։

Մայրս որ շատ աղջիկ է բերում, նորան ասումեն՝ եթէ անունը «Հերիք» դնես, էլ աղջիկ չես բերիլ։ Մէկի անունը դնում է Հերիք, բայց դրանից յետոյ էլի է աղջիկ բերում։ Ասում են ի՞նչ դնենք, ինչ չդնենք

որա անունը, որ վերջինը դառնալ, լեռայ Գիւլնազ տատն ասում է՝ պէտք է դնել «Բաստի,» որ ելի «Հեռ բիք» է նշանակում, միայն թուրքերէն է։ Բայց ինչ կանես, որ ճշմարիտ՝ Բաստին դառնում է վերջին աղջիկը՝ գոնե մի ու ժամանակ, որովհետև մայրս նրանից լեռայ մի տղայ է բերում, քայց լեռայ էլի մի արջիկ, որ շատ չի մնում, չարներդ տանում է։

* * *

Երբ որ քոյրերս եկան, լեռայ մայրս ինձ ուղարկեց իմ պապանց տուն, որ նրանց էլ իմաց տամ։ Նրանց տանն էլ այնքան հարսներ ու երեխէք կային, որ մի սուրբ աչխարհից շատ։ Այնտեղից ուղարկեցին մօրաքոյրերիս մօտ. լեռայ մեր սանամայրների, որ չրգիտեմ տատն էին — մեղայ քեզ Աստուած — թէ քանը։ Յեռայ գնացի մեր կնքաւորենց տունը, այնտեղից էլ Հանդիպեցայ Գիւլնազ տատին ու ասացի — Տատի, մայրս ասեց, էգուց դու էլ, քո հարսներն ու թոռներն էլ համեցէք մեր բաղը, էգուց սկսում ենք քաղելը։ Նա էլ պատասխանեց — Շատ լաւ, չարդ տանեմ. գէ արի քեզ մի սեր ուտացնեմ, շատ ժամանակ է, մեր տունը չես եկել։ Ասացի՝ շտապիկալ եմ, պիտի գնամ ուրիշներին էլ իմաց տամ։ Բայց տուա ասեցի, գիտէ՞ք. թէպէտ սուա պսիլը լաւ բան չի, լաւ էլ ախորժակ ունէի սերի, բայց ի՞նչ կանես, տատիկ ամաչելուցս սուա ասեցի։

Հիմա պիտի ասէք, պղբան մարդկանցը որ կանչեցիր, հապա ալդքանին ի՞նչպէս պիտի կերակրէք։ Մի վախենաք, այդ շատ հեշտ է։ Դրանք իրանց կերակուրներն էլ իրանց հետն են բերում, գեռ մի բան էլ աւելի։

Մենք արդէն երկու մեծ դոշ ունէինք, գիտուքեամբ

այգեքաղի համար գիրացրած, մի քանի էլ թոխլի ուայծ։ Մայրս երեք չորս թոնիր հաց թխեց, բաւական նաչատի էլ գաթայ, նազուք։ Պանիր էլ շատ ունէինք, հաղոդն ու միւս մրգերն էլ այդին լիքը. էլ ուրիշ ի՞նչ էր հարկաւոր։ Իսկ մեր հիւրերն էլ բերին ամեն մի տանից մի քանի եփած հաւ, բօլ գաթա, բաղարջ, կաթնահունց։ Ամենից շատ մեր սանամայրներն էին բերել։

Հիմայ էլ պիտի ասէք, այդ ի՞նչ այգեքաղ է. գա մի ուխտագնացութեան, սար գնալու, կամ հէնց, ուզիպն ասած, հարսանիքի պէս բան է։

—Այո, հէնց այդպէս է. գեռ դրանցից մի բան էլ աւելի համարեցէք։

Այգեքաղի օրը բոլոր երեխէքն ու կնանիքը, բոլոր հարսնեքն ու աղջիկները գուգուել զարդարուել էին իրանց ամենաօրուայ ամենանոր ու գեղեցիկ հագուստներովն ու զարդարանքներովը։ Տղամարդիկն էին մնացել իրանց ամենօրուայ հագուստումը, միայն գաակնեքն էին նորը դրել։ Տղամարդիկը չէին փոխել իրանց հագուստը, որովհետև նրանք պիտի կթոց շալակէին, շալակ տային, հաղոդը կխճորէին, կոխ տային, տակառները սարքէին։ Էլ վարուցուայ պէս հնձանում չէին կոխ տալիս, այլ նոր, եւրոպական ձևով ամեն սարք ու կարգն ունէին, այսինքն մի քանի ահագին կիսատակառներ, նրանց վերայ դրած՝ յատակը ծակծակած՝ մեծ չան և էլի ուրիշ մի քանի տեսակ չաններ։ Հաղոդն ածում են ծակծակած չանի մէջը, նրանում մէկը կանգնած, ոտները հանած, փոխկերքը վեր կապած՝ կոխոտում է և թափում կիսատակառը, որի մէջ գինին մնում է մի քանի օր, մինչև եփ է գալիս, ճաճան (չէչը) երեսին կանգնում, գինին պարզվում. այնուհետև կիսատակառի

վարի ծորակը բաց են անում, գինին թափում և ածում տակառների մէջ ու յետոյ տանում դնում մառանումը։ Բայց այս մանրամասնութիւնները հիմա թողենք։

* * *

Առաւօտը վաղ վաղ հասանք այգին։ Ոչխարները մորթոտեցին, կրակ տրին, պղնձները վրան դրին, շամփուրները շարեցին, գցեցին, որ նախաճաշիկի համար խորոված անեն։ Յետոյ մի մի թաս արաղ խմեցին, մի մի թիքայ խորոված, մի մի պատառ կաթնահունց կերան և սկսեցին իրանց գործը։

Մեծերը՝ մի մի քաղաքակ վազան տակը գրած, սուր դանակները ձեռքներին՝ կտրում էին հազողի հասած ճութերը և գցում մէջը. փոքրերը այդ քաղաքակները տանում էին մեծ կթոցներն ածում, իսկ երիտասարդները կթոցները շալակում էին տանում ածում կիսատակառի վրայի չանը։

Ամբողջ այգին իւր կեանքից զրկուելիս մի նոր կեանք էր ստացել։ Ձայն էր որ լսվում էր ամեն մի թուփի տակից, ամեն մի ծառի վրայից։ Մէկը կանչում էր. — կթոցը լցուել է՞, եկէք տարէք. միւսը բղաւում էր. — քաղաքակները լցուել է՞ն, շուտ արէք կթոցը բերէք։

Մանր երեխէքը փոքրիկ թռչունների պէս անգադար դէս ու դէն էին ընկնում, ամեն ճութից մի հատիկ պոկում, համը տեսնում, և որովհետև էլ ոչ ախորժակ ունէին և ոչ փորներումը տեղ, միւս մրգեղէնների ծառերի վերայ էին մագլցում, կերածը մարսում, նրանց համն էլ տեսնում։ Մէկը բարձրանում էր խնձորենու վրայ, միւսը սերկևլի, երրորդը տանձի. աւելի ճարպիկները բարձրանում էին ընկուզենու վրայ և կապկի պէս ճղնէ ճիւղն ոստոստելով՝ ուզում էին միմեանց բռնել։

Բարեսիրտ պառաւները, ամենքն էլ ժպտում էին տղայոց երեսին, ամենքն էլ ձեռով անում, կանչում երեխաներին, երբեմն էլ՝ կարծես գիտուքեամբ՝ տերևների տակին թաք էին կենում, մէկ էլ յանկարծ երեսները բաց անում, երեխաներին «ծիւկ» տնում։

Ճաշի ժամանակը հասաւ։ Ամենքն էլ հաւաքուեցան մեծ ընկուզենու տակը. հացը, խաշլամէն փռեցին կանաչ խոտի վրայ և երկարումէկ բոլորուեցան նորա շուրջը։ Բայց ով ունէր ախորժակ հաց ուտելու։ Ծիծաղ, խնդութիւն, զուարճութիւն, հանաքներ անել — այս էր նրանց ճաշը։

Ճաշից յետոյ էլի մի քիչ քաղեցին և երեկոյին բոլոր քաղուորները մի մի քաղաքակ հազողով լցրին, իրանց հետ տարան։ Այսպէս շարունակուեցաւ երեք չորս օր և ամեն օր մի նոր ուրախութիւն մի նոր զուարճութիւն էինք սարքում...

ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ

Ձէ՞ք կարող դուք էլ գրել, թէ ինչպէս է լինում ձեզանում այգեքաղը, եթէ այգի ունիք։

ԱՐՏՈՒՆ

(Վանեցու երգ)

Արտուտիկ, ինչու թռչում ես վեր վեր,
Երկնքէն պտում ես տխուր տագեր.
Պարտէզ ու այգի ինչու չես գնում,
Քնքոյշ ձագերդ սրտով ես հանում.
— Ախ, շատ են, շատ են իմ կսկիծն ու ցաւ,
Իմ մտերիմը գնաց հեռացաւ,
Հայ հողագործը — իմ սերտ բարեկամ,
Թշնամու ահէն գնաց գաղթական։
Այն օրից Հայոց դաշտք ամայացան,
Բերքի արտերը փշով լցուեցան...
Տափի վրայ չունիմ ես հանգստութիւն,
Ու այդոր համար երկինք եմ թռչում։
Երկինք եմ թռչում ցերեկ, իրիկուն,
Երգով ողբերում եմ միշտ Աստծուն,
Որ մեզ ողորմի իր Աջով գթած,
Հայ հողագործին անէ գերեզմանն.
Հայոստան բերէ խեղճ հայ գեղջուկին.—
Այս է խորհուրդը իմ տխուր երգին։

ԱՇՈՒՆ

Աշունը եկաւ, թափեցաւ սաղարթ,
Էլ մի փնտրիլ դու մանուշակ ու վարդ.
Բնութիւնը տխուր, պարտէզը տրտում,
Ձմեռուայ հոգսն է մարդոցը սրտում։

Երեխան փակուած մենակ սենեակում,
Պատուհանիցը պարտէզ է նայում,
Միտքը բերում է գարնան օրերը,
Մարգերի վրայ զուարթ խաղերը։
Մի տրտմիլ, տղայ, թող անցնի մարտը,
Նորից կբացուին նարգիզն ու վարդը,
Նորից սոխակը պիտի գայ հանդէս,
Նորից խաղալու դու կերթաս պարտէզ։

ՁՄԵՌՆ

Ձմեռը գալիս է թէ չէ, նորա առաջին ամեն ինչ դողդողում, սարսռում է։ Գիշառատ ձիւնը միայն մերկացած դեռնին օգնութեան է հասնում, իւր հատ վերմակով նրան ծածկում և այսպէս պաշտպանում նրան ձմեռուայ դառնաշունչ ցրտերից։

Կրակը դառնում է մի շատ սիրելի առարկայ և ամեն բանից աւելի հարկաւոր։ Ով որ դրսից տուն է մտնում, ամենից առաջ կրակին է բարևում։

Ձ.քաւորների ապրուստը տարուայ ոչ մի եղանակին այնքան դժուար չի լինում,

ինչպէս ձմեռը։ Մէկի վառելիքն է հատնում, միւսի ուտելիքը, մէկը տաք հագնելիք չունի, միւսը ապահով բնակարան։ Բուրսին ու մոգալը թէպէտ տաքացնում են դրանց, բայց շատ անգամ էլ իրանց ածխահոտովը գլխները շարունակ ցաւացնում։ Այո՛, ածուխի կապոյտ ծխից պէտք է շատ և շատ զգոյշ կենալ։ Քանի՜ քանի մարդիկ են մեռել նրանից, քանի անգամ ամբողջ ընտանիքով, մի գիշերուայ մէջ, քնած ժամանակ թմրել, կոտորուել են։ Ածուխի կապոյտ ծուխը մարդասպան է, երբ ամէն կողմից փակուած տեղ է գտնվում։

Ձմեռուայ եղանակին պէտք է ունևորները յիշեն չունևորներին և նրանց օգնեն, ինչով որ կարող են։

Պինդ ձմեռը վայրենի անասուններին աւելի է վնաս տալիս, քան թէ մարդկանցը. գիւղացիներն աւելի են նեղութիւն քաշում, քան թէ քաղաքացիք. բայց եթէ գիւղացիք մի փոքր կրթուած ու աչքաբաց լինին, ձմեռը նրանց ոչ մի վնաս չի տալ և նոյնքան օգտակար կլինի, ինչքան միւս եղանակները,

թէպէտ ձմեռը համարվում է երեք ամիս, բայց լեռնային տեղերում մինչև հինգ ամիս պինդ ձմեռն է լինում։

Ձմեռուայ ամիսներն են — դեկտեմբեր, յունուար և փետրուար։

ՁԻՒՆ

«Ա՜խ ինչու — ինչու կուգայ պաղ ձիւնը,
Նորից ամիսներ պիտ մնամ տունը,
Ցեսնելու չեմ ես կանաչ ծառ, արօտ,
Հոտոտ ծաղիկին պիտ մնամ կարօտ»։
—Ձիւնը որ կուգայ երկնքէն ի վար,
Իմացիր մեծ բարդ է մարդուս համար.
Վերմակի պէս տաք կը ծածկէ գետնին,
Որ բոյսի արմատն դիմանայ ցրտին։
Նա հողին կուտայ հիւթ, պարարտութիւն,
Դաշտին ու արտին մեծ առատութիւն։
Մի տրտնջալ, մարդ, դու բնութիւնէն,
Թէ տաք և թէ ցուրտ՝ մեզ միշտ օգուտ են։

ԶՄԵՌ

Զրգիտեմ՝ ինչու ձմեռուայ օրը
Ցիշում եմ ես միշտ իմ հայ-եղբօրը,—
Ասում եմ՝ արդեօք չունի՞ նա կարիք,
Հաց, միս, եղ ու փայտ ունի՞ նա հերիք։

Ունի՞ տաք հագուստ, ունի՞ նա մուշտակ,
Ամուր է տունը, կողերը չի ծակ,
Ու այսպէս ես միշտ ձմեռուայ օրը
Միտս եմ բերում իմ հայ-եղբօրը։

ՁՄԵՌ

(Երևանայ գիւղերում)

Բարեկենդան էր։ Ձիւնն եկել դիզուել, սար ու ձոր բռնել էր։ Պարզկայ գիշերը այնպէս էր գեսինը սառցրել, որ ամեն մէկ ոտք կոխելիս՝ հազար տեղից տրաքտրաքում, ճռճռում, ճքճքում էր ու մարդի մարմինը սրսռացնում։

Ամեն մէկ ծառի ճղքներից, ամեն մի տան կտրից հազար տեսակ սառցի լուլայ, հազար տեսակ ձնի քուլայ կախ էր էլել ու բիզ բիզ իրար վրայ սառել։

Էնց գիտենաս սար ու ձոր կամ նոր էր ծաղկել, կամ նոր ծերացել, մահուան գուն ընկել։ Շունչն էր մնացել որ տայ ու աշխարհքին մնաս բարով ասի։

Թռչուն, գազան, անասուն, սողուն՝ որը փէսացել, այստեղ այնտեղ վայր էր ընկել, որն էլ վազուց, ամսով առաջ բունը մտել,

ձայնը կտրել, պաշարը վայելում, գարնան գալուն սպասում։

Գետերի, առուների երեսները սառոյցը մէկ գաղ եկել։ Տասսացել իրար վրայ գիսզուել, այնպէս էր ջրի, սղբրի բերնին հուփ տուել, որ մօտներին կանգնողը միմիայն նրանց խուլ ձայնն էր լսում, որ սառցի տակին՝ տխուր, տրտում քլքլում էր ու էլ ետ այստեղ, այնտեղ, կամաց կամաց ձայնը կտրում, պապանձվում, սառչում։

Այս առաւօտ արեգակն իր գլուխը որ արևելքից բարձրացրեց ու աչքն աշխարհի վրայ գցեց,—շողքը սարերի գագաթին, դաշտերի երեսին այնպէս էր պէծին պէծին տալիս, պապզում, փայլում ու սառցի, ձնի հետ խաղում, ծիծաղում, կանաչ ու կարմրին տալիս, որ հէնց իմանաս, թէ ալմաստ, զումրուխտ, եաղութ ու հազար տեսակ անգին քարեր լինէին դաշտերի, սարերի գլխին, երեսին, լանջին փռուած։

Սարերի սառը քուրը, ձորերի գառնաշունչ քամին այնպէս էր մէյդան բաց տալել, գոռում, փչում, հոսան անում, ձնի թեթը իրար գլխով տալիս, որ ճանապարհի քիթ ու պռունկը կպցնում, ճաքացնում էր, երեսը պատռում, գլխին, երեսին հազար

անգամ խրում, աչք ու բերան լցնում։ Շատին կամ ձորերն էր գցում, խեղդում։ Կամ ձնումը թաղում, շունչը կտրում, կամ ոտ ու գլուխ փէտացրած՝ ճանապից խռկում, սար ու ձոր գցում, խեղդում, կամ քարէքար տալիս։

* * *

Այսպէս մէկ խիստ ձմեռուան օրի լոյն ու մութը որ բաժանուեց, աղօթարանը բացուեց, մեր գիւղացիք քնից վեր կացան, ատն երթիկները բաց արին, երեսները լուացին, մէկ երկու խաչ հանեցին, բարի լոյս ասեցին իրար, մանր երեխանցը ծածկեցին, ու ամեն մարդ գնաց իր բանին։

Մեծ մարդիքը միրուքները սանդրելով, պառաւ կնանիքը՝ շարսաւը կռնատակներին՝ կամաց կամաց դուրս եկան, գնացին ժամ։

Նրիտասարդներն էլ՝ ամառուայ պէս խոտ հնձելու, կալ կասելու, այգի փորելու, էտելու, թաղելու, դարման կրելու հոգս չունենալով՝ աչքները ճմռեցին, ճլմկոտալով ու քնաթաթախ մնան դոմը, որ տաւարին, ձիանոցը խոտ տան, տակները սրբեն, ջուրը տանեն, ձիանը թիմարեն ու հետը խաղ ասելով՝ էլ ետ կապեն ու գնան տուն։

Յարգելու հարսները՝ ասղարոյր, ոսկե-

կար օշմաղը մինչև քթերի կէսը խոր գցած, քօղու լաչակի ծայրը մինչև աչքերի տակը իոր քաշած, որ էլ երեսները չէր երևում, մէկ դարայի կամ դադակ միթանայ հագներին, մոմի կամ կտաւի շապկով զարդարած, մէկ մեծ գօտկով մէջքները չորս տակ, հինգ տակ կապած — թռչնիկի պէս կուլի կուլի վեր թռան, երեսներին մի քիչ ջուր քսեցին, փէշով սրբեցին, ու որն սկսեց տունն աւլել որը, դուռը սրբել որն էլ չախմախին տուեց, կրակ արեց, որ թոնիրը վառի, կերակուր պատրաստի։

Տան նորահաս աղջկերքն էլ գլխները սանդրեցին, մազերը հիւսած, քամակներին գցած, կարմրադադաթ մորթէ գդակը գլխներին՝ ականջները կապեցին, դաստամանն ուսներին գցեցին, կուժը վրան դրին, բերանը կապան ու գնացին, որ տան համար ջուր բերեն։ Ջրի վրայ էլ երկար ժամանակ իրար հետ խօսելով, ծիծաղելով, մէկն իրանց տունը գնաց, միւսն իրանց։

Աբեղակի շողքն բնկաւ տունը։ Նորեազը մէկ կողմից էր շվացնում, բզզում։ Հասանը միւս կողմից փղղում, ձիերը պատուհաններուն ու երթկովը ներս ածում, աչք ու ականջ լցնում։ Երեխէքն էլ քնաթա-

թախ վեր կացած, թոնրի շուրջ կոզմովը բոլորուած, շարուած, ու գեռ անլուայ, ոտնելը քարին, գետնին էին ծեծում, մօրքները խօսում, որ հաց առնեն ուտեն։ Ընթարի ան, թանձր ծուխը դուռն ու երթիկը կալել, տունը մխի ծով էր շինել, այնպէս որ մարդի աչքը առաջը չէր կարում ջոկի։

Երեխանց աուգն ու շիւանը գլուխ էր տանում։ Որն օրօրոցումն էր լալիս, որը դեռ եօրղանի տակին, աչք ու բերան ծխով լեցը՝ գոռում, հարայ տալիս, հաց ուզում, որն էլ տուած հացովը հերիք չէր, էլի ժնգժնգում, ուզում էր, որ էլի տան, որ ձայնը կտրի։

Խեղճ տանտիկինը չէր իմանում, թէ ձեռը ո՞րի բերնին դնի, ո՞րի աչքը կշտացնի, ու իր բերանն ու աչքը հա՝ շատ բաց ու խուփ անելով՝ համարեա թէ մեռել էր։

Վերջապէս Աստուծոյ ողորմութիւնը հասաւ, ծուխը յետ քաշուեց, քամին դադարեց, ջրի գնացողները եկան, ողերքն էլ հաւաքուեցան։ Երեգակը մէկ նիզակաչափ եկաւ բարձրացաւ, բայց դեռ ժամուորները չեկած, «ողորմի Աստուած» չըլսած, ո՞վ էր կարող բերանը նշախաբք դնել...

ՉՈՐՍ ԵՂԲՈՐՔ

Չորս եղբարք են. ամեն տարի
Երկրիս վրայ ման են գալի.
Չորսն էլ ջոկ ջոկ ունին հասակ,
Պարգևներն են հազար տեսակ։
Առաջինն է պատանի,
Բողբոջ, տերև, սազարթ ունի,
Պայծառ արև, կանանչ արօտ,
Որոնց աղայք են միշտ կարօտ։
Երկրորդ եղբայրն երիտասարդ,
Տալիս է մեզ անձրև առատ,
Ծաղկունք ցանում է ամեն դի,
Ցոյս է տալիս առատ հընձի։
Երրորդ եղբայրն այր չափահաս,
Մրգերով լի ունի մի թաս,
Բաժանում է տղոց իւր դանձ—
Ծիրան, խնձոր, խաղող ու տանձ։
Չորրորդ եղբայրն է ծերունի,
Ցուրտ ու խաւար շալկած ունի,
Ալրի, անտառ ամայացուց,
Դաշտ ու արօտ ձիւնով լցրուց։
Գիտե՞ն արդեօք հայ ազերքը,
Որոնք են այս չորս եղբարքը,
—Եղանակներն են ասքա մեր,
Գարուն, Ամառ, Աշուն, Ձմեռ։

ԱՄԻՍՆԵՐ

(Կրկնութիւն)

1.

Մարտը տալիս է ձնծաղիկ,
Ապրիլը կապոյտ մանուշակ,
Մայիսին բացվում է վարդը,
Սոխակը երգում անուշակ,

2.

Յունիսը մեզ խոտ է տալիս,
Իսկ Յուլիսը առատ ցորեն,
Օգոստոսը տանձ ու խնձոր
Եւ ուրիշ շատ հատուն մրգեր։

3.

Սեպտեմբերը մեզ տալիս է
Խաղողի բոլոր տեսակը,
Հոկտեմբերը կարմիր գինին,
Նոյեմբերը բոդկն ու տակը։

4.

Դեկտեմբերին ձիւն է գալիս,
Յունուարին ծածկվում սար ու ձոր,
Փետրուարին սկսվում է,
Փոփոխակի ցուրտ ու տաք օր։

* * *

Ահա այսպէս բոլոր տարին
Թաւալվում է չորս շրջանում,
Այս պատճառով չորս ժամանակ,
Չորս եղանակ է մեզ բերում։

ԵՐՐՈՐԴ ՎԱՐԺՈՒԹԻՒՆ

ՕՁԱՄԱՆՈՒԿ ԵՒ ԱՐԵՒԱՀԱՏ

Զմեռն էր։ Հասակաւոր մարդիկը հաւաքուել էին օդէքը, այնտեղ էին զրոյց անում, հեքիաթ ասում եւ իրանց առօրեայ հոգսերի վրայ խօսում, խորհրդածում, Գիւլնազ տատի թոռներն էլ՝ քուրսու չորս կողմովը բոլորուած՝ իրանց տատին էին հեքիաթ ասել տալիս՝ ականջ գնում։

Մի երեկոյ Գիւլնազ տատը մի քիչ «չեմ-չեմ» անելուց յետոյ՝ սկսեց Օձամանուկի ու Արեւահատի հեքիաթը, որ երեխէքը դեռ չէին լսած, եւ աչքները չորս արած՝ ականջ էին գնում։

Ա.

—Դէ լսեցէք, երեխէք, սկսեց Գիւլնազ տատը։

«Շատ հին ժամանակներում, մի հեռու երկրում, Մասիս սարի միւս երեսին էլ դեռ շատ դէնը, մի թագաւոր էր կենում։ Այդ թագաւորը շատ հարուստ էր։ ոսկին ու արծաթը անհամբարք, գոքն անթիւ, շատ ու շատ քաղաքների տէր. բայց զաւակ չունէր, այդ պատճառով իր ունեցած անթիւ գանձն ու հարստութիւնը աչքին չէր երեւում։

Ինչքան հէքիմ, ինչքան [illegible], ինչքան բժիշկներ են գալիս, գեղ ու գ[illegible]մ, ոչինչ չի լի-

նում։ Ցեռոյ՝ էլ գրբաց ասես, փալչի ասես, գերվիշ, ջադուքեար, ջինդար, ոչով ոչինչ չի կարողանում անել։

Թագաւորը տեսնում է, որ մարդկանցից օգուտ չը կայ, յոյսը գնում է Աստուծոյ վրայ։ Ամենայն օր մատաղ է անում, աղքատներին առատ ողորմութիւն է բաժանում, օրը եօթն անգամ աղօթք է անում, ծունր գնում, ապաչանք անում Աստուծուն—չի լինում, չի լինում, չի լինում։

Մէկ օր էլ՝ իրա մտքի խորն ընկած, յոյսը կորցրած, այդ թագաւորը մտնէ գալիս իրա պարտէզումը տխուր ու տրտում, մէկ էլ տեսնում է՝ հրէս մի սիրուն շահմար օձ՝ իր ճուտերը գլխին հաւաքած՝ ինքն ապառաժի վրայ մեկնուել, արեւգուն է արել, ճուտերն էլ խաղ են անում իրանով,—որը մօր վզովն է փախթափում, որը փորի տակն է մտնում, որը գլուխն է նրա բերանը կոխում, կամ հոտառում, լպզտում։

Թագաւորն այդ որ տեսնում է, մնում է տեղն ու տեղը սառած, փէտացած։ Մտիկ է տալիս մտիկ, յետոյ մի խոր հոգոց քաշելով ասում է—

«Փառքդ շատ լինի, Արարիչ Աստուած. օձի սիրտն էլ ես տէր գցել, որ իրա ձագերին սիրի, գուրգուրի. բայց ինձանում, դու էլ գիտես, որ քո տուած սէրը կայ ու կայ. ինչո՞ւ չես ինձ էլ մի օձի ձագ տալիս, որ ես էլ նրան սիրեմ, նրան գուրգուրեմ, նրանով մխիթարուիմ»։

Դու մի ասիլ, Աստուծոյ գառները՝ հէնց այդ խօսքն ասելիս՝ բացուած են լինում։ Թագաւորի այդ խօսքը Աստուծու ականջն է հասնում։

Սրա վրայ մի տարի անցած չանցած, թագաւորի

կնիկը ծնում է ու բերում—ի՞նչ էք կարծում, ի՞նչ—մի օձի ճուտ։

—Ի՞նչ ես ասում, տատի, բացականչեցին մանուկները։

—Հապա՞, երեխէ՛ք, մի օձի ճուտ։ Բայց ի՞նչ ճուտ։ Այդ ճուտը լինում է թէ չէ՝ ամեն մի շունչն առնելիս, մեծանում է, դառնում մի ժդահա, մի ահագին վիշապ։ Ծննդկանը, տատմայրը եւ միւսները ահ ու դողի մէջ ընկած՝ փախչում են, նրան թողում տեղն ու տեղը վէր ընկած։

Օձի ճուտը երբ որ տեսնում է որ մենակ է մնացել, սկսում է լաց լինել։ Բայց ի՞նչ լաց, այնպէս է ծլվլում, ծկլթում, որ թագաւորի բոլոր պալատը գղրդում է։

Թագաւորին չէին իմաց տալիս, թէ նրա կինը օձ է ծնել, բայց երբ օձի ձայնը թագաւորի ականջն է հասնում, եւ նա սկսում է հարց ու փորձ անել, նոր ընկնում են ոտները ու յայտնում, թէ՝ թագաւորն ապրած կենայ, քա չես ասիլ, թագուհին մի օձի ճուտ է ծնել, որ հիմա ահագին վիշապ է դառել, ու նա է, որ այդպէս ծլվլում, ծղրդում է։

Թագաւորն իսկոյն միտն է բերում իր խնդիրքը ու մտքը կծում է. «Հը՞մ, ասում է, ես ինչ որ ուզել եմ Աստուածանից, նա էլ այն է տուել»։ Ցեռոյ իր մարդկերանցն ասում է.—Այդ վիշապն ի՞նչ մեծութեան կը լինի, մի մարդու չափ կը լինի՞։ Ասում են դեռ չը կայ մի մարդու չափ, բայց այնպէս է մեծանում, որ մարդու մեծութիւնից էլ կանցնի շատով։ Ցեռոյ թագաւորն ասում է.—Հիմա ի՞նչ անենք, ինչ կայ, կայ։ Աստուծոյ տուածն այդ է։ Օձ է թէ վի-

շապ՝ իմ գաւակն է. պէտք է պահենք, պէտք է բան տանք ուտելու, որ քաղցած չը մեռնի։

Մարդիկը գնում են երթիկովը ուտելու բաներ են գցում առաջը, բայց օձը չի մոտենում ոչ մէկ բանի, այլ հէնց մի բերան ծծվում է։

Այդ որ իմանում է թագաւորը, ժողովում է իր գլխաւոր մարդկանցը ու հարցնում է նրանց՝ թէ ինչ պիտի տանք այս օձին, որ ուտի՝ ես չեմ ուզում, որ դա քաղցած մեռնի։ Նրանցից մինը, որ ամենից իմաստունն է լինում, ասում է՝ դա ոչ մի բան չի ուտիլ, բացի աղջկանից։ Փորձեցէք եւ կըտեսնէք որ իմ ասածը ճշմարիտ է։

Թագաւորն ասում է.—Ո՞ւմ վրայ փորձենք։ Դէ բեր առաջ քո աղջիկդ տանք իրան՝ յետոյ ուրիշներիցը կուզենք։

Դրա վրայ՝ միւս խելօքներն ասում են.—Թագաւորն ապրած կենայ, թէպէտ գուք ուզիլ գտաեցիք, որ վճռեցիք ամենից առաջ այդ խօսքն ասողի աղջիկը գցել վիշապի բերանը, բայց դրա հետեւանքը շատ վատ կը լինի քեզ համար։ Մենք ամենքս էլ չենք խնայիլ մեր աղջկերքը, կը տանք, բայց երբ որ հերթը հասնի ժողովրդին, բանն ուրիշ տեսակ կը փոխուի։ Նրանք որ իմանան՝ թէ իրանց աղջկերքը պիտի վիշապին տանք, մէջները խռովութիւն կընկնի, ամենքն էլ ոտքի կը կանգնեն ու քեզ թագաւորութիւնից կը գցեն։ Լաւն այն է, որ մարդիկ ուղարկենք ուրիշ երկրներ՝ որ գնան նրանցից աղջկերք փախցնեն բերեն։

Թագաւորը տեսնում է, որ գրանց ասածը ուղիղ է՝ մարդիկ է ուղարկում Մասիսի այս երեսը՝ որ գան մեր երկրիցը աղջկերք փախցնեն տանեն։

Դէ հիմա թողնենք վիշապին, որ դեռ մի քանի օր քաղցած մնայ, մենք էլ այն մարդկանց հետ գանք Մասիսի այս երեսը։

Մասիսի այս կողմումը մի մեծ գիւղ է լինում, անունը Արեւանի։ Գիւղի բնակիչները բոլորն էլ հայեր են լինում, ինչպէս հիմա մենք ենք։

Այդ գիւղումը մի մարդ ու կնիկ են լինում կենալիս, երկու էլ ազջիկ են ունենում։ Կնիկը մարդու յետուսկինն է լինում։ Ազջկերանց մէկն էլ մարդու առաջուայ կնկանիցն է լինում, միւսը յետուայ կնկայ հետ բերովի։

Մարդը իր հարազատ աղջկանը շատ էր սիրում, բայց խորթ աղջկանն էլ չէր ատում։ Իսկ ինչ որ կընիկն էր, նա ուրիշ տեսակ բնութիւն ունէր. շատ չար ու նախանձոտ սրտի տէր էր։ Նա իր աղջկանն էր սիրում, իսկ միւսին ատելով ատում էր։ Նրա լոյս աչքը խաւարացրել էր։

Մարդու աղջկայ անունը Արեւահատ էր, կնոջ աղջկանը՝ Մամիխ։ Արեւահատը հէնց ուղիղ արեւահատ էր. նրա երեսը արեւի նման շափաղ շափաղ էր անում, այնքան սիրուն էր. միւսն էլ հէնց ուղիղ մամիխ էր—մամուխի պէս սեւ, նրա թիփի նման փշփշոտ ու կոթռուռած։

Խորթ մոր բարկութիւնը շատ էր գալիս, թէ ինչի իր աղջիկը այնքան ոգեղ ու գէշ էր, իսկ Արեւահատը այնքան սիրուն, այնքան գեղեցիկ։ Ամբողջ օրերով աշխատեցնում էր Արեւահատին—աթար էր շինել տալիս, կով էր կթել տալիս, հաց էր թխել տալիս, աման էր լուանալ տալիս, խոտ ու գարման էր կրել տալիս, որ նրա սիպտակ ձեռները կնճռոտուին,

նրա շարմաղ երեսն այրուի, սեւանայ, նրա շիմշատ մէջքը կորանայ, որ նրա ուժը պակասի, գունաթափուի, թառամի. բայց ընդհակառակն, նա աւելի էր ուժգնանում ու գեղեցկանում, իսկ միւս աղջիկը, որ աղջիկ-պարքնի պէս էր մեծանում, օրէցօր աւելի էր նիհարում ու գէշանում։

Արեւահատը աշխատելուց չէր նեղանում. նա այնպէս էր սովորել աշխատանքին, որ առանց տիպելու էլ ինքը մի բոպէ հանգիստ չէր նստում։ Հէնց որ ծանր աշխատանքը վերջացնում էր, տղամարդու անելիքներն էլ ինքն անում, պրծնում էր, ձեռք էր զարկում իր մանուածին ու գործքին։ Տանը ջահրայ էր մնում, ջուր գնալիս էլ՝ իլիկը կամ սկսած գուլբան էր հետը տանում, որ աղբրին, մինչեւ հերթն իրան կը հասնի, մինչեւ կուժը կը լցնուի, ինքը պարապ չը կանգնի, ցախառհայի չը տայ, իր իլիկը մանի կամ գուլբան անի։

Ամեն բան Արեւահատի ձեռքիցը գալիս էր – հոբագործ, գետնագործ, ոստանագործ, կար, ձեւ, եփել, թխել, կթել, հարել, շինել, սարքել։ Մի խօսքով՝ մի աղջիկ էր, որ հատը չը կար. բայց ինչ կանես, որ խարի մար ձեռք էր ընկել, իր արած բանը ինչքան լաւ էր լինում, այնքան վատ էր թվում անգութ մօրը։ Ամեն անգամ, չար գայլի նման, մի պատճառ էր փնտրում ու անմեղ Արեւահատին ոտի տակը գցում, տրորում, մազերից քաշքաշում, քիթ ու պռունկը տրունդուայ անում, մարդուն էլ հաւատացնում, թէ քո աղջիկը հոգիս բուկս է հասցնում իր չարութիւնովն ու կամակորութիւնովը։ Արեւահատը չէր կարողանում իրան արդարացնել. ուզում էր մի խօսք

ասել, արտասուքը խեղդում էր նրան. հայրն էլ հաւատում էր կնոջ խօսքին ու բարկանում աղջկայ վրայ։

Արեւահատը իր օրտի ցաւերը միշտ իր մօր գերեզմանի վրայ էր թափում։ Նատ անգամ գնում էր գերեզմանատուն, մօր գերեզմանի վրայ չոքում, ապի արտասուքը թափում, գանգատվում, սիրտը հանգըստացնում։ էլ ետ գալիս տուն։ Նատ անգամ մօր գերեզմանի վրայ էր գնում գլուխն ու քնում, երազումը մօրը տեսնում, վզովն ընկնում, փաթաթվում։ Նա էլ մխիթարում էր նրան ու խրատ էր տալիս, որ բարի լինի, բարի կենայ, ամեն նեղութեան համբերի։ «Աստուած չի կորցնիլ անմեղին, ասում էր նա, միայն դու այնպէս կաց, որ Աստուած քեզ հաւանի, քեզ սիրի, այնուհետեւ նա իր պաշտպանութիւնը քեզանից չի խնայիլ, քեզ այդ նեղութիւնից կազատի»։ Այս խօսքերը լսելով՝ Արեւահատը նոր ուժ, նոր հոգի էր ստանում, մխիթարվում էր, ցաւերը մոռանում, օրէ օր վարդի նման բացվում, մանիշակի պէս փնջվում։

Այնքան արդար ու անմեղ էր նրա հոգին, որ ամեն առաւօտ երեկոյ աղօթք անելիս՝ նրան այնպէս էր թւում, թէ իր հոգին թռչում, վերանում է մինչեւ երկինքը, հասնում Աստուծոյ աթոռին, այնտեղ Նրա հրեշտակների հետ փառաբանում Նրա անունը։

Աղօթմութիւնն այնպէս էր տալիս, որ նրա տուած շատ քիչն էլ աղքատի աչքումը այնքան շատ էր երեւում, որ խեղճ մարդը աչքերը երկինքն էր գցում, ու արտասուքն այդ աչքերին՝ Արեւահատի համար արեւշատութիւն խնդրում։

Թէ Աստուած էլ շատ սիրում էր Արեւահատին, այդ մասին ես կասկած չունիմ։ Երբ որ մի մարդու Աստուած չը սիրի, չարը նրան չի ատիլ ու բարին նրան չի սիրիլ։ Բոլոր անմեղ արարածները նրան տեսնելիս ցնծում, խնդում էին, այնքան էին սիրում։ Իրանց տանու բոլոր կենդանիները, կովը թէ եզը, ոչխարը թէ այծը, շունը թէ կատուն խորթ մօրը տեսնելիս՝ փախչում էին կամ վրան խէթ խէթ մոիկ տալիս,—շունը հաչում էր վրան, կատուն չանգռում էր, կովը չէր թողնում իրան կթի, քացի քացի էր տանում։ Ձին խրտնում էր, եզը պլըշում, այծն ու ոչխարը փախչում էին։—բայց այդ միւնոյն կենդանիները, այդ անմեղ անասունները երբ Արեւահատին էին տեսնում, շրջապատում էին նրան, փաղաքշում, լիզ տալիս, մէկ մէկու հարու տալով՝ իրար ձեռքից խլում։ Կովը կթուելիս՝ երբ որ տեսնում էր թէ Արեւահատը չաւ չի նստած՝ ինքն այնպէս էր կանգնում, որ կթելը յարմար լինի։ Ջորը կամ այգի գնալիս՝ շունը կշտիցը չէր հեռանում, որ նրան ամէն չարից, փորձանքից պահպանի, նրա հրամանին միշտ արթուն, միշտ պատրաստ լինի։

Ահա այսքան գեղեցիկ, այսքան բարի ու այսքան սիրելի էր Արեւահատը. բայց ինչ կանես որ խորթ մօր սիրտը քարացել էր, խճմռանքը մեռել, ամօթը կորել. խեղճ Արեւահատի համար նոր նոր տանջանքներ էր հնարում։

Հէնց այդ օրերումը գիւղումը լուր է տարածվում, թէ հանդ գնացող ոչխարները էլ յետ չեն գալիս, մի վիշապ է լոյս ընկել, նրանց կուլ է տալիս։

Այս լուրը շատ ուրախացնում է խորթ մօրը։

Ասում է, այս լաւ դառաւ. այս յիմար աղջկանը կու զարկեմ հանդ, թող գնայ վիշապի բերանն ընկնի։ Մի օր կով ու ոչխար Արեւահատի առաջն է անում, թէ տար հանդումն արածացրու։ Մի հաց էլ տալիս է, թէ այս էլ կը տանես հետդ մանր կածես, երեկոյին էլի յետ կը բերես, որ ես ուտեմ։ (Որովհետեւ հանդումը մանր ածած հացը խիստ համով է լինում, ուզում է որ այն համով հացը ինքն ուտի)։ Շատ էլ բուրդ է տալիս, թէ այս էլ մինչեւ երեկոյ բոլորը բարակ կը մանեսես, հետդ կը բերես։

Արեւահատը կով ու ոչխար առաջն արած, քշում է նրանց, առանց իմանալու, թէ մինչեւ ուր պիտի տանի։ Վերջապէս՝ երբ որ հասնում է մի լաւ կանաչկոտ տեղի, տեսնում է, որ դեռ արածացրած չէ, այնտեղ նստում է, իլիկը մանում, իր գառն օրը լալիս։ անմեղ անասուններն էլ մշմշալով արածում են։

Իրիկնապահին, արեւի մարէմար ժամանակը, հէնց որ ուզում էր, թէ վեր կենայ, տաւարն առաջն անի, գնայ տուն, մէկ էլ տեսնում է, որ ահնամի պառաւ կնիկ կայ կշտին կանգնած։ Վեր է կենում, որ շանս առաջին կանգնի, որ պառաւին չը կծի, պառաւն ասում է. «Մի վախենար, Արեւահատ, շունն ինձ չի կծիլ. նա էլ է իմանում, որ ես չար պառաւ չեմ. տեսնում ես՝ ինչպէս ուրախ է, ինչպէս է շարժում պոչը»։

—Բայց դու ով ես, ասանէ, ես քեզ չեմ տեսած, դու մեր գեղիցը չես, հարցնում է Արեւահատը։

—Ես ոչ մի գեղից չեմ, հոգիս, ես այս երկրիցը չեմ։ ես Արեւի մայրն եմ։ եթէ լսել ես, «Արեւ մայր»

որ ասում են՝ ես եմ։ Քո գառն օրերը, քո անմեղութիւնը իմ գութս շարժեցին. ես եկել եմ, որ քո տարաբախտութեանը վերջ տամ։ Զգիր առաջեւս. ես քեզ պիտի օրհնեմ, որ դու գնաս քո մուրազին հասնես։

Պառաւի այս խօսքերը շատ զարմացնում են Արեւահատին։ Մէկ էլ լաւ մտիկ է տալիս, տեսնում է, որ իր ծանօթ կանանց նման չէ։ Այնպէս էր շողշողում նրա ամբողջ հագուստը, որ կասես ոսկուց է ձուլած եւ ոչ թէ սովորական պաստառներից կարած։ Նրա աչքերը այնպէս էին ցոլցլում, փայլում՝ ինչպէս արեւի ճառագայթները։ Նրա խօսելու ձեւն այնքան քնքուշ էր, ձայնն այնքան անուշ, որ Արեւահատին թվում էր, թէ իր հարազատ մայրն է խօսում հետը։ Հէնց որ պառաւն ասում է՝ չոքիր, նրա ծնկները թուլանում են. ընկնում է առաջը, ուզում է Արեւամօր ոտները համբուրի, բայց նա Արեւհատի գլուխը բարձրացնում է, ձեռքը դնում է վրան եւ հետեւեալ օրհնանքը տալիս.

«Աքիդ տակին վարգ՝ բացուին,
Զորս կողմդ փռուի մանիշակ,
Բարով հասնես քո մուրազին,
Դլխիդ տեսնեմ թագ ու պսակ։
Քո ժպիտը վարդի նման,
Արտասունքդ մարգարիտի,
Ուր որ գնաս, Աստուած քեզ հետ,
Օձ ու կարիճ քեզ չը խայթի։
Քո խրճիթը պալատ դառնայ,
Ողջ սիւները անգին քարից,
Պատ ու յատակ ոսկի, արծաթ,
Առաստաղը գոհարներից։...

Այսպէս օրհնում է Արեւամայրը եւ էլի ուրիշ շատ բաներ է ասում, խրատներ է տալիս, գուշակում է նրա ապագան, ամեն բան առաջուց ասում է եւ զգուշացնում։ Յետոյ ասում է՝ դէ վեր կաց, սիրուն Արեւահատ, ես քեզ սիրեցի, ես քեզ օրհնեցի, ես քեզ ազօթեցի, որ էլ այսուհետեւ քեզ մի վնաս չը լինի, քո մէկ մազը չը պակսի։ Յետոյ համբուրում է Արեւահատին ու ասում.—այս համբուրելս ես քո գեղեցկութեան վրայ իմն էլ եմ աւելացնում։ Յետոյ տալիս է մի փոքրիկ կապոց։ Այդ կապոցի մէջ լինում է մի ձեռք հագուստ։ Բայց ի՞նչ հագուստ, բոլորը անգին քարերով զարդարուած ու այնքան էլ նուրբ, այնքան բարակ է լինում, որ հէնց իմանաս, ոչ բամբակից է, ոչ մետաքսից, այլ արեւի ճառագայթներից է գործած։ Ասում է՝ այս կապոցը ծոցումդ կը պահես, մինչեւ քո հարսանիքի օրը, միայն այն օրը կը հագնես։ Ես հիմա գնում եմ, իմ որդին ինձ է սպասում։ Այս էլ ասելուց յետոյ՝ անհետանում է։ Հէնց որ նա անհետանում է, արեւն էլ մայր է մտնում։

Այս անցքն այնպէս զարմացնում է Արեւահատին, որ չի իմանում, քնա՞ծ է, թէ արթուն, երազումն է տեսնում, թէ ճշգրիտ։ Ձեռը ծոցն է տանում, տեսնում է, որ կապոցը տեղն է. ուրեմն երազում չեմ, ասում է ինքն իրան եւ այնքան ուրախանում է, որ բոլոր տխրութիւնը փարատւում է, ունքերը բացվում, երեսը գուարթանում, քաղցածութիւնն անցնում։

Վեր է կենում իրա կով ու ոչխարը առաջն ա-

նում, ճանապարհին նրանց ջոկ ջոկ շփելով իր ուրախութիւնը նրանց պատմելով գնում։

Գնում է գնում, մէկ էլ տեսնում է որ ահա մի քանի ձիաւոր են գալիս զէնք ու զրահում կոլոլուած։ Արեւահատի սիրտն խմանում է, որ լաւ մարդիկ չը պիտի լինին։ այդ բանը շունն էլ է իմանում եւ զանազան շարժմունքներով իր վախն իմաց է տալիս Արեւահատին։ Տեսնում է, որ գրանց ձեռքիցը փախչել չի կարող, իսկոյն ցեխ է քսում երեսին, որ իր սիրունութիւնը նրանց աչքումը չերեւայ, որ իր վրայ ուշադրութիւն չը դարձնեն։

Մարդիկը գալիս հասնում են եւ տեսնում մի գէշ աղջիկ։ Ցեղոյ մէկ մէկու իրանց լեզուովն սաստում են՝ մեզ համար մէկ է, սիրուն եղած, գէշ եղած, երկուսն էլ վիշապի փորը պիտի մտնին։

Հիմա դուք իմացաք, կարծեմ, թէ գրանք ինչ մարդիկ պիտի լինին։ Ասում են՝ «աղջիկ, էլ գէս ու գէն չը փախչիս, արի մեզանից մէկի գառակին նստիր, քեզ պիտի տանենք»։

Արեւահատը մնում է շուարած։ Մտքումն ասում է՝ էլ ի՞նչ կարող եմ անել. ուր տանում են՝ թող տանեն. մեր տանից խօմ վատ տեղ չեն տանելու, իմ խորթ մօրիցը խօմ կազատուիմ։ Իրա կողմի, ոչխարների աչքիցը պաղպղում է, նրանց մնաս բարով ասում ու նստում մէկի գառակին։ Խեղճ անասունները կարծես իմանում են բանի էութիւնը, սկսում են եռեւիցը բառանչել ու մայել, իսկ շունը չի բաժանվում նրանից, այլ մնգսալով ու անգանգալով գնում է նրանց յետեւիցը։

Այդ աւազակները գնում են մի քարափի դէմ ընկնում, այնտեղ վեր են գալիս, Արեւահատին ներս

տանում մի մեղարա։ Հէնց որ ներս է մտնում, տեսնում է որ ի՞նչ, մինչեւ երեսուն քառասուն աղջիկանից աւելի կան, շրջակայ գիւղերից հաւաքած այնտեղ։ Այդ խեղճ աղջիկները այնպէս էին հեծկլտում, որ տեսնողի մազերը փշաքաղում էր։ Վախենում էին, թէ բարձր ձայնով լաց լինին. ձայններից փարներն էին գցել ու արտասուքի հեղեղ էր, որ թափում էին հեկեկալով։

Արեւահատը նրանց սիրտ է տալիս, թէ՝ մի վախենաք, մեզ կը տանեն կը ծախեն, մենք էլ կը փախչինք կը գանք էլի մեր աշխարհքը։ Բայց շատերն իմանում էին, որ իրանց պիտի տանեն վիշապին տան, որովհետեւ նրա համար տարածուել էր ամեն տեղ։

Մութը որ վրայ է հասնում, գրանց դուրս են բերում, քարափիցը, ու առաջներն արած՝ ասպով, ձորով քշում տանում օձահայր թագաւորի մօտ։

Այսպեղ Գիւղնաղ տատն ասում է՝—երեխէք, ես բնզարեցի, քունս տանում է, մնացածն էլ էգուց իրիկունը կասեմ։ բայց երեխէքը վրայ են թափվում, քունը փախցնում, թէ չի լինիլ, պէտք է վերջացնես, որ տեսնենք վերջն ինչպէս է լինում։ Գիւղնաղ տատը ճարահատած շարունակում է. բայց որովհետեւ քունը տանում էր, էլ շատ չի երկարացնում։

Գ.

Աղջկերքը տեղ են հասնում։ Քաղաքի մեծ ու փոքրը հաւաքվում են, որ տեսնեն ինչ աղջկերք են եկողները, ու տեսնում են որ ի՞նչ, բոլորն էլ հայ աղջկերք, մինը քան գմիւսը գեղեցիկ։ Շատ ափսոսում

են, որ այդ խեղճերը պիտի վիշապի կերակուր դառնան, նրանց միջին միայն Արեւահատն է ամենից ագեղ երեւում, որովհետեւ երեսին ցեխ ու մուր էր քսել, սիրունութիւնը չէր երեւում։ Թագաւորը հրամայում է, որ դրանց լաւ տան մէջ պահեն, լաւ հագցնեն, լաւ ուտեցնեն, գիրացնեն եւ օրէնը մէկը տան օձին։ Առաջին օրը ընտրում են Արեւահատին, թէ՝ սա ամենից ագեղն է եւ չի էլ վախենում։ առաջ որան տանենք, որ մի անենքն էլ սիրա առնեն։

Բռնում են Արեւահատի կռնիցը, թէ՝ դէ արի գնանք, քեզ պիտի մարդու տանք, քո փեսացուն Թագաւորի որդին է, դու Թագուհի կը դառնաս։ Այսպէս խաբելով՝ կռնիցը բռնած՝ տանում են օձի քնակարանը, որ Թագաւորական պալատումը մի ընդարձակ տեղ էր բռնում իւր առաջի պարտէզովն ու նրա միջի գեղեցիկ հաւուզներովը։

Երբ որ մոնում են պարտէզը եւ այնտեղից ուզում են դուռը բաց անեն, ներս գցեն, Արեւահատն ասում է։—Որովհետեւ ինձ տանում էք Թագաւորի որդու մօտ, Թողէք առաջ այս հաւուզումը երեսս լուանամ, հագուստս շտկեմ, մազերս սանդրեմ, Թէ չէ՝ ամօթ է։ Ասում են՝ շատ լաւ. ինչ անում ես՝ արա. մենք կը հեռանանք կշտիցդ, որ դու չամաչես մեզանից։

Արեւահատը որ մենակ է մնում, երեսը լուանում է, գլուխը սանդրում, Արեւամօր տուած հագուստը հագնում է։ Այսպէս զուգուած, զարդարուած որ դուրս չի գալիս, նրա տանող մարդիկը մնում են ապշած. այնպէս են կարծում Թէ մի նոր արեգակ

դուրս եկաւ պարտէզիցը. չեն հաւատում, որ նա իրանց տարած աղջիկն է, որ նա մի հողեղէն է. ասում են սա երկնքից կը լինի եկած խեղճ աղջկայ կերպարանքով, բայց հիմա փոխուեց իր պատկերն առաւ։

Արեւահատը մոտենում է նրանց, ու էլ խեղճ խեղճ չի խօսում, այլ հրամայում է, Թէ՝ ինչ էք պլըշել տաւարի պէս. ցոյց տուէք ինձ ճանապարհը. մի՞ր պիտի գնամ։ Այսպէս որ հրամայում է նրանց, նրանք զարմանում, սարսափում են. չոքում են առաջին, մեղայ գալիս, խնդրում են որ իրանց յանցանքը ների։ Ասում են՝ քեզ բերել ենք ոչ Թէ մարդու տալու, այլ վիշապին, որ ահա այս տան մէջն է։ Եթէ ուզում ես, մենք քեզ կազատենք, Թէկուզ Թագաւորը դրա համար մեզ խեղդել տայ։

Արեւահատն ասում է՝ հարկաւոր չէ՝ տուէք ինձ այս դռների բանալիքները, գուք գնացէք. ես վիշապից չեմ վախենում։

Բանալիքներն առնում է, բաց է անում դուռը, սենեակից սենեակ անցներով՝ մոնում է մի մեծ դարբաս. տեսնում է որ ահա այստեղ, տախտի վրայ մի ահագին վիշապ է մեկնուած։ Արեւահատը մի քիչ հեռու կանգնում է ու ասում։—Բարով քեզ, Թագաւորի որդի։ Ես Արեւամօր կշտիցն եմ գալիս. նա շնորհաւորում է քո ծնունդը ու քեզ արեւշատութիւն է ցանկանում։

Վիշապը գլուխը բարձրացնում է ու սուր աչքերով մտիկ է տալիս Արեւահատին։ Արեւահատը սկսում է դողդողալ, բոլոր ջանը սարսռում է, մազերը փշաքաղում։ Օձը տեսնում է, որ Արեւահատը վախենում է, գլուխը շուռ է տալիս՝ տանում պոչի մօտ, բայց մէկ էլ

էլի յետ է դառնում մոխիկ տալիս. այսպէս կրկնում է մի քանի անգամ եւ խեղճ ապիկանը հայ ու մնայ է առնում։ Յետոյ Արեւաշատի միտն է ընկնում Արեւամնր տուած խրատը. նոր սիրտ է առնում ու ասում է։— «Թագաւորի որդի, եթէ ինձ ուսելու ես, մի անգամից կալ տուր, ես պրծնեմ, էլ ինչու ես ինձ այսպէս տանջում։ իսկ եթէ ոչ՝ Արեւամնր անունովը ես քեզ հրամայում եմ՝ գնա՛ր ասի քա խորխիդը»։

Այս խոսքի ասելն ու վիշապի կծկուելը միեն է դառնում։ Կծկվում է, կծկվում, կլոլվում, գոլգոլում, ոլորվում ու մեկ էլ ար չի տրտրում։ Նրա ձայնից բոլոր պալատն այնպէս է թնդում, որ թագաւորն ինքը տեղիցը վեր է թռչում։

Ամեն կողմից վազում, գալիս են, որ տեսնեն ինչ պատահեց, ու գալիս տեսնում են որ ինչ— վիշապի խորխը մի կողմ ընկած նրա տեղ սպիտակ աստանում փաթաթուած մի տիրուն տղայ, մնան էլ խաս ու զումարում ծփալիս, արեւի նման շարմաղ մի ապիկ նստած՝ իրար հետ խաղում, ծիծաղում են։ Իսկոյն վազում են թագաւորին ականջաբռնուկ. նրան աչքալայս են տալիս ու ասում՝ գա՛ տեսի, օձը մի մի բուն, շարմաղ տղայ է դառել։ Թագաւորը, թագուհին վազում են, իրանց որդուն ջոկ, Արեւաշատին ջոկ, գրկում, համբուրում։ Ծղային հագցնում են, գուգում, զարդարում, անունն էլ դնում են Օձամանուկ։ Յետոյ Օձամանուկին ու Արեւաշատին հօին օր հօին գիշեր հարսանիք են անում։ Նրանց հասնում են իրանց մուրազին, գոլք էլ հասնէք ձեր մուրազին։

ԱՐԵՒԱՄԱՆՈՒԿ

ՀԻՆ ԶՐՈՑՑ

ԱԶԳԱՑԻՆ ԴՈՒՐՑԱԶՆԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՑ

ՍԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ԱՐԵՒԱՄԱՆՈՒԿ

1.

Մի գեղեցիկ գարնանային առաւօտ էր։

Արեւը նոր դուրս էր եկել ու իր բարի լոյսը տուել Մասիս սարին։

Մասիսի ձիւնապատ գագաթը սկսել էր այնպէս փայլել փայլփլել, այնպէս կանաչ կարմրին տալ, որ տեսնողի խելքը գնում էր։

Մի ժամից յետոյ սարի զանազան մասներից քուլայ քուլայ ամպեր բարձրացան, ու աջ ու ձախ, վեր ու վայր շարժուելով, մեծանալով ու փոքրանալով, փռուելով ու խմբուելով, զանազան ձեւեր ստացան։

Սարի ստորոտումը ձեւացաւ մի ամպեղէն ծով, մէջքին մի հաստ գօտիկ, կողքին մի հսկայական թուր, գլխին մի պսակ, պսակ գեղեցիկ, նուրբ և այնքան հրաշալի, որ հէնց իմանաս ամեն գոյնի զոհարներից էր շինուած կամ ծիածանի գոյներից էր հիւսուած։

Այս հիանալի պատկերները ամենայն առաւօտ նկարվում էին Մասիսի վրայ, բայց ոչ ոքի ուշադրութիւն չէին գրաւում։

Ոչ ոք ժամանակ չունէր նայելու։ Ոչ ոք ճաշակ չունէր հիանալու։ Դա մի սովորական երեւոյթ էր ամեն-

քի համար, մի հասարակ արևաբաց էր, որ շողշողալով՝ ամենքին իմաց էր տալիս, որ վեր կենան, իրանց գործին կենան, իրանց բանին գնան։

Այգեպանն շտապում էր, որ շուտով այգին գնալ ու անցած օրուայ կիսատ թողածն աւարտի, տաւարածը տապարն էր արօտ տանում, աղջկերքն ու հարսները ղէպի աղբիւրն էին վազում, պառաւները կերակուրի պատրաստութիւնն էին տեսնում։

Բայց այս անգամ մէկը կար, որ Մասիսին էր նայում, նրա ամպեղէն պատկերներից հիանում ու զուարճանում։

Այդ մէկը մի մանուկ էր։

Մի առոյգ, զուարթ ու սիրուն մանուկ։

Մի ոսկեմեղ մազերով, նախշուն աչքերով մանուկ։

Նորա երեսը արևի նման լոյս էր տալիս, ձեռնի նման փայլում։

Նրա աչքերը արեգակի նման հառագայթներ էին արձակում։

Նա կարծես հողեղէն չէր, այլ հրեշտէն։

Նա հէնց իմանաս Արեգակի ծնունդը լիներ, Արևի որդին։

Եւ հէնց անունն էլ Արևամանուկ էր։

2.

Ամեն առաւօտ, երբ արևի շողքն ընկնում էր Մասիսի վրայ, Արևամանուկը պէտք է վեր կացած լինէր, որ մայր արևի առաջին ողջոյնը, առաջին բարի լոյսն ընդունէր։

Նա շատ էր սիրում ամպեղէն երևոյթների, ամպերի ձևերի վրայ նայել։

Առաւօտեան արշալոյսը, թէ երեկոյեան վերջնալոյսը — որ կրակէ գոյնով ներկուած, նկարում են հորիզոնի վրայ կուտակուած ամպերը — հազարաւոր պատկերներ էին ցոյց տալիս նրան։

Ամպերի շարժումները, նրանց ձևափոխութիւնները գրաւում, յափշտակում էին նրա աչքն ու միտքը։

Առաւօտ էր լինում՝ թէ երեկոյ, խաղաղ էր լինում երկինքը՝ թէ փոթորկալից, կուտակուած էին լինում ամպերը՝ թէ ցրուած, մի ուղղութեամբ էին շարժում՝ թէ զանազան, — նա այդ ամեն ձևերին ու շարժումներին մի միտք, մի նշանակութիւն էր տալիս, ու ամեն ինչ, որ լսել էր հէքիաթներումը, տեսնում էր նրանց մէջ։

Այդ ամպերը շատ անգամ նրա աչքումը միշտ պանելի կերպարանք էին ստանում և մէկ մէկու կուլ տալիս։

Երբեմն գազաններ էին դառնում ու իրար հետ կռվում։

Երբեմն դառնում էին ոչխարի հօտեր ու մի լեռնաչափ հովիւ էլ՝ գերանաչափ մի սրինգ բերանին դրած՝ ածում էր։

Երբեմն դառնում էին մեծ մեծ վրաններ ու նրանց մէջ ներս ու դուրս էին անում վիթխարի հսկաներ։

Երբեմն դառնում էին զօրախումբեր ու իրար դէմ պատերազմում։ Այդ լինում էր աւելի փոթորկի ժամանակ, երբ որոտում էր երկինքը, փայլատակում կայծակը ու ամպերն իրար էին խրվում։

Արևամանուկը ոչ միայն չէր վախենում այդ որոտմունքներից, այլ բարձրանում էր մի քարի վրայ, ու ամպերին հրամաններ էր տալիս՝ գոչելով — խառնջ, յեռ, մջ, ձախ, միասին, կարգով, արագ...

Այսպէս բղաւում էր հեռուից, մինչև կարկուտը կամ տարափը վրայ էր տալիս ու մեր մանուկ գօրապետին փախցնում, ձգում քարայրերի ու ծառախոռոչների մէջ։

Ինչպէս տեսնում էք, մեր Արևամանուկը թէպէտ դեռ փոքր էր, հազիւ տասը կամ տասներկու տարեկան կըլիներ, բայց շատ սրտոտ էր ու սրամիտ։

Երևում էր որ ժամանակով մեծ ու երևելի մարդ պէտք է դառնայ։ Այդպէս էին ասում բախտ գուշակողները, այդպէս հաւատացած էին ամենքը։

Բայց նա այժմ դեռ մի գառնարած էր։

3.

Այս ինչ որ ասում եմ, ով է իմանում, թէ մեզանից քանի քանի տարի առաջ է եղել։ Եթէ ասեմ հազար տարի, երկու հազար տարի, երեք հազար տարի, էլի քիչ կըլինի։

Այդ հին ժամանակներումը Մասիսի ու Արագածի արանքումը, ուր որ հիմա Արարատեան մեծ դաշտն է, ուր որ մեր Սուրբ Էջմիածինն է, Երևան քաղաքն է, Երասխ գետն է, Գեղամայ ծովն է, ահա այդ դաւառումը մի մեծ գիւղ է լինում, Արևան, թէ՞ Արմավան անունով, հաստատը չգիտեմ, և յատուկ տեղն էլ չեմ կարող ձեզ ասել։

Արմավանի օդն ու ջուրը շատ մաքուր էր ու առողջարար։ Նրա աղբիւրը քառասուն ակն ունէր, քառասուն տեղից բղխում էր ու յետոյ միանում, դառնում մի այնպիսի գետ, որ եօթը ջրագաց էր պտտեցնում։ Բացի դրանից գիւղի հանդերն էլ լիքն էին անմահական աղբիւրներով։ Այդ աղբիւրներն ամենքն էլ մի մի անուն ունէին իրանց յատկութեանը յարմար տուած։ Որին ա-

սում էին «կաթնաղբիւր», որին «սառնաղբիւր», որին «տղաքերուկ», որին «պարկակերի», որին «գառնակերի» և ուրիշ անուններ։

Լաւ աղբիւրը շատ սիրելի բան է։ Նա իւր խմողի երեսին խնդում, ծիծաղում է, ականջին քշփչում, թաքուն բաներ ասում. մտաը պառկողի միտքն օրօրում է ու վրան անուշ քուն բերում։ Երանի՜, հազար երանի՜ այն մարդուն, որ իր մանկութեան ժամանակ այդ պիսի տեղերում է անց կացրել իր կեանքը, անմահական աղբիւրների ու ծաղկունքների ծոցումն է մեծացել...

Արմավանի հայերը, թէ մարդիկ և թէ կանայք, բոլորն էլ գեղեցկադէմ, վայելչակազմ, ուժեղ ու բարձրահասակ էին։ Գլխացաւ, փորացաւ, սրտացաւ, թկացաւ, ծաղիկ, կարմրուկ և ուրիշ բոլոր մեր տեսած ցաւերի անունը նրանք չէին լսած։ Մարդիկը հիւանդ էին լինում միայն այն ժամանակ, երբ վիրաւորուած էին լինում գազանից կամ թշնամուց և կամ ծառից վայր ընկած։ Նրանց կեանքը շատ երկար էր. շատ էին ապրում։ Այնքան ապրում էին, որ շատ ապրելուց բեզարում էին։ Շատ քիչ ապրողը հարիւր տարի էր ապրում, բայց սովորաբար երկու և երեք հարիւր տարի էլ էին ապրում ու մի քանի անգամ ատամները փոխում, նոր ուժ ստանում։

Ծերացած հայրը ունենում էր քսան, երեսուն զաւակ, երեք - չորս այդ չափ էլ թոռներ, մի այնքան էլ ծոռներ։ Մի գերդաստանի, ընտանիքի մէջ մինչև երեք-չորս հարիւր հոգի էին լինում, բոլորն էլ իրար հնազանդ, ամեն փոքրը իրանից մեծին, և ամենքն ի միասին՝ մեծ հօրը և մեծ մօրը։

Մեծ հայրը միւս բոլոր հայրերի գլխաւորն էր,

գլուխն էր, և այդ պատճառով ասվում էր Հայրապետ, այսինքն Հայրերի գլուխ, կամ նահապետ, որ մի և նույն նշանակությունն ունի։

Դեղզատանի բոլոր անդամները մի լարկի, մի ծածկարանի տակ չէին մնում, այլ ջոկ ջոկ յարկերի ու ծածկոցների։ Ամեն անգամ, երբ որ մեկին պատկում էին, նրա համար ագաջուց մի վրան էին գործում բրդե կամ մագե թելից։ Ալպաքեով տարեց տարի շատանում էր վրանների թիվը։ Վրանները այն յարմարությունն ունեին, որ շարժական էին, և ուր ուզում էին, տանում էին, փոխան սալի բարձր ու լեռնային տեղեր, ձմեռը՝ ցածր և գաշտային։ Քարաշեն տներ էլ ունեին, բայց հազարակ։ Իրանք մի տեսակ ձմերանոցներ էին, ուրիշի անասունների համար, քան թե մարդկանց։ Միայն մեծ նահապետն էր ունենում լաւ քարաշեն տուն։

Մեծ նահապետը որ վախճանվում էր, նրա մեծ որդիքը հեռանում էին միմեանցից, և դառնում էին ջոկ ջոկ նահապետներ։ Նրանք կրկին էլ էին քաժանում իրանց մեջ և ամեն մեկը մի ջոկ գաւառում էր բնակում։

Իմ ասած ժամանակը նահապետներ շատ կային, բայց ամբողջ Աբրահամեան դաշտը, Երասխի ափերը, Արագածի արևմտեան և Մասիսի հիւսիսային երեսները, Գեղամայ ծովի արևմտեան ափերը, Գառնու և Հրազդան գետերի հովիտները իրանց շրջակայ լեռներով մի նահապետի ձեռքի էին, և այդ նահապետն էր մեր Արևամանուկի հայրը։

Արևամանուկի հոր անունն էր Արևամանեակ, բայց նրա որդիքն ու թոռները դժուարանում էին ասել «Հայր Արևամանեակ», որովհետև շատ երկար էր, այդ

պատճառով ասում էին «Հայր — Մանեակ» կամ «Հայրմա»։ Իսկ նրա մոր անունն էր «Արևամատ», բայց նրան էլ փոխանակ ասելու «Մայր Արևամատ», ասում էին «Մայրմա» կամ «Մամար»։ Նույն խսկ Արևամանուկին չէին ասում «Արևամանուկ», այլ «Արմիկ» կամ «Արամիկ»։

Բայց թե ինչու ամենի անուշի մեջ էլ «արև» կայ, այդ ես չըգիտեմ, միայն շատերն ասում են՝ այդ նրանից է, որ մենք հայերս մի ժամանակ արևապաշտ ենք եղել, մեր նահապետն էլ համարվում է եղել Արևի փոխանորդ, նրա ազգական, ցեղ, ծնունդ։ Ահա այդ պատճառով նրանց մեծ մասի անունն էլ արևով էր սկսվում։ Բայց այս տեսակ մասին քաները մենք յետոյ կիմանանք։ Հիմա մենք դառնանք մեր Արևամանուկին։

4.

Ահա այսպես մեր սիրելի Արևամանուկը Արևամանեակ նահապետի որդին էր։

Գեռ եօթը տարեկան հասակում նրա թիկունքն ու կուրծքը այնքան լայն էին ու մեջքն այնքան բարակ, որից երևում էր, որ նա մի փոքր առիւծ էր, որի պէսին մեր հեքիաթներումը ասում են ասլանբալա, այսինքն՝ «առիւծի ձագ», կորիւն առիւծու։ Նրա աչքերը խոշոր խոշոր և կրակոտ էին, երկայն թեքթեւունքները մինչև վարի կոպերն էին հասնում, գլխի մազերը խիտ ու երկայն։

Հին ժամանակները մազ ածիլելու սովորութիւն չունէին, բայց խնամում էին ուսերի հաւասարութեամբ, սանդրում էին դեղի յետ ու կապում վարսակալով, այսինքն մի մազակալ ժապաւենով։ Արևամանուկի մազերի

գոյնը հրաշէկ էր, այսինքն կրակի գույն ունէր և փայլում էր ջուհարի նման։ Նա համարվում էր «հրահեր» այսինքն կրակէ մազեր ունեցող։ Այդ տեսակ մազեր ունեցողին մեր հեքիաթներումը ասում են ոսկեքաքուլ, ոսկեքոչոր։

Արևամանուկի մազերը չէին խուզում։ Այդ տեսակ մազերը ում վրայ էլ լինում էր, չէին կտրում։ Նա իր մազերը երկու հիւս էր անում և աջ բաժինը դէպի ձախ, ձախինը դէպի աջ տանում, բկովը երկու անգամ պատ տալիս, վգին կապում ու ծայրերը կախ գցում մէջքին։ Նրա համար էր այսպէս անում, որ խաղալիս ու վազվզելիս մազերն իրան չընդանգարեն։

Երբ որ Արևամանուկը ծնվում է, նրանից յետոյ նրա մայրը երկար ժամանակ երեխայ չի բերում, այդ պատճառով նրան եօթը տարի շարունակ ծիծ է տալիս և ծծից չի կտրում։ Ամբողջ օրը խաղում էր Արևամանուկը, բայց գէնց որ ճաշելու ժամանակը գալիս էր, նա առաջ մի նախաճաշիկ էր անում մօր ծծովը ու յետոյ ճաշն ուտում. մէկ էլ ճաշելուց յետոյ էր վրայ ընկնում մօր ծծին ու բերանը քաղցրացնում. գիշերն էլ մօր ծոցումն էր քնում և ամեն զարթնելիս՝ ծիծը բերանն էր առնում։

—Իսկական է, որդի, էլ ի՞նչ կայ, որ ի՞նչ ծծես, ծծերս ցամաքել են,— ասում էր շատ անգամ մայրը, բայց էլի ծիծը գնում էր բերանը, և գլուխը շփելով՝ քնացնում։

Արևամանուկը սիրում էր և կովի ծիծը ծծել։ Շատ անգամ երբ որ հարսները կովերը կթելիս էին լինում, նա անցնում էր միւս կողմը և կովի ծծերից մէկը բերանն առնում, ծծում։ Հարսները քթին խփում

էին, որ լետ քաշուի, բայց նա էլ ջգրու արձակում էր հորթի կապը, խփում էր կովին և այսպէսով ինքը յաղթում էր հարսներին և ուզածի չափ ծծում։ Պատահում էր, որ մինչև կովի կթելը՝ ինքն արդէն ցամքեցրած էր լինում ծծերը և խեղճ հորթին էլ չէր լինում բաժին թողած։

Կերակուրներից նա ամենից շատ սիրում էր իւղն ու մեղրը։ Իւղը նա կաթի պէս էր խմում, իսկ մեղրաբլիթը գաթի պէս ձեռքն էր առնում կծոտում։

Էլ ինչ ասել կուզի ուրեմն, որ ով տարով կըմեծանայ, մեր Արևամանուկը օրով էր մեծանում ու զօրանում։ Դեռ տասը տարեկան հագիւ կըլինէր, այնպէս էր աճել, զարգացել, որ տեսնողը կարծում էր, թէ առնուազն տասնըհինգ կամ տասնըվեց տարեկան կըլինի, բայց երբ դառաւ տասնըհինգ տարեկան, արդէն մի կատարեալ չինարի ծառ էր և էլ իր հասակին վայել չէր համարում իր տարիքն ունեցող մանուկների հետ խաղալ, այլ քսան, երեսուն տարեկանների հետ էր խաղում, նրանց հետ կպչում, նրանց հետ մրցում և ամեն տեսակ մարզմունքների մէջ յաղթում էր ամենքին։

Միշտ յաղթելը և ոչ մի անգամ չըյաղթուիլը մեր Արևամանուկի համար դառաւ մի այնպիսի յատկութիւն, որ յաղթուել ու մեռնել — նրա համար մի և նոյն էր։ Այդ բանը նկատել էին նրա խաղընկերները և երբ պատահում էր իրանից աւելի ուժեղների, նրանք խնայում էին Արևամանուկին և չէին ուզում յաղթել, որ նրա սիրտը չկոտրուի։ Այս տեսակ վիհանձնական սովորութիւն ունէին Արմավանցիք. նրանք նշանաւոր քաջին և ուժեղին միշտ խնայում էին, նրան սիրում, պաշտում էին և իրանց պարծանքն էին համարում։

3.

Արևամանուկն արդէն գառել էր տասնըհինգ տարեկան, բայց իր ծնողների հսկողութիւնից դեռ չէր ազատուել։ Նրա ընկերներից որը տաւարած էր, որը հովիւ, որը եզնարած էր, որը հոտաղ, բայց նրան միայն գառներն էին պահ տալիս, այն էլ միայն գարունքը, իսկ մնացած ժամանակ տանիցը չէին դուրս թողնում։ Չէին դուրս թողնում, որովհետև գիտէին որ նա ոչ մի տեղ հանդիստ չի մնալ, իր ուժը կըփորձի ամէն բանի վրայ ու փորձանքի մէջ կընկնի։

Բայց որքան շատ էին զսպում նրան ու հսկում վրան, նա այնքան աւելի էր ցանկանում վազել ընկնել անտառները, ձորերը, բան տեսնել, բան շինել, իր պարտատիկն ու նետաղեղը փորձել։

—Մայրիկ, ինձ ուղարկեցէք տաւար, — ասաչեց նա մէկ անգամ իր մօրը։— Ես աւելի լաւ տեղեր կըտանեմ արածացնելու, կովերն էլ աւելի կաթ կըտան և շատ չեն ցամաքիլ։

—Ի՞նչ հարկաւոր է, որդի, պատասխանում է մայրը։— Մենք այնքան տաւար չունինք, որքան պահողներ ունինք. նրանք էլ լաւ գիտեն, թէ որտեղ պէտք է արածացնեն։

—Բայց ես, մայրիկ, մինչև երը պէտք է տանը պարապ մնամ ու երեխանց հետ խաղամ։ Ագռիկ էլ չեմ, որ բուրդ գզեմ, դուլբա անեմ, իլիկ մանեմ։ Չէ՞ որ ես տղայ եմ։ Իմ ընկեր ազայքը բոլորն էլ տաւար են գնում, ես ինչու չըգնամ։

—Տաւարածութիւնը հեշտ բան չէ, հոգիս։ Տաւարը շատ հեռու տեղեր են տանում։ Գող է, գազան է, ամէն ինչ պատահում է տաւարածներին։

—Ես էլ հէնց դրա համար եմ ուզում տաւար գնամ, որ մի քիչ հեռու տեղեր տեսնեմ։ Ինձ ի՞նչ պիտի անեն գողերն ու գազանները։ Բա մեր շներն ինչացու են։ Մեր Կարանն ու Խեղդանը որ մօտս լինին, էլ ի՞նչ գող, ի՞նչ գազան կըմօտենայ մեր տաւարին։ Չէ, մայրիկ, ես պիտի գնամ տաւար։ Բայց եթէ չըթողնէք, ես կըփախչիմ կընկնիմ Մասիսի ձորերը, կերթամ քաջերին կըգտնեմ, կասեմ՝ «Եկել եմ ձեզ մօտ, որ ինձ սովորեցնէք լաւ ձի հեծնել, նետ ձգել, թուր ու նիզակ գործ ածել։

—Արևիկ, Մասիսի քաջերը սուր ու թուր չունին, ոչ ձի հեծնել գիտեն, ոչ նետ ձգել։

—Բա էլ ինչի՞ քաջեր են, մայրիկ։

—Հէնց նրա համար չունին, որ շատ քաջ են։ Նրանք այնքան քաջ են, որ կարիք չունին զէնք ու զրահի։ Այնքան ուժով են, որ ահագին կաղնի ծառը արմատահան կանեն, և այդ կըլինի նրանց համար ինչպէս մի թեթև մահակ, բայց այդ մահակով նրանք հազար ձիաւորի պատասխան կըտան։ Նրանք ի՞նչ կանեն նետաղեղը, քանի որ Մասիսի ատորատից բլրաչափ ժայռերը այնպէս են շպռտում, որ սարի գլխովն անց են կացնում միւս կողմը գցում։

—Այդ ի՞նչքան ուժով են, մայրիկ, ով գիտէ իրանք էլ ինչ ահագին հսկաներ են։

—Ի հարկէ, այնքան մեծ մեծ են, որ նրանց տակին ոչ թէ ձի, այլ ոչ ուղտ և ոչ փիղ կրկարենայ դիմանալ։ Ամեն մինը մի սարի չափ կայ։ Երբ որ նրանք դուրս են գալիս իրանց խոր ու մութ այրերից ու որսի

ետեւից ընկնում, Մասիսի ձորերը դմբդմբում են ու դաշտերը դողդողում։ Երբ որ Նրանք կրակ են անում, որ ճաշ եփեն, ով գիտէ քանի քանի գերան են դարսում իրար վրայ։ Նրանց Խարոյկի ծուխն ու ալիքը Մասիսի գագաթիցն է դուրս գալիս ու վրան ամպանում։

—Եթէ այդպէս է, մայրիկ, Նրանց մօտ գնալ չի լինիլ, Նրանք ով գիտէ մարդ էլ են ուտում։

—Չէ, հոգիս, Նրանք մարդակեր չեն։ Իմ պապը մէկ անգամ գնացել է Նրանց մօտ։ Ես այդ ժամանակը շատ փոքր եմ եղել, ինձ յետոյ են պատմել։ Ասում են իմ պապը որ գնացել է Նրանց մօտ, առաջ հարցրել են, թէ դու ով ես, նա էլ ասել է՝ ես Արեւազանց ցեղիցն եմ։ Այդ որ լսել են, ասել են. «Որովհետեւ դու Արեւազանց ցեղիցն ես, քեզ վնաս չենք տալ, բայց եթէ Վիշապազանց ցեղիցը լինէիր, մեծ կտորդ ականջդ կըթողէինք»։

—Ուրեմն Նրանք մեր ցեղին սիրում են, մայրիկ, իսկ Վիշապազանց ցեղին ատում։

—Այո՛, մեր ու դրանց մէջ կարծեմ մի տեսակ ազգականութիւն կայ։ Այժմեան քաջերի մայրը մեր ցեղիցն է եղել։

—Որ այդպէս է, ես կերթամ Նրանց մօտ, կասեմ ես ձեր պապանց երեխան եմ, Նրանք էլ ինձ լաւ պատիւ կըտան։

—Դու այդպէս ես կարծում, բայց ով գիտէ, վա՛ղթէ քեզ այնտեղ պահեն, էլ բաց չըթողնե՞ն։ Կըգցեն մի խոր ու մութ այրի մէջ, մի ահագին ժայռով էլ քերանը կըփակեն, յետոյ գնա կաց այնտեղ ու սպասիր, թէ քեզ երբ պէտք է ազատեն։

—Դէ որ այդպէս է, ես էլ չեմ գնալ Նրանց մօտ, բայց տաւար պիտի գնամ, ինչ կուզէք արէք։

—Ի հարկէ, որդի, էլի լաւ է տաւար գնաս, քան թէ քաջերի մօտ։ Բայց, գիտե՞ս, սիրելի Արմիկ, քո հայրը քեզ ուրիշ տեսակ է ուզում պահել։ Նա ուզում է, որ դու տուն պահել, տուն կառավարել սովորես, գնացող եկողի հանդիպես, Նրանցից խելք ու շնորհք վերցնես, մարդավարութիւն սովորես և ոչ թէ ընկնիս ձորերն ու վայրենանաս։ Ահա պատճառը, որ հայրդ քեզ տաւար չի ուղարկում։ Բայց նա ընդդէմ չի լինիլ, որ դու լաւ գիտենաս — ձի նստել, նետ ձգել, նիզակ ու վահան գործածել։ Հասկացա՞ր. բայց որովհետեւ սիրտդ շատ է ուզում տաւար գնալը, վնաս չունի, մի քանի ժամանակ էլ տաւար գնա։ Այդ քո առաջին փափագն է, թող կատարուի. թող կողքդ ու մէջքդ մի քիչ էլ տաւարումը հաստանան։

6.

Արմավանի երեխայքը շատ ուշ էին սկսում տնական հոգսերին մասնակցիլ։ Մանուկները գառնում էին տասնըհինգ, քսան տարեկան, բայց դեռ էլի համարվում էին տղայ, այսինքն երեխայ։ Մինչև տասնըչորս տասնըհինգ տարեկան գառնալը ոչ մի պարապմունք չէին ունենում, բացի ուտելուց ու խաղալուց։

Նրանց սկզբնական ուսումն ու կրթութիւնն էլ խաղն էր։ Եւ այնքա՛ն է ասենք, որ պակաս ուսում չէր և շատ էլ լաւ էր։ Լաւ էր նրանով, որ մեզ նման վազելով չորս պատի մէջ չէին փակվում ու կորցնում իրանց առողջութիւնը, մէկ էլ նրանով, որ նրանց խաղերը անմիտ ու անօգուտ խաղեր չէին։ Նրանք իրանց խաղերով աւելի լաւ էին պատրաստվում իրանց ապագայ գոր-

ծունկու

7.

Ահա այս ասոիճան զօրացած էր մեր Արևամանուկը, երբ որ սկսեց տաւար գնալ։ Տաւարումն էլ երկու թէ երեք օր միայն փոքրութիւն արաւ. շուտով տաւարածապետ դառաւ, այսինքն տաւարածների գլխաւոր։ Տաւարածապետ լինելը հեշտ բան չէ։ Նա պէտք է ամենից զօրեղը լինի և ամենից ճարպիկն ու սրտոտը։ Ճշմարիտ է, նրա գործը հեշտ էր նրանով, որ պիտի նստէր սառն աղբիւրների մօտ, հով ու գով տեղերումը և միւսներին հրամայէր, որ տաւարը մակաղից դուրս անեն, գոմէշները՝ ցեխերից, այս կողմ քշեն, այն կողմ տանեն, ետ տան, ժողովեն, ականեն, բայց և դժուար էր նրանով, որ եթէ տաւարներից մինը կորչէր, նա պիտի ման գար գտնէր, գողի ու գազանի ճանկերից նա պիտի փրկէր։ Իսկ գազաններ այդ ժամանակ շատ ու շատ կային. հիմա այնքան գայլ ու ագուէս չրկայ, ինչքան որ այն ժամանակ քաւթառներ ու փալանգներ (վագրեր) կային։ Արևամանուկը մի քանի շաբաթ շարունակ շատ լաւ պահեց տաւարը, այնպէս որ ոչ մէկի քիթը չառնեց, բայց ասած է՝ «Տատն ամեն օր գաթայ չի թիթիլ»։

Մէկ անգամ մի եզը կորչրեց. շատ ման եկաւ, վերջը մի գոռոցի ձայն հասաւ ականջը։ Մինչև ինքը ականջ կրդնէր, որ տեսնէր սրտեղից է գալիս ձայնը, իր քաջ շները — Խեղդանն ու Կտրանը — աւելի շուտ իմացան տեղը և նեռի պէս թռան գէպի ձայնը։ Գոռոցը հասարակ բառանչ չէ. այդ ձայնը հանում են միայն գազանների ճանկ ընկած ժամանակը, և այդ գիտեն՝ ինչպէս տաւարներն ու մարդիկը, նոյնպէս և շները։

Արևամանուկը ոչ մի զէնք չունէր, բացի մի հաստագլուխ մահակից։ Մահակը ձեռին՝ վազեց շների ետևից և նրանց գտաւ մի ձորակի մէջ հաչելիս։ Հեռուից նկատեց, որ մի գազան վայր էր գցել ահագին եզանը, թանթուլները դրել նրա մէջքին, իսկ գլուխը դէպի շները ծռած՝ այնպէս կատաղի կերպով նայումէ, որ աչքերից կրակ է թափվում։ Շները հաչում էին հեռուից, պոչները ներս քաշած, և սիրտ չէին անում գազանին մօտենալ։

Արևամանուկը՝ էլ չմտածելով թէ ինչ պէտք է անէր արդեօք, ասատիկ բարկացաւ շների վրայ և գոռաց. «Խեղդան, խեղդիր, Կտրան, կտրի՛ր», ու ինքը մի ճարպիկ ոստիւնով թռաւ ընկաւ գազանի մէջքի վրայ ու բռնեց նրա վզիցը։ Այդ տեսնելով՝ շները սիրտ առան ու հախուռեցին գազանի ետևից։ Գազանը բարկացաւ և ցատկեց տեղիցը, բայց նրանից պակ չեկան ոչ Արևամանուկը և ոչ շները։ Գազանն աւելի կատաղեց. երեսը շրջեց, բաց արաւ ահագին բռեխը. և ուզում էր Արևամանուկի գլուխը հախուռել ու փշրել, բայց նա իսկոյն ձեռքը ձգեց գազանի բերանը ու լեզուի տակիցը այնպէս պինդ բռնեց քաշեց, որ գազանի թանթուլները թուլացան և նա սկսեց խոխռացնել։ Գազանը որ խեղճացաւ, թուլացաւ, Արևամանուկը նրան իր տակն առաւ, աջ ոտքը նոյնպէս կոխեց գազանի բերանը և երկու ձեռքով քաշեց նրա լեզուիցը։ Այդ միջոցին Խեղդանը հախուռեց գազանի բկիցը, Կտրանն էլ փորատակերից։ Այսպէս միացած ուժով գազանին անշնչացրին, սատկեցրին։

Քափ ու քրտնքի մէջ կորած՝ յետ քաշուեց Արևամանուկը, և նոր տեսաւ, թէ ինչ վիշապ էր իր սպանածը։ Վագր էր, մի ահագին ու քուխտառ վագր, որ բոլոր շրջակայքի վրայ իշխում էր։ Նրա երկիւղից ոչ ոք չէր համարձակում տապար կամ ոչխար տանել այն տեղերը, ուր որ տարել էր Արևամանուկը։ Ամբողջ գիւղերով աշխատում էին նրան սպանել, բայց չէին կարողանում։

Եզը վաղուց արդէն շունչը փչել էր։ Անիրաւ գազանը մի հատ հարուածով կտորել էր նրա մէջքի սեռը և մի ծուէն կաշի էր հանել։

Արևամանուկը մաշկեց գազանը ու մորթին քաշ տալով՝ գնաց տուն։ Նրա այս քաջագործութեան համբաւը շուտով տարածուեց ամեն տեղ։ Ճանապարհին տարբեկան հասակում վագր խեղդել, — հեշտ բան չէ։ Բայց ով որ իմանում էր, թէ այդ քաջութիւնը Արևամանուկն է արել, չէր զարմանում. ասում էին՝ նա կարող է առիւծի բերան էլ ճղել մեն մենակ, առանց շների օգնութեան։

Արմավանցիք սովորութիւն ունէին, որ երբ մէկը մի քաջութիւն էր անում, նրա վրայ գովասանական երգ էին շինում ու երգում ամեն տօնի օր։ Երգում էին տղերքն ու աղջկերքը ձեռք ձեռքից բռնած, խմբով ու պարելով։ Այս անցքից յետոյ Արևամանուկի վրայ էլ շինեցին մի գովասանական երգ, որ ասում էին տղերքն ու աղջկերքը փոխ առ փոխ։ Ահա այդ երգը։

— Աղջկերք, պար բռնեցէք,
Արմիկի երես գովեցէք.
Ա՜յ երես, շարմաղ երես,
Դու մեզ չմոռնես սեսրես։

«Բարձր սարէն պաղ ջուր կուգայ,
Արմիկի երես կըլուայ.
Ա՜յ երես, սրեկ երես,
Քո շափաղով մեր սիրտ կծրես։

— Աղջկերք, պար բռնեցէք,
Արմիկի աչեր գովեցէք.
Ա՜յ աչեր, սիրուն աչեր,
Արևի պէս փայլուն աչեր։

«Արմիկի աչերն ալեգակ,
Մեզի կուտայ լոյս ու կրակ.
Ա՜յ աչեր, վառ վառ աչեր,
Մանուշակի թառ թառ աչեր։

— Աղջկերք, պար բռնեցէք,
Արմիկի կռներ գովեցէք.
Ա՜յ կռներ, ուժեղ կռներ,
Դուք կրշարժէք մեծ մեծ լեռներ.

«Արմիկի կռներն է գերան,
Կըպատառի վագրի բերան.
Ա՜յ կռներ, գթոտ կռներ,
Դուք կըբանաք մեր փակ դռներ։

— Աղջկերք պար բռնեցէք,
Արմիկի հասակ գովեցէք.
Ա՜յ հասակ, բարձր հասակ,
Քեզ կը վայլէ թագ ու պսակ։

«Արմիկի հասակն է ասսի,
Շուքը մեզնից չըպակասի.
Ա՜ հասակ, չինար հասակ,
Ո՞վ չի տար քեզ թագ ու պսակ։

(Մխասին եւ Թուչկոտելով)

Ո՞վ պատառեց վագրի բերան,
Արմիկ պատռեց վագրի բերան.
Վագրի բերան — ահա այսքան —
Ժանիքները մէկ մէկ գերան.
Ապրի Արմիկ, ապրի շատ օր,
Իր թշնամին ընկնի գլոր...

ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

1.

Երբ որ Արևամանուկը հասաւ տուն, վագրի մորթին ուսովը գցած, տանեցիք չըհաւատացին, որ այն ամեհի գազանը նա իր ձեռքովն է սպանել, այն էլ սարսափելի կուռով։ Վագրի հետ կռուել ու անվնաս մնալ, իրաւ որ հաւատալի բան չէր։

—Արմիկ, ասաց հայրը, ոչ մի տեղդ չի՞ ցաւում արդեօք։

—Ոչ, հայրիկ, ոչինչ ցաւ չեմ զգում, միայն կարծես թէ սաստիկ հոգնած լինիմ։

—Վնաս չունի, հոգիս, եթէ միայն հոգնած լինիս. հապա ինչու են պատռտորուած շորերդ։

Այս խօսակցութիւնից մի կէս ժամ անցած՝ տեսան որ Արևամանուկի երեսը դեղնում, սիրլիթնում է։

—Արմիկ ջան, գլուխդ չի՞ ցաւում արդեօք— հարցրեց մայրը, որդու գլուխը շփելով։

Արևամանուկը այլ ևս չըկարողացաւ պատասխանել։ Նրա ուշքը գնաց և նուաղեց։

Իսկայն վրայ թափուեցան ամեն կողմից, երեսին ջուր սրսկեցին, շորերը հանեցին և — ի՞նչ տեսան — մարմնու վրայ էլ մի ողջ տեղ չըկար, բոլորն էլ կապտել էր։ Շատ տեղ գազանի ճանկերը ցցուել էին, և այնքան ուռած տեղեր կային, որ հէնց իմանաս շանաճանճեր են

թափուել վրան ու խայթոտել։ Միայն երեսն էր ազատ մնացել հարուածներից։

Արևամանուկը այդ բոլոր հարուածներին դիմացել էր առանց ցաւ զգալու։ Այդպէս է լինում տաք կռուի ժամանակը։

Բայց երբ որ քրտինքը ցամաքեց, — բոլոր մարմինն սկսեց սարսռել։ Ցաւը մի տեղ չէր, երկու տեղ չէր, որ ասէր՝ այս ինչ կամ այն ինչ տեղս է ցաւում։ Այդ որ տեսան, էլ ժամանակ չկորցրին. խկոյն մի քանի այծ մորթեցին և նրանց տաք տաք մորթիովը փաթաթեցին Արևամանուկին։ Հաւաքուեցան գեղ ու դուլ իմացող պառաւներն էլ, և զանազան հոտաւէտ ծաղիկներ կփ տուին ու ջուրը խմցրին Արևամանուկին։ Նրանք շատ լաւ էին իմանում կաթածի, ջարդածի, կոտրածի դեղերը, և հէնց միայն այդ էր հարկաւոր որ գիտենային, որովհետև ուրիշ ցաւ չէր պատահում։

Արևամանուկը ուղորդ ուղորդ հիւանդացաւ. պարկեշտ տեղումը ու էլ շուտ չի վեր կացաւ։ Նա կարծես շատ էր ուրախացել, որ հիւանդացել է, որովհետև նրան այնպէս ծառայում, պատիւ էին տալիս, որ առողջ ժամանակը տեսած չէր։ Նրան այնպէս էին պահում, պահպանում, որ ցաւի ատոկութիւնը բնաւ չէր զգում։ Արքունի ժամանակը պառաւներն էին իրանց հին զրոյցներովն ու հէքիաթներովը նրա ուշք ու միտքը գրաւում, իսկ քնած ժամանակն էլ՝ քաղցր երազները։ Մայրը հօ՝ մի բոպէ մօտիցը չէր հեռանում և ինչ ազիզ կերակուրներ ասես, որ չէր եփում, ուտեցնում։

«Այս ի՞նչ լաւ բան է եղել հիւանդ լինելը», ասում էր Արևամանուկն ինքն իրան։ «Առողջ ժամանակս ինչ որ ուզում էի՝ չէին տալիս. հիմա այնպէս բաներ են

ուտեցնում, որ կեանքիս մէջ առաջին անգամն եմ համը տեսնում։ Եւ ինչ լաւ հէքիաթներ են ասում։ Առաջ այնքան ազատում էի, ոչինչ չէին ասում։

Ճշմարիտ որ շատ լաւ զրոյցներ էին պատմում։ Այդ զրոյցները այնպիսի բովանդակութիւն էին ունենում, որ նրանով համարեա թէ լրանում էր Արևամանուկի կրթութեան պակասը։ Այդ զրոյցներից նա աւելի փորձառութիւն էր ստանում և ինքն իրան ասում էր. «Ինչքան յիմարութիւն է՝ չիմանալ, թէ մեզանից առաջ ապրող մարդիկը ի՞նչպէս են եղել ապրելիս, ինչից են մնասուել և ինչից օգուտ քաղել։ Եթէ այդ չիմանանք, էլ ի՞նչպէս կարող ենք խելօք կերպով ապրել աշխարհքիս երեսին։ Օրինակ, ի՞նչ յիմարութիւն էր իմ արածը — առանց զէնքի՝ ուղղակի ընկնել վագրի գիրկը — այդպէս միայն խելագարը կանէ։ Ա՜խ, ինչքան յիմար եմ եղել ես, այդ նոր եմ հասկանում»։

Այսպէս ահա ամեն մի զրոյցից լեռոյ՝ մեր Արևամանուկը մի նոր մտածմունքի մէջ էր ընկնում և նոր խելքի գալիս։ Պէտք է ասել, որ այդ այն զրոյցների լաւութիւնիցն էր, որ նրան պատմում էին։

2.

Մէկ անգամ, երբ որ Արևամանուկն արդէն լաւանալու վրայ էր, նրան դուրս բերին տանիցը և տարան մի մեծ ծառի շուտքում պարկեցրին, որ աւելի մաքուր ու գով օդ շնչէ։ Մի հատարակ կապերտ փռեցին, վրան մի բարձ դրին. Արևամանուկը կռնեց նրա վրայ, իսկ պառաւները նստատեցին նրա բոլորի շուրջ՝ կանաչ խոտի վրայ։ Մայրը որդու գլխավերևը նստած՝ շփում էր նրա գլուխը, շոկում, մաքրում էր նրա ոսկեթել մազերը,

իսկ պառաւները պատասխան էին տալիս Արևամանուկի ամեն մի առաջարկած հարցմունքին՝ երկար զրոյցով։

—Ա՜խ, ինչպէս ուրախ եմ, որ էլի տեսնում եմ, Մասիսի երեսը,— ասեց Արևամանուկը և հարցրեց պառաւներից մէկին.— Նանէ, ինչիցն է, որ Մասիսի գլխի ձիւնը չի հալվում։

—Նրա համար չի հալվում, հոգիս, որ մեծ նաւը չըբացուի և արևից ու անձրևից չփչանայ։

—Այդ ի՞նչ նաւ է, Նանէ, ես չեմ հասկանում։

—Դրա պատմութիւնը երկար է, հոգիս. կարճն այս է, որ մի ժամանակ արարած աշխարհքս ջրով ծածկուել է, միայն մէկ մարդ է ազատուել իրա արդկերանց, իրա կնոջ ու հարսների հետ, և ազատուել է այսպէս. Մի մեծ, խիստ մեծ նաւ է շինել. երբ որ ջրերը բարձրացել են, նաւն էլ հետն է բարձրացել, մինչև հասել է Մասիսի գլուխը, նրա վրայ նստել։ Այնտեղ այնքան մնացել են, մինչև ջրերը լեռ են քաշուել։ Յետոյ դուրս են եկել նաւից, վայր են իջել սարիցը և տեսել որ ի՞նչ, էլ երկրիս երեսին ոչ մարդ է մնացել, ոչ անասուն. ամենքին էլ ջուրը խեղդել, քշել, տարել է։ Կնքան լաւ է եղել, որ նա իր հետ վերցրած է եղել ամեն տեսակ օգտակար անասուններ։ Դրանք սկսում են նոր մէկանց շատանալ և էլի լցվում է երկիրը թէ մարդկերանցով և թէ անասուններով։ Ահա այդ ժամանակ, երբ որ սարիցն իջել են, իսկոյն ձիւն է եկել և ծածկել մեծ նաւը։

—Այն մարդի անունն ի՞նչ է եղել, Նանէ։

—Նրա անունը... սպասիր... Նաւ, Նով, Նո... ինչ որ է, այսպէս մի բան է. լաւ չէ միտս։

—Դէ որ այդպէս է, արի ասենք՝ շէնքնու շինողը իրար անուանակից են։ Ինչ էլ լինի անունը, այդ ոչինչ.

երևում է միայն, որ այդ մարդը ամենից խելօքն է եղել, որ կարողացել է իր գլուխն ազատել։

—Մենակ խելօքութիւնը բաւական չէ, հոգիս. պէտք է արդար էլ լինի եղած, որ Աստուած միայն նրան է ազատել։ Եւ ճշմարիտն էլ այս է։ Ասում են, որ այդ ժամանակ մարդիկը շատ անիրաւացել են, շատ մեղաւոր են եղել, միայն Նովն է եղել արդարը։ Ասում են, որ նաւը նա ինքը չի շինել, այլ ուրիշին է շինել տուել։ Նաւ շինողը շատ խելօք, շատ իմաստուն ու ճարտար մարդ է եղել, բայց ինչ կանես որ արդար չի եղել։ Նա իր համար էլ մի առանձին սենեակ է շինել նաւի մէջ, մտածելով, թէ ես չեմ հաւատում, որ ջրհեղեղ կըլինի, բայց, ով գիտէ, բանէ, եթէ լինի, ես կըմտնեմ իմ սենեակս։ Եւ ի՞նչ ես կարծում։ Գալիս է ջրհեղեղը, այդ մարդն էլ մտնում է իր սենեակը, բայց որովհետև արդար չի լինում, առաստաղը խորտակվում է անձրևներից և այնքան ջուր է թափվում մէջը, որ նա իր շինած ամենից ամուր սենեակումը խեղդվում է։ Նով նահապետը շատերին է ուզում ազատել, բայց ամենի սիրտն էլ քարանում է, ոչ ոք չի լսում նրան։ Մի պառաւ կնկայ ասում է՝ «Նանէ, եկ մեր նաւի մէջը մտիր, հիմա տրտեղ որ է ջրհեղեղ կըլինի», իսկ նա պատասխանում է՝ «գնա սպասեցէք, ես հաց եմ թխում»։ Բայց ի՞նչ, գնա հացը թոնրումը, մէկ էլ տեսնում է՝ հրէս թոնրի միջից ջուր է որ քըլթքլթալի դուրս է գալիս։ Պառաւն այնպէս շշկլվում է, որ գլխիվայր ընկնում է թոնրի մէջն ու խեղդվում։

—Ես հիմա լիշում եմ, Նանէ, որ դու մէկ անգամ ասացիր, որ այդ արդար մարդը մեր նախահայրն է, մեր մեծ պապը։

—Ի հարկէ, նա մեր նախահայրն է, մեր նահապետն է։ Նա մեր Մասիս սարի վրայ է ապաստանել ջրհեղեղից, մեր աշխարհումն է ապրել, մեր աշխարհումը թողուել։ Բայց որովհետև աշխարհիս բոլոր մարդիկը, բոլոր ազգերն ու ցեղերը նոյնպէս նրանից են յառաջ եկել, այդ պատճառով նա ամենքի նախահայրն է, մենակ մերը չէ։ Միայն, ի հարկէ, մեծ բաժինը մերն է. որովհետև մեծ նաւը մեր սարի վրան է, մեծ պապը մեր երկրումն է թաղուած. ամենից մօտիկը մենք ենք։ Մենք նրա անբաժան զաւակներն ենք, նրա տան բնակիչները. իսկ միւսները՝ բաժանուած, հեռացած։

—Ուրեմն մենք մի ուրիշ նախահայր էլ ունինք, որ միայն մերն է և ուրիշները նրանից բաժին չունին։

—Ինչպէս չունինք։ Ամեն ցեղ իր սեփական նախահայրն ունի, մենք էլ ունինք և մերն ամենից քաջն է, ամենից ճարտարը։

—Բա ինչու ինձ չես պատմել, նանէ։

—Ա՜յ, հիմա կըպատմեմ, հոգիս, եթէ ուզում ես. և պէտք է ուզենաս, որովհետև դու նրանից շատ հեռու չես. շատ, շատ որ հեռու լինիս, պէտք է նրա թոռան թոռի թոռը լինիս։ Ուրեմն նրանից մինչև քեզ միայն վեց պորտ է անց կացել։

—Այդ շատ լաւ է։ Դէ մէկ պատմիր տեսնեմ նա ի՞նչպէս մարդ է եղել. տեսնեմ ես էլ կարող եմ նրա նման դառնալ թէ ոչ։

—Ի հարկէ, նրա նման պիտի լինիս, հոգիս. դեռ պէտք է աշխատես՝ նրանից էլ անցնել. և կանցնես, եթէ միւս անդամ խելագարութիւն չանես, աչքերդ չը խփես ու ընկնիս վագրի գիրկը։

—Այդ թող, նանէ։ Մարդ որ գժութիւն չանէ՝ քա ինչպէս կըխելօքանալ։

—Դէ լսիր, հոգիս։

Այսպէս պառաւն սկսում է պատմել մեր Հայկ նահապետի պատմութիւնը մօտաւորապէս հետևեալ կերպով։ Ասում եմ մօտաւորապէս, որովհետև պառաւն այնքան գեղեցիկ էր պատմում, որ Արևամանուկին թվում էր, թէ նրա ասածները բոլորն էլ իր աչքովը տեսնում է. իսկ ես այդ շնորհքը չունիմ։ Ցաւում եմ միայն, սիրելի երեխայք, որ ինչքան էլ ձանձրալի լինի իմ պատմելուս ձևը, դուք սիրով կըկարդաք և շատ անգամ կըկարդաք, որովհետև մեր սիրելի նախահօր, մեր պապերի պատուած ու պաշտած Հայկ նահապետի պատմութիւնն է, որ բոլորովին ճշմարիտ է և ոչ թէ մի հնարովի հէքիաթ է կամ զրոյց։

3.

«Երբ որ Նոյ նահապետը իջնում է Մասիս սարից և բնակում նրա ստորոտումը, այդտեղ նրա որդիքն ու թոռները սկսում են անչափ շատանալ։

Այսպէս անցնում է մի հարիւր, երեք հարիւր, չորս հարիւր տարի, մի խօսքով՝ էլ յայտնի չէ թէ ինչքան, մեր երկիրը էլի առաջուայ նման մարդով լցվում է։

Ինչպէս որ լճի մէջ՝ երբ որ մի քար ես գցում, ջրիցը բոլորակ բոլորակ ալիքներ են բարձրանում ու մղվում դէպի ափերը, այսպէս էլ մարդիկը երբ որ շատանալ են սկսում, Մասիսի բոլորի-շուրջ ալիքի բոլորակների նման տարածվում են։ Բայց քարը որ լճի մէջն ես գցում, նրա բարձրացրած ալիքները վերջի-վերջոյ աւելի դէպի այն կողմն են թեքվում, որ կողմ

որ ցածր է։ Հենց այսպէս էլ մեր շատացած մարդկանցն է պատահում։

Երբ Մասիսից բաւական հեռանում են, նրանց համար ամեն տեղ ապրելը միակերպ հեշտ չի լինում։ Մարդիկն աշխատում են բարձր ու ցուրտ տեղերից փախչել ու դէպի ցածր ու տաք տեղերը գնալ, որ ապրելն աւելի հեշտ լինի։

Այնպէս է պատահում, որ դէպի հարաւ գնացողները նկատում են, որ քանի հեռանում են, այնքան իրանց համար լաւ է լինում. երկիրն աւելի պտուղ է տալիս և ամեն ինչ առատ է։ Այդ լսում են և միւս կողմեր գնացողները և սկսում են իրանց ցուրտ լեռներից իջնել ու հեղեղի նման թափուել դէպի հարաւ։ Բռնում են մեր երկու մեծ գետերի — Եփրատի ու Տիգրիսի — ընթացքը և նրանց հետ գնում։

Գնում են գնում — շատն ու քիչն Աստուած գիտէ — մինչև նրանց առջև երկարումէկ ձգվում է մի մեծ, շատ մեծ դաշտ։ Էլ ոչ մի սար, ոչ մի բլուր, ոչ մի քար — այլ հարթ, հաւասար դաշտ, բայց ի՞նչ դաշտ. Աստուծոյ ամենայն բարութիւնովը լիքը։ Այն ժամանակուայ մարդիկն էլ հենց այդպիսի մի տեղ էին փնտրում, որ ոչ վարեն, ոչ ցանեն, ոչ մրսեն, բայց ամեն ինչ ուտեն։

Այս նոր երկրի համբաւը տարածվում է ամեն տեղ։ Ամեն տեղից մարդիկ են գնում, որ տեսնեն՝ ճշմարիտ այնպէս է, ինչպէս որ պատմում են. և երբ որ սառուցում էին, գալիս էին իրանց տունը տեղը քոչացնում, չուում նոր երկիրը։

Այդ ժամանակները մեր պապ Հայկը այստեղ է լինում կենալիս։ Նա տեղիցը չի շարժում, բայց գնացող եկողները այնպէս բաներ են պատմում, որ նա էլ է

ցանկանում գնալ։ Ասում են՝ «այնպիսի երկիր է, որ լեզուով պատմել չի լինիլ։ Ամենայն տարի Եփրատն ու Տիգրիսը այնպէս յորդանում, վարարում են, որ ափերիցը դուրս են գալիս և ջրում ամբողջ դաշտը։ Երբ որ լեռ են քաշվում, սերմը գցում են նրանց թողած ցեխի վրայ. էլ ոչ հերկել, ոչ ցաքանել, բայց արտ է դառնում, որ զարմանալի։ Ցողուններն այնքան բարձրանում են, որ ուղտը մէջին չի երևում. տերևները թաթի պէս լայն լայն, հասկերը կռան չափ հաստ, երկու թզաչափ երկայն, մէջներին մինչև հարիւր, երկու հարիւր, երեք հարիւր հատիկ։ Մէկ չափ ցանողը երեք հարիւր չափ է վերցնում։ Ցանելու տեղն էլ այնքան շատ է, որ ինչքան կուզես՝ ցանիր։ Ուրիշ էլ ինչ պտղեղէնով, ինչ արմտիքով ասես՝ լիքն է։ Հալոզի ճուլթերը այնքան մեծ մեծ են, որ հեռուից նայողը կարծում է թէ սև սև գոմէշներ են նստոտած վազան տակերին. ծիրանը մեր դեղձիցը խոշոր, նուռը մեր ձմերուկի չափ, բայց էլի այնպէս պտուղներ կան, որոնցից մեր երկրումը չկան»։

Ահա այս ամենը որ լսում է մեր պապ Հայկը՝ ինքն էլ է ուզում գնալ։ Հաւաքում է իր որդկերանցը և եղբայրներին, յայտնում է նրանց իր միտքը։ Եղբարքը չեն յօժարում, ասում են՝ ինչու թողնենք մեր երկիրը, մեր հողը, մեր ջուրը, մեր ծաղկապատ լեռները, մեր անմահական աղբիւրները, վերջապէս մեր հօրն ու մօր, մեր նախնեաց սուրբ գերեզմանները։

Հայկն ասում է՝ «Այդ շատ լաւ էք ասում։ Դուք մնացէք այստեղ. այստեղ ապրեցէք, մեր երկիրը պահպանեցէք, իսկ ինձ թոյլ տուէք գնամ, տեսնեմ այդ մարդիկն ո՞ւր են այդպէս հեղեղի պէս թափուած գնում կամ ի՞նչ են շինում այնտեղ։ Ես մեր երկրիցը ձեռք չեմ

վերցնել, նրա սահմանները շատ չեմ հեռանալ։ Այնտեղ, ինչպէս պատմում են, մի ուրիշ լաւ բան չկայ, բացի հացի առատութիւնից»։

Այստեղ պառաւ տատն սկսում է հացի նշանակութիւնը հասկացնել Արևամանուկին։

«Հացը մի այնպիսի բան է, Արմիկ ջան — ասում է պառաւը — որ ինչ տարի նա չի լինում, բոլոր ուտելիքներն էլ նրա հետ պակասում են, և երբ որ հացն առատ է լինում, միւս բոլոր բաներն էլ առատ են լինում։ Օրինակի համար՝ երբ որ հաց չի լինում, եղ էլ չի լինում։ Հիմա կասես՝ ինչու։ Նրա համար որ՝ արտ չեղած տարին խոտն էլ է պակաս լինում. իսկ կովը որ խոտ չուտի, լաւ չարածի, ուրեղից կաթ կըտայ, որ նրանից էլ մածուն, մածնից էլ եղ շինեն։ Խոտ չըկայ, մեղը էլ չըկայ. ինչու. նրա համար որ՝ խոտ որ չըլինի, ծաղիկ էլ չի լինիլ. իսկ ծաղիկ որ չըլինի, էլ մեղուն ինչից կըշինէ մեղրը։ Ծաղիկ չըկայ, պտուղ էլ չի լինիլ։ Կուտ չըկայ, ձու էլ չի լինիլ։

Երևում է, որ մեր պապը մի քանի անգամ սով տեսած է լինում։ Սկսում է պատմել, թէ սովն ինչից է յառաջ գալիս։ Թէ՝ երբ որ մի տարի, երկու տարի երկինքը կապվում է, գետինքն էլ չորանում է, էլ ոչինչ չի տալիս. էլ խոտ չի բանում, ծառը չի ծաղկում, աղբիւրը չի քլքլում, մարդ, անասուն սովամահ են լինում։ Ասում է՝ այդ նոր երկրումը գժուար թէ սով պատահի, եթէ ճշմարիտ է այն ամենը, ինչ որ ասում են։ Լաւ կըլինի ուրեմն, որ եթէ այդ երկրի միջումը չըլինինք, գոնէ նրա սահմանի վրայ լինինք, նրանից մօտիկ լինինք։

Սրա վրայ որդիքն ասում են. «Հայր, դու գիտես։

Երբ որ դու կամենում ես, մենք ինչ կարող ենք ասել»։ Եղբայրքն էլ ասում են՝ մենք էլ կըգանք քեզ անց կըկացնենք։ Միւս օրը պատրաստութիւն են տեսնում. վրանները կարկատում, շինում են, աման, չաման, շորեղէն, կապում են, մափռաշներում դարսում, կապոտում, էշերը, ջորիքը բարձում, ձիանոց վրայ էլ իրանք նստում, ոչխար, տաւար առաջներն անում, ճանապարհ ընկնում։

Երբ որ մեր պապը ճանապարհ է ընկնում, նրա հետ շատերն են քոչում։ Ասում են՝ Հայկը խելօք մարդ է. եթէ նոր երկիրը լաւ չըլինի, նա չի գնալ։ Մի հարիւր հոգի հէնց Հայկի տանը կըլինէր. մի քանի ուրիշ տուն էլ որ նրա հետ միանում են, ով գիտէ՝ քանի հարիւր հոգի են գառնում։

Սրանք խումբ խումբ, տաւարը ջոկ, ոչխարը ջոկ, հորթերը ջոկ, — որ կովերին չըծծեն — ձիաւորները ջոկ, բեռնաւորները ջոկ, կառունկների պէս կարգով ճանապարհ են ընկնում ու կամաց կամաց, այստեղ այնտեղ իջնելով, գետերի, աղբիւրների ափերին, խամ արօտներում օրերով հանգստանալով՝ հասնում են մինչև նոր երկրի սահմանը։ Այդ նոր երկիրն ասվում է «Միջագետք», այսինքն գետերի մէջ եղած երկիր։ Այսպէս նրա համար է ասվում, որ այն մեծ դաշտը, ուր գնում էին, մեր երկու մեծ գետերի — Տիգրիսի ու Եփրատի — արանքումն էր։

Ահա այդ դաշտի հիւսիսային սահմանի վրայ եղած լեռների ստորոտումն են իջնում։ Երկար ժամանակ այդտեղ մնալուց յետոյ՝ երբ որ լաւ ծանօթանում են իրանց գնալու երկրին, վայր են իջնում լեռներից և մտնում են դաշտի մէջ։

4.

Ճշմարիտ որ այդ գաշտը ամենայն բարութիւնով լիքն էր։ Մարդիկն իրանց մի օրուայ աշխատանքը մէկ ամիս հանդիստ նստած վայելում էին։ Բայց այդ հանգստութեան ժամերը զուր չէին անց կացնում, այլ լաւ լաւ բաների վրայ էին խօսում, մտածում, ուրախութիւն անում, զուարճանում։ Զանազան տեղերից հաւաքուած մարդիկը այնքան սիրում էին միմեանց, ինչպէս շատ տարի իրար չտեսած, իրար կարօտ քաշած հայր ու որդի, եղբայրներ, քոյրեր։ Այնքան միաբան, այնքան սիրով էին, որ՝ ինչպէս կասեն՝ գառն ու գայլը միասին էին արածում։ Մեր պապ Հայկին որ տեսնում են, այնպէս են սիրահարվում վրան, որ սկսում են պաշտել։ «Ի՞նչպէս կարելի է, ասում են, որ այս հրաշալի պատկերի ու հասակի տէրը, այս զարմանալի ճարտարութիւնն ու քաջութիւնն ունեցողը մեզ նման մի հասարակ մահկանացու լինի»։

Եւ ճշմարիտ որ՝ մի հասարակ մահկանացու չէր մեր պապը։ Արմիկ ջան, Աստուած պահի, դու որ մեծանաս, իսկ և իսկ նրա նման կըլինիս։ Ամեն քեզ տեսնելիս՝ իսկոյն միտս է ընկնում այն բոլորը, ինչ որ լսել եմ մեր պապի գեղեցկութեան մասին։ Հաստաբազուկ, լայնաթիկունք, բարձրահասակ, աչքերը քո աչքերի նման, մազերը՝ քո մազերի։ Նրա ձգած նետն ու պարսաքարը նշանից վրիպում չի եղել։ Այնքան ուժով է եղել, որ նրա գործ դրած զէնքն ու զրահը ոչ ոք չի կարողանում եղել ոչ հագնել և ոչ գործ ածել։ Նրա խելքն ու ճարտարութիւնն էլ յետոյ կըտեսնես։

Այսպէս, ինչպէս ասացի, այդ ընդարձակ դաշտի

մէջ տարածուած բոլոր մարդիկը իրար հետ շատ և շատ սիրով էին ապրում։

Միշտ բոլոր ցեղերի նահապետները հաւաքվում են, միասին խորհուրդ անում, և ինչ որ պէտք է լինում իրանց երկրի համար, շինում են։ Օրինակ՝ տեսնում են, որ դաշտի ինքնիրան ջրվող մասը օրէցօր քչութիւն է անում,— որովհետև մարդիկն էլ այդ դաշտի միւս բերքերի նման սկսում են խիստ առատանալ,— մեծ մեծ ջրանցքներ ու լճեր են շինում, որ թէ աւելի հեռու տեղեր ջրեն և թէ երաշտ տարիներին ջրի պակասութիւն չըկրեն, լճերի ջրովը ջրեն։ Այսպէս շատ անապատ ու անջրդի տեղեր են ջրովի շինում և չոր տեղերը՝ գեղեցիկ ծառաստաններ և այգիներ։

Տեսնում են որ ճահճուտ տեղեր կան, ցամաքեցնում են, վնասակար գազանները կոտորում են, գետերի ու ջրանցքների վրայ անթիւ կամուրջներ են շինում։ Օր չի լինում, որ մի նոր գիւտ չանեն։ Մէկը մի նոր ջրաղաց էր հնարում, միւսը մի նոր տեսակ սայլ, մէկը գեղեցիկ՝ կաւէ ամաններ էր շինում, մի ուրիշը ալիւս, խոզովակներ, ջրմուղներ։ Կանայքն իրանց տանու ձեռագործներն էին սկսում աւելի նրբացնել։ Առաջ որ միայն բրդից ու մազից էին գործուածքներ անում, այսուհետև դրանց վրայ աւելացնում են բանբակն ու մետաքսը, որոնցից շատ քարակ գործուածներ էին անում և բարակ էլ հագնում։ Ամեն մի արհեստաւոր, թէ դարբինը և թէ ոսկերիչը, թէ հիւսն և թէ որմնադիրը, թէ գինագործը և թէ երկրագործը օրէցօր կատարելագործում էին իրանց արհեստը, օրէցօր մի նոր բան էին հնարում, մի նոր բան աւելացնում։ Այս պատճառով էլ քիչ ժամանակի մէջ անթիւ գիւղեր շինեցին

գեղեցիկ աղիւսեայ պատերով և ով գիտէ քանի քանի էլ քաղաք — ամուր պարիսպներով, բարձր աշտարակներով, լայն կամուրջներով։

3.

Երբ որ մարդիկ այսպէս սիրով, այսպէս խաղաղ ու բախտաւոր ապրում էին, մէկ էլ — ինչ տեղից — մի չար քամի է փչում, բոլորի սիրտը, բոլորի միտքը պղտորում։

Առաջուան բարի ծերերը մեռնում են, նրանց տեղն անցնում են խռովարար, գոռոզ և չար մարդիկ։

Այդ չարերի մէջ ամենից չարը լինում է Բէլ անունով մի ահագին հսկայ, մի գազան մարդ։ Միւսները թէպէտ չար են լինում, բայց և շատ վախկոտ ու թուլասիրտ են լինում, բայց Բէլը ոչ թէ մարդուց, այլ Աստուածներից էլ չի վախենում և կարծում է թէ ինքն էլ մի Աստուած է։ Իրանից վախեցող մարդիկը նրան այդպէս էին ասել, նա էլ հաւատացել էր, և կարծում էր, թէ ինքը՝ եթէ ճշմարիտ Աստուած չէ, անպատճառ Աստուածոյ ներկայացուցիչն է։

Մէկ անգամ, երբ որ բոլոր ցեղերի նահապետները հաւաքուած են լինում, որ իրանց հոգսերի մասին խորհուրդ անեն, այդ տեղ են լինում թէ մեր պապ Հայկը և թէ իմ ասած աժդահա Բէլը։ Խօսք խօսքի են գալիս, մէջները ահագին վէճ է բարձրանում, մէկն ասում է՝ այսպէս լաւ կըլինի, միւսը թէ՝ չէ, իմ ասածն է լաւը։ Հայկը տեսնում է, որ առաջուան սէրն ու համաձայնութիւնը վերացել է, պատին շատ ցաւ է լինում. վեր է կենում տեղիցը ու գառնալով դէպի խորհրդականները՝ ասում է.

—Հայրեր և եղբայրներ, ինձանից ձեզ խրատ չի հասնիլ, որովհետև ձեզանից շատերը այնպիսի պատկառելի տարիքի տէր են, որ ես նրանց որդու տեղ կըհամարուիմ։ Ես ուզում եմ ձեզ ասել միայն, որ թողնէք ձեր վէճերը։ Մենք հիմա մի ուրիշ գործ ունինք կատարելու։ Մեր մաքուր ու անարատ աստուերի մէջ վնասակար բոյսեր են բսել, պէտք է միացած ուժով այդ վնասակար բոյսերը քաղահանենք, հաւաքենք մի տեղ և կրակ տանք։

Այս խօսքի վրայ այնպէս են լռում ամենքը, որ կարծես համբանում են, և սկսում են իրարու երեսի մտիկ տալ և աւելի նայում են Բէլի երեսին, որ սկսել էր սփրթնել։ Այս խօսքով մեր պապը «աստուերի» մասին չէր խօսում, այլ մարդկանց «սրտերի»։ Ուզում էր ասել՝ մեր մէջ չար մարդիկ են երևացել, որոնք պղտորում են մեր անարատ սրտերը։ Երկրի խաղաղութիւնը պահանջում է, որ այդ մարդկանցը պատժենք։ Բէլը որ իրան վրայ է առնում այդ խօսքը, բարկութիւնը զսպելով՝ սառը կերպով պատասխանում է։

—Ես կարծում եմ, խոտերն այնքան վնաս չեն տալ մեր աստուերին, որովհետև իրանց հողի վրայ են բուսած, երկուսին էլ բաւականութիւն կըլինի. բայց եկովի մանդագաղթև թռչնիկներ կան, որ չեն իմանում՝ որտեղից են թռել եկել, գրանք փչացնումեն մեր ցորենի հատկերը։

Բէլն էլ է մեր Հայկի պէս մութ խօսում։ Նա մեր պապին և նրա հետ գնացածներին մանդագաղթև է անուանում, մանդագան աղեղի նմանացնելով, որովհետև մերոնք լայանի են լինում այնտեղ ինչպէս քաջ նետաձիգ աղեղնաւորներ։ Նրանց համարում է եկովի,

որովհետև ինքն այնտեղ է լինում ծնուած, իսկ մերոնք ամենից լետոյ են լինում գնացած։ Այս էլ պէտք է ասենք, որ այդ գոռոզ Բէլը սուր ու ազեղ բանեցնելը Հայկիցն էր սովորել, նա մի ժամանակ շատ սիրում էր Հայկին և միշտ նրա հետ էր օրսի գնում, որ աւելի լաւ վարժուի։

—Մանգաղաձև թռչունները եթէ չլինին — պատասխանում է Հայկը — մորեխները խպառ կըփչացնեն մեր արտերը։ Պարզ ասեմ, հայրեր և եղբայրներ, մի մարդ կայ մեր մէջ, որ մորեխներից օրինակ առնելով՝ ուզում է մորեխաձև վարչութիւն հաստատել և ոչընչացնել ամեն թարմ բոյս։ Ես կարծում եմ, որ դրա առաջքը միայն մանգաղաձև ազեղները կարող են առնել։

Բէլը մտքումը գրել էր, որ ժողովրդական խորհուրդը խափանէ, մենակ ինքը լինի ամենից մեծը, միայն իր խօսքը լսեն, իր հրամանը կատարեն, և իրան պաշտեն, մեծարեն, ինչպէս Աստուծոյ. ընդունեն, որ նա Աստուծոյ փոխանորդն է երկրիս վրայ ու երկրի տէրը նա է։ Բէլի այս միտքը այս խորհուրդը շատ լաւ իմանում էր մեր ազատ Հայկը։ Ուզում էր զգուշացնել խորհրդականներին։ Բայց խորհրդականները վախկոտ մարդիկ էին. նրանք որ նայում էին Բէլի վրայ, սարսափում էին։ Բէլն այնքան բարձր էր նրանցից, որ շուտք էր անում նրանց վրայ, նրանք էլ ասում էին մենք գոնվում ենք, քո շուտքի տակ, քո շուտքը մեզանից անպակաս արա։ Երբ որ ուզում էին նրա երեսին նայել, գլխներն այնպէս էին բարձրացնում ինչպէս կէսօրին արեգակին մտիկ տալիս։ Դու ես, ասում էին, մեր արևը, մեր կեանքը, քո լոյսը, քո տաքութիւնը մեզնից անպակաս անես...

ՅԱՆԿ

Ծանօթութիւն	3
Երկինքն ու գետինքը	5
Գոյներ	6
Խնդիրներ. 6, 10, 34, 43, 47, 55, 61, 70, 74,	86
Հանելուկներ. 7, 21,	48
Առածներ. 8, 11, 21, 26, 27, 43, 56,	62
Կանաչ-կարմիր	8
Ձև և կազմուածք	9
Աշխարհի օրհնանք	11
Ինչն ի՞նչ է	14
Վիճակի երգեր	16
Ձայներ	18
Երկու գորտ	22
Էշ և Սոխակ	22
Թութակն ու Սոխակը	24
Հովիւ Ս. Շահագիզեանի	25
Դեղձանիկն ու Սոխակը	26
Անցորդներն ու Շունը. փ. Ա. (փոխագ. Բրովեանից)	27
Ուշկալ ծառայ	28
Էշ և Բիւլբիւլ փ. Ա.	29
Շարժմունք	31
Մարմնաւորական խաղ	35
Երկու խոփ	37
Առաւօտեան երգ շինականաց. Գ—Ք. (Գամառ-Քաթիպա)	37
Երեխան դաշտումը	38
Տխուր երեխայ. Գ Ք.	40

Բանըդ արաւ յեռոյ խաղա 40
Ժրաջան տղայ. Գ—Բ. 42
Հաւ և քանակութիւն 42
Բարդին ու վագը. փ. Ա. 43
Հաշտիմունք 44
Առիւծն ու Մոծակը. փ. Ա. 48
Երկու այծ 50
Կայրերի կռիւը փ. Ա. 51
Հարստութիւն 53
Արութիւնի աղօթքը 54
Ճաշակ համ 54
Հովիւը քաղաքումը 56
Խոզն ու Եզը. փ. Ա. 57
Հոտ 60
Սոխն ու Սխտորը փ. Ա. 62
Լաւ ընկեր 63
Երկրագործը դաշտումը 63
Մանուշակ 64

ԵՐԿՐՈՐԴ ՎԱՐԺՈՒԹԻՒՆ

Գարուն 67
Գարունքի յաղթութիւնը 70
Հրաւէր գարնան Գ—Բ. 71
Ինդիր գարնան Գ—Բ 71
Մանիշակ Գ—Բ. 72
Ցուռը կաթում է 72
Խոզարածի բինա 75
Կիրակոսն ու վարժապետը 75
Անվնաս հագուստ 77
Մեծ պասը 78
Օրօրոցի երգ Գ—Բ. 80
Ծաղկազարդ 81

Ծաղկազարդի երգ 86
Զատիկ 87
Զատկի երգ. Գ—Բ. 88
Ամառն 89
Աղասին դաշտումը. Խ. Աբովեանի. 97
Պարտիզպան 101
Ամառն Երևանում. Խ. Աբովեանի. 113
Աշունք 101
Սերմնացան 117
Այգեքաղ 118
Արտուտ. Գ—Բ 124
Աշուն. Գ—Բ 124
Ձմեռն 125
Ձիւն. Գ—Բ 127
Ձմեռ. Գ—Բ. 127
Ձմեռն Երևանայ գիւղերում. Խ. Աբովեանի. 128
Հորս եղբարք Գ—Բ. 133
Ամիսներ 134

ԵՐԻՐՈՐԴ ՎԱՐԺՈՒԹԻՒՆ

Օձամանուկ և Արևահատ . . . . . 137—152
Երևամանուկ. հին գրոյց ազգային դիւցազնական կեանքից . . . . . 153—192

Սոյն վէպիս շարունակութիւնը ընդհատուեցաւ. Ցոյս ունիմ երրորդ հատորի մէջ ձգելու և կամ ամբողջապէս առանձին հրատարակելու...